Azg Ազգ

26 ՅՈՒՆԻՍ 2004 ՇԱԲԱԹ 118 (3040)

2005 թ. Հայաստանն ու Ադրբեջանը ԱՄՆ-ից համաչափ ռազմական օժանդակություն կստանան

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 25 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեկ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին օժանդակությունների ենթահանձնաժողովը եկող տարվա բյուջեի մասին որոշում կայացնելիս համաձայնության է եկել, որ 2005 թվականին Հայաստանին եւ Ադրբեջանին տրվելիք ռազմական օժանդակությունը պիտի հիմնված լինի հավասարության սկզբունքի վրա, հակառակ Բուշի վարչակազմի ծրագրերին, որով նախատեսվում էր Ադրբեջանին հասկացնել Հայաստանից 6 միլիոն դոլարով ավելի օժանդակություն: Ինչպես Ամերիկայի հայկական համագումարի Լոս Անջելեսի գրասենյակի պատասխանատուն ասել է «Ազատության» թղթակցին, անցյալ տարի այս հարցի վերաբերյալ շատողականություն է դրսեւորվել ԱՄՆ նախագահի գրասենյակի կողմից, եւ հայկական լոբբիինգը չի հասցրել կատարել համապատասխան դեր, որի հետեւանքով Հայաստանը Ադրբեջանի համեմատ 6 միլիոն դոլարով պակաս օժանդակություն է ստացել: Այսպիսով Հայաստանը եւ Ադրբեջանը եկող տարի սպասելու են ռազմական բնագավառում հավասար՝ 5-ական միլիոն դոլարի օժանդակություն, եւ 750-ական հազար դոլարի օժանդակություն՝ ռազմական կրթության համար:

Սոցիալական քարտերի ներդրման ժամկետը երկարաձգվեց

Իսկ կասկածներն ու մտավախությունները մնացին

ԱԲԱ ՄՈՒՐՏԻՐՈՍՅԱՆ

Սոցիալական քարտերի ներդրման վերջնական ժամկետը փաստորեն հետաձգվեց մինչեւ 2005 թ. հունվարի 1-ը: Մինչեւ այս տարվա հոկտեմբերի 1-ը սոցիալական քարտ չստացած քաղաքացիները կշարունակեն ստանալ իրենց աշխատավարձերն ու թոշակները: Կառավարության այս որոշման մասին երեկ հայտնեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Աղվան Վարդանյանը**: Բացի այդ, հստակ սահմանվում են նաեւ այն բոլոր դեպքերը, երբ քաղաքացիները պարտավոր են ներկայացնել սոցիալական քարտերը՝ թոշակներ եւ նպաստներ ստանալիս, հարկեր կամ այլ պետական վճարումներ կատարելիս: Նախարարը դա բացատրեց այն հանգամանքով, որ որոշ պետական մարմիններում կամայական վերաբերմունք է ցուցաբերվում՝ քաղաքացիներից պահանջելով ներկայացնել սոցիալական քարտը: Օրինակ՝ նման պահանջներ են ներկայացվել բուժհերի ընդունելության քննության դիմորդներից եւ օդանավակայանում:



Աղվան Վարդանյանը նաեւ հայտնեց, որ հունիսի 20-ի դրությամբ սոցիալական քարտեր ստանալու հայտեր են ներկայացրել 1 մլն 600 հազար մարդ, որոնցից 900 հազարը արդեն ստացել են դրանք: Հայտ չներկայացրածները մինչեւ հունվարի 1-ը պարտավոր են ներկայացնել եւ ստանալ քարտը: Նախարարը նշեց, որ այն մարդիկ, ովքեր աշխատավարձ կամ թոշակ չեն ստանում, կարող են քարտ չունենալ: Այս պատասխանից, սակայն, կարելի է ենթադրել, որ քարտերն, ըստ էության, պարտադրվում են:

Տես էջ 3

ԵՐԵՎԱՆ

Համահայկական գրական երկրորդ համաժողով

Հայաստան-սփյուռք հարաբերությունների զարգացմանը մեծապես նպաստող գրական-հայագիտական համաժողովները վստահաբար փոխում են երեւանյան մշակութային կյանքը, նկատելի թարմություն հաղորդում: Փոխադարձ շփումներից գրական-մշակութային աշխարհում նյութափոխանակության ակտիվությունը նաեւ ստեղծագործական փոփոխություններ է առաջացնում: Այդ մասին, իհարկե, մասնակիցներն ավելի լավ վկայություններ կունենան, բայց որ այդ շփումների անհրաժեշտություն կա, անժխտելի է: Մենք փոխադարձաբար եւ ասպիսիաբար հայտնաբերում ենք իրար, հարստացնում ինքներս մեզ: Այս երեւույթի վկայություններից էր համահայկական գրական համաժողովը՝ 2002 թ., որն իր շարունակությունն է ունենալու օրերս: Այս առիթով Երեւան կժամանեն սփյուռքահայ գրողներ, մշակներ, եւ ինչպես ընդգծեց ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը երեկվա մամլո ասուլիսում, նրանց մեջ այս անգամ ավելի շատ կլինեն երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ:

Համաժողովի բացման հանդիսությունը կայանալու է հունիսի 28-ին, Գրողների տանը, իսկ հաջորդ օրը «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի կունենա գեղարվեստական երեկո Հայաստանի գրողների միության 70-ամյակի առիթով: Հունիսի 28-ից հուլիսի 5-ը տեղի ունեցող համաժողովի օրերին նախատեսված են բազմաթիվ միջոցառումներ՝ այցելություն Մայր աթոռ Սբ. Էջմիածին՝ ընդունելություն Վեհափառ հայրապետի մոտ, լիագումար նիստեր՝ բազմազան թեմաներով («Հայ գրականության նորանոր զարգացումները», «Ազգային դպրոց եւ ազգային գրականություն», «Պատմական հիշողությունը եւ ժամանակակից գրականությունը») գրական զանազան հանդիպումներ, ցերեկույթներ (սփյուռքահայ անվանի բանաստեղծներ Զահրատի, Ռուբեն Մելիքի ծննդյան 80-ամյա հոբելյանների առիթով), այցելություն Մեծ եղեռնի զոհերի հուշարձան, Ծաղկաձոր, Արցախ: Հրաժեշտի երեկոն տեղի կունենա հուլիսի 4-ին «Էրեբունի» հյուրանոցի սրահում:

Համաժողովին ժամանած սփյուռքահայ մեր հայրենակիցներից ասուլիսին ներկա էին Կանադայից Հակոբ Խաչիկյանը, Երուսաղեմից Անուշ Նազգաչյանը, Կիպրոսից Տորջ Տեր-Բարթողը, ԱՄՆ-ից Վեհանուշ Թեքեյանը:

Մ. Ք.

Հայ օպերային թատրոնը ծանր կորուստ կրեց

Հունիսի 25-ին անժամանակ մեզանից հեռացավ տաղանդավոր երգիչ Տիգրան Լեւոնյանը: Իտալական դպրոցի դրամատիկ տենորը ձայնային հարուստ երանգներով երկար տարիներ հանդիսատեսին էր հրամցնում բարձրակարգ կատարումներ, անջնջելի տպավորություն թողնելով ունկնդրի վրա: Նրա անժամանակ մահը ցնցեց արվեստի երկրպագուներին եւ օպերային թատրոնի կոլեկտիվին: Երկար տարիներ Տիգրան Լեւոնյանը ղեկավարել էր օպերային թատրոնը, միաժամանակ երգել եւ հրաշալի ներկայացումներ բեմադրել, որոնցից անմոռանալի կմնա «Պոդիկտոսը»:



Ստեղծվել է թաղման կառավարական հանձնաժողով՝ մշակույթի նախարար Հովիկ Հովեյանի գլխավորությամբ:

ՀՀ կառավարություն - «Արմենտել» հաշտության բանակցություններ Լոնդոնում

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լոնդոնի արբիտրաժային դատարանում «Արմենտել»-Հայաստանի կառավարություն հաշտեցման շուրջ ներկայումս բանակցում են ընկերության նորանշանակ գլխավոր-գործադիր տնօրեն Վասիլի Ֆետիսը եւ ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը: Ինչպես Արմենպրեսին հայտնի դարձավ իրազեկ աղբյուրներից, եթե առաջարկությունները, որոնք դեռեւս հրապարակված չեն, լինեն փոխշահավետ, ապա հնարավոր է դատական գործի կասեցում: Հայկական կողմի համար ընդունելի առաջարկությունը նշանակում է կապի բավարար որակի եւ ֆանակի առկայություն:

OTE-ն հայկական շուկայում տնտեսավարելու համար առաջնային է համարում բջջային ցանցի ընդլայնումը, որը հնարավորություն կտա որոշ առումով բարելավել ընկերության ֆինանսական դրությունը: Չնայած OTE-ի կողմից հաղորդակցության փոփոխությանը, այնուամենայնիվ, հունիսի 30-ին ուժի մեջ են մտնում թիվ 60 լիցենզիայով կատարված փոփոխությունները, համաձայն որոնց, «Արմենտելը» զրկվում է բջջային կապի եւ միջազգային ելքի մենաշնորհից:

Ի դեպ, մինչ օրս «Արմենտելը» կատարել է շուրջ 217 մլն դոլարի ներդրում, իսկ 2004 թ. ծրագրով նախատեսված է 25 մլն եվրոյի ներդրում, որից 20 մլն եվրոն՝ բջջային ցանցում:

Թբիլիսիում ձերբակալված երկու հայերը մեղադրվում են թրաֆիկինգի մեջ

ԹԲԻԼԻՍԻ, 25 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թբիլիսիի Վաքե-Սաբուրթալո շրջանի ոստիկանատես Զուրաբ Բաքրաձեն հայտնել է, որ թաղամասի բնակարաններից մեկում ձերբակալվել են 2 հայեր՝ Աշոտ Հովհաննիսյանն ու Մարիա Մնացականյանը՝ թրաֆիկինգի խումբ ղեկավարելու համար:

Նրանք մեղադրվում են Ուզբեկստանից 15 կին բերելու եւ Դուբայ տեղափոխելու մտադրության համար: Այդ կանանց հավաստիացրել են, թե Վրաստանում աշխատանք կգտնեն: Սակայն Թբիլիսիում ասել են, որ պիտի գնան Դուբայ, որտեղ էլ կստանան իրենց անձնագրերը: Սակայն աղջիկները մերժել են, ինչի հետեւանքով էլ նրանց փակել են տվյալ բնակարանում:

Վաքե-Սաբուրթալո շրջանի դատախազ Բորիս Աշխեդիձեն «Ազատությանն» ասել է, որ սա կազմակերպված հանցախումբ է, որը կդատապարտվի Վրաստանի քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով, որը նախատեսվում է 20 տարվա ազատազրկում: «Մենք պիտի հետաքննություն կազմակերպենք, որպիսեւ նրանք շատ կազմակերպված են եւ, հավանաբար առաջին անգամ չէ, որ նման քայլ են կատարում», ասել է դատախազը:

◆ *ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հունիսի 25-ի որոշմամբ **Սիդա Թոփուզյանն** ազատվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալի պաշտոնից:*

Գլխավոր նպատակը հայկական կոնյակի որակը պահպանելն է

Կամուրջ կոնյակ արտադրող խոշոր ձեռնարկությունների միջեւ

Հայաստանում 1887 թվականին հիմնադրված հայկական կոնյակագործության ժառանգորդներ Երեւանի կոնյակի գործարանը եւ Երեւանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատը, նկատի ունենալով պատմական իրողությունները, հանդիսանալով «Արարատ» ադրանիանիի համասեփականատերերը եւ հաշվի առնելով «Արարատ» ադրանիանիի օգտագործումը կազմակերպված իրականացնելու անհրաժեշտությունը, 2004 թ. փետրվարի 16-ին Երեւանում կնքեցին պայմանագիր՝ «Բրենդի բրիջ» համատեղ ընկերություն ստեղծելու մասին: Լրագրողներն այս մասին տեղեկացան երեկ, Երեւանի կոնյակի գործարանի նախագահ, գլխավոր տնօրեն Պիեռ Լարեյի եւ Երեւանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատի տնօրենների խորհրդի նախագահ Սեդրակ Առուսամյանի համատեղ մամուլի ասուլիսում:

Ընկերության նպատակները հիմնվում են Հայաստանի Հանրապետությունում գործող կոնյակի արտադրության չափանիշների խիստ համապատասխանությամբ եւ արդյունաբերական սեփականության իրավունքների փոխադարձ պահպանումն ու թափանցիկությունն ապահովելու սկզբունքների վրա: Ավելի պարզ ասած, Հայաստանում կոնյակ արտադրող երկու խոշորագույն ձեռնարկություններ գտել են համագործակցության եզրեր հայկական կոնյակի որակը եւ արտադրության ավանդույթները պահպանելու համար:

Տես էջ 3

Ընթացիկ

Լոռու աղխատները սկսել են ավելի հիշ խնայել

«Այս տարի մարզի աղխաս բնակիչները միջին հաշվով 25 տոկոսով շատ էլեկտրաէներգիա են ծախսել, քան անցած տարի: Հունվարից մայիս ամիսների կտրվածքով գազի սպառումը շուրջ 185 տոկոս, ջրի վարձը՝ 50 տոկոս, հեռախոսավարձերը՝ 9,5 տոկոս ավելի են եղել անցած տարվանից», լոռեցիների սոցիալական վիճակի գնահատման այսպիսի ինքնատիպ չափորոշիչներ ներկայացրեց Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը՝ Արմենպրեսի նությանը: Խոսքը մեծ գումարի՝ 40 մլն դոլարի մասին է, եւ հարցատար գործողություններ ձեռնարկելը կարող է վտանգավոր լինել գնորդի համար:

Ընթացքի մեջ է ու շարունակվելու է ճանապարհաշինական ծրագիրը՝ Սպիտակ-Գյումրի, Վանաձոր -Ստեփանավան, Ալավերդի-Ձիլիզա, Դսեղի12 կմ-անոց մայրուղին:

Վերջին 2 տարին աղետի գոտում բնակարանաշինության ու դպրոցաշինության ժամանակաշրջան եղավ: Անցած տարի բնակարան ստացան 1700 ընտանիքներ: Սակայն հատկապես գյուղական վայրերում 2100-2200 ընտանիքի հանդեպ դեռեւս մարզպետարանը պարտավորություններ ունի: Սրանք այն մարդիկ են, ովքեր քանդված տների փոխարեն գումարներ ստացան, բայց դրանք փոշիացան խորհրդային բանկերում:

Վանաձորը շարունակում է տառապել խմելու ջրի սակավությունից: Աղբյուրներն առաս են այստեղ, սակայն 20-30 տարվա վաղեմության ներին ցանցը շուրջ 60 տոկոս ջրի կորուստ պատճառ է դառնում: Ջրամատակարարման ներին ցանցի կարգավորումն իրականացվելու է գերմանական վարկի միջոցներով:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, առա արդեն 4-5 տարի բնությունը ամենաանսպասելի անակնկալներն է մատուցում: 2 տարի երաշտ եղավ, 3 տարի անընդմեջ գրտահարություններ ու ջրհեղեղ: Ընդամենը 2 օր առաջ ուժեղ կարկուտից տուժեցին բոլոր մշակաբույսերը Ստեփանավանի ու Տաշիրի տարածաշրջաններում: Իբր փոխհատուցում՝ գյուղացիներին մի հիշ էժան գներով պարարտանյութ ու սերմացու է վաճառվել:

Հենրիկ Քոչինյանը մարզի համար իբրեւ բացասական հայտանիշ նշեց անհատական բնակարանաշինության, նաեւ փոքր ու միջին բիզնեսի զարգացման՝ մայրաքաղաքի համեմատ խիստ ցածր մակարդակը: Գործազրկությունը շարունակում է տիրապետող մնալ, թեեւ շատ է նաեւ այն մարդկանց թիվը, ովքեր հարկեր չվճարելու համար պարզապես չեն գրանցում իրենց աշխատատեղը: Մարզում ամբողջությամբ 660 խանութ կա, սակայն հարկային ներկայացված փաստաթղթերի համաձայն այնտեղ աշխատում է ընդամենը 1200 մարդ:

Մարզային համայնքները, մարզպետի բնորոշմամբ, խիստ անհավասարաչափ են զարգանում: Զարգացման տեմպերով Սպիտակից, Վանաձորից մղոններով հեռու են այն համայնքները, որոնք նույնիսկ հեռախոս չունեն, որոնք, սակայն, գտնվում են այս քաղաքների կողքին:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ



մամուլի սրահում լրագրողների հետ հանդիպման ժամանակ: Որ մարզի բնակչությունը պակաս «խնայաստ» է դարձել, մարզպետը դատում է նաեւ մարզի համայնքների եկամուտների՝ շուրջ 35 տոկոս ավելի ցուցանիշի արձանագրմամբ: Դա չի կարելի բացատրել հարկային վարչարարության խստացմամբ, քանի որ, ըստ մարզպետի, նույն մեխանիզմը գործում էր նաեւ նախորդ տարիներին:

Այդ կարետ փոփոխությունն, ըստ մարզպետի, արձանագրվել է սնտեսության տարբեր ճյուղերում տեղաշարժերի շնորհիվ: Նախորդ տարվա համեմատ շուրջ 150 տոկոսի աճ է արձանագրել մեքենաշինությունը: Մարզի համար ամենահեռանկարայինը շարունակում է մնալ մետալուրգիան:

Շատ շուտով կշահագործվի Վանաձորից միչ հեռու՝ Լեռնոտոլոյի մոտ գտնվող հանքավայրը, եւս 2 տարի անց՝ Թեղուտի բազմամետաղային հանքավայրը՝ պղնձի, մոլիբդենի, ցինկի ու ոսկու հզոր պաշարներով: Ախթալայի ձեռնարկությունը անցած տարվանից 2 ու կես անգամ ավելի արտադրանք է տալիս: Ավանդաբար լավ վիճակում է թեթեւ արդյունաբերությունը: Ընդհանրապես, ոչ միայն թեթեւ արդյունաբերության, այլեւ արդյունաբերական արտադրանքի 90 տոկոսը իրացվում է դրսում:

Թե ինչու է ձգձգվում Վանաձորի քիմիական համալիրի գործարկումը, մարզպետը բացատրում է սլովակյան կողմի զգուշավոր քաղաքակա-

Ներկայիս իշխանությունների մեղքն ավելին է, քան նախկիններինը

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը մայիսի 27-ից հունիսի 18-ը 1950 ՀՀ քաղաքացիների եւ 50 փորձագետների շրջանում «Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը» թեմայով հարցում է անցկացրել եւ երեկ արդյունքները հրապարակեց սեմինար-քննարկման ընթացքում: Հարցվածների փորձագետներ՝ 20 տոկոսը, քաղաքացիներ՝ 14,1 տոկոսը իրեն լիովին տեղյակ է համարում ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման ներկա վիճակից, մասամբ տեղյակներն առաջին դեպքում՝ 72, երկրորդ դեպքում 74,7 տոկոսն են: Տեղեկացման հիմնական աղբյուրը հեռուստատեսությունը, ապա մյուս լրատվամիջոցներն են, որոնք հարցման արդյունքներին նայելով ավելի վատ են աշխատում: Փորձագետների 60, քաղաքացիների՝ 64,9 տոկոսն այսօր ղարաբաղյան հիմնահարցը ՀՀ-ի առաջնային խնդիրն են համարում, որի լուծումը ՀՀ իշխանություններից սպասում է միայն հարցվածների 2,5 տոկոսը: Թերեւս սա էլ իշխանությունների նկատմամբ անվստահությունից բխող երեւույթ է, որ արտահայտվել է նաեւ «Եթե ինչ-որ չափով գոհ չեք ղարաբաղյան հիմնախնդրի լուծման գործընթացից, ապա ո՞ւմ եք մեղադրում» հարցի պատասխանում: Նախկին իշխանություններին մեղադրում է հարցվածների 18, գործող իշխանություններին՝ 42 տոկոսը:

Նոր պատերազմի դեպքում 67,7 տոկոսը պատրաստակամ է երկրի պաշտպանությունը ստանձնելու, իսկ 32,3 տոկոսը՝ ոչ: Իսկ հիմնախնդրի լուծման եւ հենց այս փուլում սառեցնելուն դեմ է 55,8, կողմ՝ 44,2 տոկոսը:

Սեմինարի մասնակիցները հարցախույզի արդյունքների համադրումից հետեւեցրին, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է հանրության վստահությունը վայելող իշխանություն ունենալ:

Ն. Պ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Հաշմանդամների խնդիրներն ուշադրության կենտրոնում

Հանրապետությունում բնակվող 100.000 հաշմանդամների խնդիրները երեկ քննարկվեցին ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանին կից հաշմանդամների խորհրդի նիստում, որտեղ առաջարկվեց ավելացված արժեքի հարկի օրենքում լրացում կատարել, որի շնորհիվ 60 տոկոսով հաշմանդամներից բաղկացած կազմակերպություններն օգտվեն հարկային արտոնություններից: Սրանով հանձնաժողովի նախագահ Արտակ Առաքելյանը համոզված է, որ ցանկացած ներդնողի համար դաշտը գրավիչ է դառնում: «Կրթություն հաշմանդամ երեխաներին» հասարակական կազմակերպության ղեկավարն էլ առաջարկեց աշխատատեղեր ստեղծելու համար վարկեր տրամադրել ՀԿ-ներին, պայմանով, որ աշխատակազմի 50 տոկոսը լինեն հաշմանդամներ, իսկ մյուս կեսը հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների անդամներ:

Եվս մեկ անգամ մատնանշվեց, որ զոհված եւ հաշված զինծառայողների շուրջ 13000 ընտանիք կա երկրում, որից 1800-ը հաշվառված է բնակարանային հերթում, սակայն անլուծելի է մնում բնակարանների բարելավման խնդիրը: Մինչեւ 1998-ը թոշակավորված ազատամարտիկների թոշակի հաշվառումն էլ հասել է անհեթեթության:

Բուժման եւ առողջարանային ուղեգրերի տրամադրումն ուղեկցվում է խաբեությամբ, ճիշտ չի կազմակերպված հաշմանդամներին օգնություն հասկացնելու կարգը, երբեմն օգնությունն ստանալու համար ծախսվում է դրանից ավելին: «Լուսաստղ» ՀԿ-ի ուսումնասիրությունների համաձայն, հաշմանդամների համար հիմնախնդիր է ընտրություններին մասնակցելը ուղեկցող չունենալու պատճառով. հարցված 190 անձանցից 150-ը չի մասնակցել նախորդ նախագահական ընտրություններին: Շատ են ու բազմազան հաշմանդամների խնդիրները, որոնց առնչությամբ վերջին մեկ տարում ԱԺ նախագահին ուղղել են 1700 նամակ: Արթուր Բաղդասարյանի հավաստմամբ, դրանցից յուրաքանչյուրը քննվել է առանձին եւ տացել հնարավոր լուծում: Վերջինս նաեւ ավելացրեց հայտնեց՝ խորհրդարանը եւ մի քանի այլ կառույցներ նախաձեռնել են հաշմանդամների համար համակարգչային ուսուցման կենտրոնների ստեղծում, որոնք արտացավ աշխատանքի դեպքում սեպտեմբերից կսկսեն գործել:

Ներկայացված խնդիրների լուծման եւ օրենսդրական համապատասխան փոփոխությունների ուղղությամբ ԱԺ նախագահի հավաստմամբ, լուրջ աշխատանք է տարվելու:

ՆԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մելգոնյանի շրջանավարտները խնդրատում են ՀԲԸՄ-ին

Սիկոսիայից Կիպրոսի շրջանավարտների միության նախագահ Շավարշ Պոհճալյանից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ հունիսի 12-ին կրթօջախում կայացած ավարտական հանդիսությունը վերածվել է ՀԲԸՄ-ին խնդրատելու ամբիոնի: 2003-2004 թթ. շրջանավարտներն անգլերեն եւ հունարեն լավ պատրաստված ելույթներով Բարեգործական միությանը շնորհակալություն հայտնելուց հետո պատմել են վարժարանը բաց պահելու թեզը, կոչ անելով կենտրոնական վարչությանը վերանայելու հաստատությունը փակելու որոշումը: Ուսանողների կրտս կոչերն արձագանք են գտել նաեւ ուսումնական մասի վարիչ Կարապետ Դալեսյանի ելույթում, որտեղ նա դպրատնի խոսքեր է ուղղել ուսանողներին վարժարանի փակման առիթով ցուցաբերած հաստատության եւ բացառիկ կեցվածքի առթիվ: Ավարտական դասարանի 32 ուսանողներն իրենց ուսումնառությունը շարունակելու են արեւմտյան երկրների բարձրագույն կրթական հաստատություններում, աղացուցելով, որ իրենց գիտելիքներով չեն զիջում այլ ուսանողներին:

Ավարտական հանդիսությանը չեն մասնակցել կրթօջախի տնօրեն Անի Լաչինյան-Մակարյանը, ՀԲՀՄ-ի ներկայացուցիչ, վարժարանի փակման գործերով զբաղվող Գորդոն Անդերսոնը եւ նրա օգնականները:

Հ. Օ.

Շնորհավորանք

Մեր աշխատակից Արմեն Թադեւոսյանը եւ տիկինը՝ Էլմիրան, բախտավորվել են մանչ զավակով՝ Արթուր: Ցերմորեն շնորհավորելով բախտավոր ծնողին եւ «բարիգալոաս» մաղթելով նորածնին, հիշեցնենք, որ նախկն «Ազգի» աշխատակազմին մաս կազմելը Արթուրիկի ծնողներն ունեին 2 աղջիկ: Այլ խոսքով՝ շարունակվում է ավանդույթը՝ «Ազգում» միայն տղաներ են ծնվում:

Ծնունդ բարի

Ինչպես տեղեկացանք «Մեդիաֆորմից», հունիսի 18-24-ը «Մալաթիա» բժշկական կենտրոնում ծնվել է 26 երեխա՝ 12 տղա եւ 14 աղջիկ: Ամենաածանր աղջիկը կշռել է 3 կգ 800 գրամ, 53 սմ հասակով: Ամենաթեթեւ քաշով աղջիկը 1 կգ 500 գրամ է եւ ունեցել է 42 սմ հասակ:

«Մոր եւ մանկան առողջության պահպանման ԳՀ կենտրոնում» ծնվել է 30 երեխա, որից 17 աղջիկ եւ 13 տղա: Ամենաածանր քաշով ծնված աղջիկը կշռել է 3 կգ, 53 սմ հասակով, իսկ ամենաթեթեւ աղջիկը կշռել է 1 կգ 500 գրամ եւ ունեցել է 41 սմ հասակ:

«Երեբունի բժշկական կենտրոնում» ծնվել է 40 երեխա՝ 22 տղա եւ 18 աղջիկ: Շաբաթվա ընթացքում կենտրոնում գրանցվել է երկու երկվորյակ ծնունդ: Ամենաածանր աղջիկ երեխան՝ 4 կգ 250 գրամ քաշով եւ 53 սմ հասակով, իսկ ամենաթեթեւ տղա երեխան կշռել է 2 կգ 200 գրամ եւ ունեցել է 43 սմ հասակ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՂԱԲՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Լրագրողների սենյակ / հեռ. 581841

Հաճախորդ. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353

Հաճախորդչային շարասթը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Մի անբախտ ադրբեջանուհու պատմություն

«Ուզում եմ տեսնել բարեկամներիս, բայց նրանք երազիս չեն գալիս»

Լալա Սահակյանը կամ Ադիգյոզալով Համավախ Սաֆար կզզին (աղջկական անունն է) հիշում է ամուսնու՝ Դերենիկ Սահակյանի սպանությունը իրենց տան այգում:

- Դիակը պահում էինք նկուղում, որովհետեւ գյուղի վրա ադրբեջանցիները կրակ էին թափում: Մի քանի հարեւաններով Դերենիկին տարան, թաղեցին,- ասում է Լալան:

Ընտանիքի անդամները չեն կարող մոռանալ պատերազմը, ոումբերի ձայնը նրանց ականջներում է: Մեկ առ մեկ հիշեցին ռմբահարության ժամանակ սպանվածներին՝ թյունն է: Եվ ոչ միայն նրանց համար:

Բաղանիսի հողատարածքները սահմանին մոտ են: Հայ-ադրբեջանական սահմանակոիվների ժամանակ տասնյակ մարդիկ են սպանվել, վիրավորվել, պատանդ վերցվել: Պատերազմը շատ ընտանիքների է դժբախտություն պատճառել: Հիմա էլ գյուղացիները վախով են մշակում հողը: Սահման կոչվածի մասին յուրաքանչյուր ոք իր պատկերացումներն ունի: Անդրանիկի մոր՝ Լալայի համար (նա հայերեն շեշտադումներով է խոսում, ճիշտ է, կիսով չափ մոռացել է հարազատ ադրբեջաներենը) սահմանը ոչ միայն իր հորական ավերված տունն է: Այս դժբախտ ադրբեջանուհին իր կյանքի մի մասը եւ հարազատներին թողել է սահմանի այն կողմում: Այս բարի ադրբեջանուհին կյանքում երկու անգամ է անհնարելի. երբ ադրբեջանցիների կրակոցից մեղվի փեթակի մոտ սպանվեց իր ամուսինը եւ մեկ էլ, երբ ադրբեջանցիների արկից սիրելի որդին՝ Անդրանիկը, կորցրեց ոտքը:

Սահակյանների ընտանիքը բնակվում է Տավուշի մարզի Ադրբեջանին սահմանակից գյուղում: Ընտանիքի մայրը՝ Լալան, հիշում է, որ Դերենիկի հետ ամուսնացել է 1966 թ. ամռանը, երբ ընդամենը 19 տարեկան էր ու հայերեն բառ չգիտեր: Դերենիկը Երեւանում բաժանվել էր հայ կնոջից, վերջինիս մոտ թողել 3 երեխաներին, իսկ 4-րդին՝ Գառնիկին իր հետ բերել հայրական տուն:

- Մենք 12 եղբայրներ ու 2 քույր միասին Ղազախի շրջանի Բաղանիս-Այրում գյուղում էինք ապրում: Իմ հայրն ընտանիքը թողել գնացել էր, մեկ-մեկ էր տուն գալիս: Դերենիկը թուրքերեն շատ լավ գիտեր, նրա հոր եւ իմ հոր ընտանիքները «դոստեր» էին,- հիշում է Լալան:

Ադրբեջանական Բաղանիս-Այրումը եւ հայկական Բաղանիսը մի քանի հարյուր մետր են միմյանցից հեռու, առաջինը՝ խորհրդային Ադրբեջանի Ղազախի շրջանում, երկրորդը՝ Հայաստանի Նոյեմբերյանի շրջանում: Այն ժամանակներում «դոստ» պահելու սովորություն կար, այսինքն՝ հայ եւ ադրբեջանցի 2 ընտանիքներ ծանոթանում էին, բարեկամություն անում:

- Մի օր Դերենիկը մեզ իր «Զաղ»-ով տարավ Ղազախի շուկա իբր առեւտուր անելու: Այնտեղ էլ ասաց՝ հայ չե՞ս ուզի: Պատասխանեցի՝ ինչո՞ւ չեմ առնի: Հետո ասաց՝ ինձ չե՞ս ուզի: Ղազախի շուկայից նա ինձ բերեց իրենց տուն: Դերենիկն այդ ժամանակ 45 տարեկան էր, Գառնիկը 5-րդ դասարանում էր, միասին պահեցինք, բանակ ուղարկեցինք: Վերադառնալուց հետո գնաց մոր մոտ՝ Երեւան,- ասում է Լալան:

Բաղանիսցիները խաղաղություն են ուզում, որովհետեւ ուզում են հանգիստ ապրել, ուզում են հող մշակել եւ ուզում են չսպանվել իրենց հողում: Խաղաղություն է ուզում նաեւ ադրբեջանուհի Լալան, որ Դերենիկի հետ ամուսնանալուց հետո 3 զավակ է ունեցել, խաղաղությունը կարող է կապել իր անցյալի ու հարազատների հետ, որոնց թողել է սահմանի այն կողմում:

Լալան եւ թոռները խաղաղություն են ուզում

Ավագանց Մանեկին, Սահականց Նուշին, Բայրամանց Ղուշիկին, Ավագանց Նարիկին:

- Հայրս սպանվեց 92 թ. հունիսի 8-ին մեղվի փեթակի մոտ: Մենք մեղուներ շատ ունեինք, «պոստից» նոր էի իջել տուն: Մինչեւ շտաբ-գնությունը եկավ, հայրս արդեն սառել էր,- ասում է Դերենիկ եւ Լալա Սահակյանների որդին՝ 32-ամյա ազատամարտիկ, այժմ կոշկակար Անդրանիկը:

20 տարեկանում Անդրանիկը գնում է բանակ՝ Մեղրի: Ապա իր ցանկությամբ՝ Ղարաբաղ, հետեւում ունենալով պատերազմի փորձ հայրենի գյուղում: Պատերազմում՝ մահվան կողքով անցած մարդիկ զարմանալի սիրտ ու հոգի ունեն: Ամենադաժան բաները նրանք պատմում են մի տեսակ ծիծաղով, որն այնքան էլ նման չէ սովորական ծիծաղի:

- Էդ ժամանակ ուժեղ կռիվներ էին: Հորադիզում վիրավորվեցի ու կորցրի ոտքս: Իմ կողքին երկու տղաներ կային Գորիսից՝ երկուսին էլ արկը մաս-մաս արեց,- ասում է Անդրանիկը:

Հիմա նա Բաղանիսի ամենալավ կոշկակարն է: Այս արհեստը սովորել է պատերազմից հետո: Ամուսնացել է, ունի լավ ընտանիք ու 2 տղա՝ 7-ամյա Դերենիկն ու 5-ամյա Եգորը: Անդրանիկի նմաններն են, որ պատրաստել եւ պիտի պատրաստեն երկիրը, եւ ոչ թե ռադիրների տակ տոգած գեներալները:

Սահակյանների ընտանիքը, ինչպես Բաղանիսի մյուս ընտանիքները, դժվար է ապրում: Դեռ մի քանի տարի առաջ պատերազմի հաշմանդամ Անդրանիկին օգնություն էին տալիս: Վերջերս նա պարգեւատրվել է արիության մեդալով: Բայց այս համեստ ընտանիքը փող չի ուզում, նրա միակ ուզած բանը խաղաղությունն է: Եվ ոչ միայն նրանց համար:

Ազատամարտիկ Անդրանիկն իր արհեստանոցում

- Հայրս սպանվեց 92 թ. հունիսի 8-ին մեղվի փեթակի մոտ: Մենք մեղուներ շատ ունեինք, «պոստից» նոր էի իջել տուն: Մինչեւ շտաբ-գնությունը եկավ, հայրս արդեն սառել էր,- ասում է Դերենիկ եւ Լալա Սահակյանների որդին՝ 32-ամյա ազատամարտիկ, այժմ կոշկակար Անդրանիկը:

20 տարեկանում Անդրանիկը գնում է բանակ՝ Մեղրի: Ապա իր ցանկությամբ՝ Ղարաբաղ, հետեւում ունենալով պատերազմի փորձ հայրենի գյուղում: Պատերազմում՝ մահվան կողքով անցած մարդիկ զարմանալի սիրտ ու հոգի ունեն: Ամենադաժան բաները նրանք պատմում են մի տեսակ ծիծաղով, որն այնքան էլ նման չէ սովորական ծիծաղի:

- Էդ ժամանակ ուժեղ կռիվներ էին: Հորադիզում վիրավորվեցի ու կորցրի ոտքս: Իմ կողքին երկու տղաներ կային Գորիսից՝ երկուսին էլ արկը մաս-մաս արեց,- ասում է Անդրանիկը:

Հիմա նա Բաղանիսի ամենալավ կոշկակարն է: Այս արհեստը սովորել է պատերազմից հետո: Ամուսնացել է, ունի լավ ընտանիք ու 2 տղա՝ 7-ամյա Դերենիկն ու 5-ամյա Եգորը: Անդրանիկի նմաններն են, որ պատրաստել եւ պիտի պատրաստեն երկիրը, եւ ոչ թե ռադիրների տակ տոգած գեներալները:

Սահակյանների ընտանիքը, ինչպես Բաղանիսի մյուս ընտանիքները, դժվար է ապրում: Դեռ մի քանի տարի առաջ պատերազմի հաշմանդամ Անդրանիկին օգնություն էին տալիս: Վերջերս նա պարգեւատրվել է արիության մեդալով: Բայց այս համեստ ընտանիքը փող չի ուզում, նրա միակ ուզած բանը խաղաղությունն է: Եվ ոչ միայն նրանց համար:

Բաղանիսի հողատարածքները սահմանին մոտ են: Հայ-ադրբեջանական սահմանակոիվների ժամանակ տասնյակ մարդիկ են սպանվել, վիրավորվել, պատանդ վերցվել: Պատերազմը շատ ընտանիքների է դժբախտություն պատճառել: Հիմա էլ գյուղացիները վախով են մշակում հողը: Սահման կոչվածի մասին յուրաքանչյուր ոք իր պատկերացումներն ունի: Անդրանիկի մոր՝ Լալայի համար (նա հայերեն շեշտադումներով է խոսում, ճիշտ է, կիսով չափ մոռացել է հարազատ ադրբեջաներենը) սահմանը ոչ միայն իր հորական ավերված տունն է: Այս դժբախտ ադրբեջանուհին իր կյանքի մի մասը եւ հարազատներին թողել է սահմանի այն կողմում: Այս բարի ադրբեջանուհին կյանքում երկու անգամ է անհնարելի. երբ ադրբեջանցիների կրակոցից մեղվի փեթակի մոտ սպանվեց իր ամուսինը եւ մեկ էլ, երբ ադրբեջանցիների արկից սիրելի որդին՝ Անդրանիկը, կորցրեց ոտքը:

Սահակյանների ընտանիքը բնակվում է Տավուշի մարզի Ադրբեջանին սահմանակից գյուղում: Ընտանիքի մայրը՝ Լալան, հիշում է, որ Դերենիկի հետ ամուսնացել է 1966 թ. ամռանը, երբ ընդամենը 19 տարեկան էր ու հայերեն բառ չգիտեր: Դերենիկը Երեւանում բաժանվել էր հայ կնոջից, վերջինիս մոտ թողել 3 երեխաներին, իսկ 4-րդին՝ Գառնիկին իր հետ բերել հայրական տուն:

- Մենք 12 եղբայրներ ու 2 քույր միասին Ղազախի շրջանի Բաղանիս-Այրում գյուղում էինք ապրում: Իմ հայրն ընտանիքը թողել գնացել էր, մեկ-մեկ էր տուն գալիս: Դերենիկը թուրքերեն շատ լավ գիտեր, նրա հոր եւ իմ հոր ընտանիքները «դոստեր» էին,- հիշում է Լալան:

Ադրբեջանական Բաղանիս-Այրումը եւ հայկական Բաղանիսը մի քանի հարյուր մետր են միմյանցից հեռու, առաջինը՝ խորհրդային Ադրբեջանի Ղազախի շրջանում, երկրորդը՝ Հայաստանի Նոյեմբերյանի շրջանում: Այն ժամանակներում «դոստ» պահելու սովորություն կար, այսինքն՝ հայ եւ ադրբեջանցի 2 ընտանիքներ ծանոթանում էին, բարեկամություն անում:

- Մի օր Դերենիկը մեզ իր «Զաղ»-ով տարավ Ղազախի շուկա իբր առեւտուր անելու: Այնտեղ էլ ասաց՝ հայ չե՞ս ուզի: Պատասխանեցի՝ ինչո՞ւ չեմ առնի: Հետո ասաց՝ ինձ չե՞ս ուզի: Ղազախի շուկայից նա ինձ բերեց իրենց տուն: Դերենիկն այդ ժամանակ 45 տարեկան էր, Գառնիկը 5-րդ դասարանում էր, միասին պահեցինք, բանակ ուղարկեցինք: Վերադառնալուց հետո գնաց մոր մոտ՝ Երեւան,- ասում է Լալան:

Բաղանիսցիները խաղաղություն են ուզում, որովհետեւ ուզում են հանգիստ ապրել, ուզում են հող մշակել եւ ուզում են չսպանվել իրենց հողում: Խաղաղություն է ուզում նաեւ ադրբեջանուհի Լալան, որ Դերենիկի հետ ամուսնանալուց հետո 3 զավակ է ունեցել, խաղաղությունը կարող է կապել իր անցյալի ու հարազատների հետ, որոնց թողել է սահմանի այն կողմում:

- Աղջկաս՝ Արմինեին ամուսնացրել եմ թուրքի հետ պատերազմից առաջ: Վերջին անգամ մենք հանդիպել ենք 88-ին: Դրանից հետո ոչ իմ աղջկանից եւ ոչ էլ ընտանիքի իմ անդամներից տեղեկություններ չունեմ: Միգուցե եղբայրներս սպանվել են պատերազմի ժամանակ, չգիտեմ, կարոտում եմ: Շատ եմ ուզում երազում տեսնել բարեկամներիս, բայց նրանք ինձ երազ չեն գալիս: Հայրս մահացավ, երբ աշխարհը խաղաղ էր: Մորս մասին տեղեկություն չունեմ,- ասում է Լալան:

ԹԱՄԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Բաղանիս-Երեւան

Գերմանացիներին հետաքրքրել է հայկական սննդամթերքը

Առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարեն Ճշմարիտյանը երեկ հակիրճ անդրադարձավ Բեռլինում տեղի ունեցած հայ-գերմանական գործարար համաժողովին եւ հայկական ապրանքների ցուցահանդեսին: Նախարարը նշեց, որ գերմանական կողմն առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերել հայկական սննդամթերքի նկատմամբ: Նրա գնահատմամբ, Հայաստանում ստանդարտների որոշակի փոփոխություններից հետո հնարավոր կլինի մեր արտադրանքի խոշոր խմբաքանակներով արտահանումը Գերմանիա: Խոսքը մեր սերտիֆիկացման կառույցի ուժեղացման մասին է: Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է դա կատարել նոր տեխնոլոգիաներ ներդնելով եւ ուսուցում կազմակերպելով: Կարեն Ճշմարիտյանի հավաստմամբ, գերմանացիներին հատկապես դուր էին եկել «Ձերմուկ գրուպի» հանքային ջուրը, «Եվրոթերմ» ընկերության հյութերը, «Գրեյս վելի» ընկերության կոնյակը: Հնարավոր է նաեւ «Էլեկտրասարք» ընկերության սարքավորումների արտահանումը:

Ա. Մ.

Բացառել սոցքարտի համարի որեւէ առնչում «Նեռի դրոշմին»

Մայր աթոռ Սբ. Էջմիածնի մամլո դիվանից տեղեկացանք հունիսի 24-ին տեղի ունեցած Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Հայաստանի եպիսկոպոսների ու թեմական առաջնորդների միացյալ ժողովի մասին, որտեղ քննարկվել են նաեւ Հայաստանում ներդրվող սոցիալական քարտերի համակարգի հետ կապված որոշ հարցեր:

Ներկայացնենք Մայր աթոռ Սբ. Էջմիածնի արձանագրած դիրքորոշումը. «Սուրբգրային հայտնությամբ եւ եկեղեցու ուղղափառ հայրերի սրբազան ուսուցումների լույսի ներքո բացառելի է սոցիալական քարտի համարի որեւէ առնչում «Նեռի դրոշմին»: Հայաստանի Հանրապետությունում ներդրվող սոցիալական ապահովության քարտերի համակարգը վտանգ չի պարունակում անձի հոգու փրկության առումով, քանզի Աստված եւ մարդ հարաբերությունները հոգեւոր անձնական աղերս են: «Հոգի է Աստված եւ Նրան երկրպագողները պետք է հոգով եւ ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհ. 4:24): Սբ. Էջմիածնի միջնորդությամբ, ինչպես նշված է հաղորդագրության մեջ, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ բացառվել է «6» թվի երեք անգամ հաջորդական կրկնությունը սոցքարտերի համարներում եւ գծիկավոր պայմանանշաններում, հակառակ պարագայում առաջանում է քրեական պատասխանատվության խնդիր:

Մ. Ք.

Սոցիալական քարտերի ներդրման ...

Սկիզբը էջ 1

Հայ առաքելական եկեղեցու վերաբերմունքի մասին հարցին պատասխանելով, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը հայտնեց, որ Ամենայն հայոց կաթողիկոսը եղել է «Նորք» կենտրոնում, որտեղ մեկ անգամ եւս ստուգվել են երեք վեց թվերի հաջորդականության մասին վերջերս երեւան եկած կասկածները: Նախարարը հավաստիացրեց, որ հնարավոր չէ, որ շտրիխ կոդերն ու թվերը միմյանց չհամապատասխանեն: Արդյունքում, ըստ Աղվան Վարդանյանի, եկեղեցին հանդես է գալու հայտարարությամբ, որտեղ նշվելու է, որ հոգեւոր առումով սոցիալական քարտերը խնդիրներ չունեն (Տես վերեւում):

Սոցիալական քարտերի ներդրման հետ կապված դժգոհությունների առնչությամբ բանավեճ կազմակերպելու առաջարկին Աղվան Վարդանյանը պատասխանեց, որ այս խնդիրն ամենից շատն է լուսաբանվել եւ ինքը կամ նախարարության այլ աշխատակիցներ չեն պատասխանում քննարկել մարդկանց խմբի հետ, որոնք որեւէ տրամաբանական տեսակետ չեն արտահայտում: Սակայն երբ ընդգծվեց, որ խոսքը հիմնավոր առարկություններ ունեցողների մասին է, նախարարն առաջարկեց այդ մոտեցումներն ուղարկել նախարարություն:

Մեր հարցը վերաբերում էր երեխաների՝ սոցիալական քարտեր սանելու նպատակահարմարությանը, որի առնչությամբ նախարարը նշեց, որ երեխաները եւս ընդգրկված են սոցիալական ծրագրերում: Սակայն մեր հաջորդ հարցին՝ «Հնարավոր չէ՞ր երեխաների տվյալներն ընդգրկել ծնողի բազայում», փաստորեն որոշակի պատասխան չստացանք: «Իսկ ինչո՞ւ ծնողի բազայում»՝ հարցով պատասխանեցին մեր հարցին: Պարզապես նշենք, որ մինչեւ երկու տարեկան երեխաների նպաստները ներկայումս ստացվում են ծնողի, ավելի կոնկրետ մոր անունով: Հետեւաբար, երեխաներին սոցիալական քարտերի բազայում ընդգրկելու անհրաժեշտությունն ուղղակի բացակայում է:

Ինչպես վերոնշյալ, այնպես էլ մամուլի ասուլիսի ընթացքում տրված մյուս հարցերը, հասարակության մեջ տիրապետող կասկածներն ու մտավախությունները այն հստակ եզրակացությանն են բերում, որ սոցիալական քարտերի ներդրման անհրաժեշտության եւ կարեւորության մասին հավաստիացումները դեռեւս իշխանությունների եւ մասնավորապես աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից հիմնավորված չեն: Իսկ եթե, ինչպես նշեց նախարարը, այս խնդրի մասին ամենից շատն է խոսվել եւ բացատրություններ տրվել, բայց կասկածներն ու մտավախությունները մնացել են, ապա այստեղ իսկապես ինչ-որ բան այն չէ:

Զինծառայողների թոշակները կբարձրանան

Կառավարության որոշմամբ երեկ բարձրացվեցին զինծառայողների թոշակները: Ինչպես տեղեկացրեց ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Պավել Սաֆարյանը, ներկայումս թոշակային տարիքում գտնվող զինծառայողների միջին աշխատավարձը կազմում է 24 հազար դրամ, իսկ հուլիսի 1-ից կավելանա 3600 դրամով:

Ա. Մ.

Գլխավոր նպաստակը հայկական կոնյակի որակը պահպանելն է

Սկիզբը էջ 1

Հիշեցնենք, որ 1998 թ.-ից երկու գործարաններն «Արարատ» ապրանքանիշի համասեփականատերերն են, սակայն ունեին տարաձայնություններ դրա օգտագործման հետ կապված: Փաստորեն կնքված պայմանագրով առկա տարաձայնություններին վերջ դրվեց, եւ «Արարատ» ապրանքանիշի կառավարման ձեւն այսուհետեւ ընտրված է: Պայմանագրի կնքմանը նախորդել է բանակցությունների երկարատեւ փուլ: Դրվել է արդյոք լոգոն վաճառելու հարցը: Երեւանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատի տնօրենների խորհրդի նախագահ Սեդրակ Առուսամյանն ասաց, որ նման հարց իսկապես քննարկվել է: Սակայն հաշվի առնելով կոմբինատի սեփականատիրոջ՝ «Մուլտի գրուպ» կոնցեռնի հիմնադիր-նախագահ Գագիկ Ճառուկյանի մոտեցումները, որոշվել է ազգային արժեք ներկայացնող ապրանքանիշը չվաճառել, եւ գտնվել է դրա օգտագործման ավելի առողջ տարբերակ:

«Բրենդի բրիջ» ընկերությունը կարգավորելու է միայն լոգոյի օգտագործման հարցը, եւ համագործակցությունը չի նշանակում, որ գործընկեր դարձած ձեռնարկություններն առաջիկայում եւս մրցակիցներ չեն լինելու: Խաղողի մթերման հարցում, օրինակ, ինչպես տեղեկացրեց Սեդրակ Առուսամյանը, Երեւանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատը որդեգրել է այսպիսի սկզբունք. խաղողը գնել ավելի թանկ, քան դաշտում գործող մթերող մյուս ընկերությունները: Երեւանի կոնյակի գործարանի նախագահ, գլխավոր տնօրեն Պիեռ Լարեյի խոսքով, «Բրենդի բրիջը» համագործակցելու է նաեւ հայկական կոնյակն ալկոհոլային խմիչքների արտասահմանյան շուկայում լավագույնս ներկայացնելու գործում եւ պայքարելու է կեղծվող արտադրանքի դեմ: Պրն Լարեյն այդուհանդերձ խոստովանում է, որ կեղծիքների դեմ պայքարում դեռ շատ անելիքներ կան, եւ նշում է, որ լավորակ արտադրանքը միշտ էլ կեղծվում է: Սակայն թե՛ Երեւանի կոնյակի գործարանը, թե՛ Երեւանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատը հայկական կոնյակի որակը պահպանել պարտավոր են, քանի որ թեկուզ գործընկերներ, սակայն միմյանց նկատմամբ իրականացնելու են վերահսկողություն, եւ որակը չպահպանողը կզրկվի «Արարատ» ապրանքանիշից: Սա եւս ձեռնարկությունները պայմանագրով արդեն համաձայնեցրել են:

Մ. Ք.

«Ժողովուրդը կորոշի՝ ավտոբուսներ, թե՞ միկրոավտոբուսներ»

Կարծում է Երևանի տրանսպորտի վարչության նորանշանակ պետը

Երևանի տրանսպորտային սպասարկման անմխիթար վիճակի եւ բարելավելու ուղղությամբ հաղթային իշխանությունների անբավարար գործունեությանը հաճախ ենք անդրադարձել, մասնավորապես ինչադաելով Երևանի նախկին եւ ներկա հաղթաթեսներին եւ տրանսպորտի վարչության առդեն նախկին պետ Արեգ Բարսեղյանին: Վերջերս վարչության պետի պաշտոնում նրան փոխարինեց Տիգրան Ղազարյանը, որի հետ մեր հարցազրույցի ժամանակ վերսին արծարծեցինք երեւանցիների առօրյայի մաս կազմող հարցերը:

- Որպեսզի երթուղային ցանցը նախագծվի, պետք է իրականացվեն շատ լուրջ ուսումնասիրություններ: Օրինակ՝ ուղեւորահոսքը պետք է ուսումնասիրվի ըստ օրվա ժամերի, շաբաթվա օրերի եւ ամիսների: Նման լուրջ ուսումնասիրություններ, եթե չեմ սխալվում, վերջին 30 տարվա ընթացքում չեն կատարվել: Մեկ անգամ նման ուսումնասիրություն անցկացվեց, երբ հաղթապետն Ալբերտ Բազեյանն էր: Սակայն, ցավոք, այն հարաբերակցությունը, որ ըստ այդ ուսումնասիրությունների պետք է լիներ ավտոբուսային եւ միկրոավտոբուսային երթուղիների միջեւ, փոփոխություններ կրեց հօգուտ վերջինիս: Դրա հետեւանքով չունեցանք լուրջ երթուղային ցանց:

- Ինչո՞ւ այդպես սացվեց: Ո՞րն էր պատճառը:

- Այդ հարցին չեմ կարող պատասխանել ուրիշ մարդկանց փոխարեն:

- Այսինքն կարող ենք ասել, որ այժմ գործում է միկրոավտոբուսների տարեայնորեն ստեղծված ցանցը:

- Չեմ ցանկանում նման գնահատականներ տալ, բայց այդ ցանցով ուղղվեց ավտոբուսային երթուղիների շարժակազմի քանակը, որի հետեւանքով այսօր մայրաքաղաքում լավագույն դեպքում աշխատում են 50-60 ավտոբուսներ եւ 3000 միկրոավտոբուսներ: Սա անթույլատրելի է: Յուրաքանչյուր քաղաքի տրանսպորտային սպասարկումը չի կարելի թողնել միկրոավտոբուսների հույսին: Քաղաքապետի ներկայիս մոտեցումն այն է, որ առաջիկա 5-6 տարիների ընթացքում մայրաքաղաքն ունենա 1000-1500 ավտոբուս:

- Պրն Ղազարյան, այդ մասին բազմիցս է ասվել: Սակայն մինչ այդ ավտոբուսները լինեն, հարկ է այսօրվա համար ինչ-որ լուծումներ գտնել, որպեսզի բնակչությունը կարողանա հասնել աշխատավայր եւ վերադառնալ տուն: Օրինակ, մի՞թե հնարավոր չէ միկրոավտոբուսային երթուղու շահագործման մրցույթ հայտարարելիս թույլատրել երկու-երեք ավտոբուս շահագործվի, որոնցից կգանձվի նույն հարկային դրույքաչափն, ինչ միկրոավտոբուսից: Կամ ավտոբուսային երթուղիներից գանձվող հաստատագրված վճարը կրկնակի նվազեցնել: Մի խոսքով, նպաստել ավտոբուսային երթուղիների կայացմանը, որպեսզի տնտեսվարողներն իրենք ցանկանան միկրոավտոբուսների փոխարեն ավտոբուսներ շահագործել:

- Այդ ուղղությամբ նախաքննչական աշխատանքներ տարվում են: Նախկինում հասարակական տրանսպորտը, բացի տաքսիներից եւ միկրոավտոբուսներից, ազատված էր պետական հարկերից, սանում էր դրոշակ, աշխատակիցները սանում էին բնակարաններ, ավտոմեքենաներ եւ այլն: Այսօր այդ արտոնությունները չկան, եւ նրանցից նույնպես գանձվում է հաստատագրված վճար: Արդյունքում ավտոբուսները հայտնվեցին անհավասար մրցակցային դաշտում: Միկրոավտոբուսները, լինելով ավելի մանեւրային, ունենալով ավելի փոքր նստատեղեր եւ մեծ շահույթ, գրավեցին շուկան:

- Ե՞րբ կարող ենք ակնկալել, որ ձեր ասած քայլերը կիրականանան:

- Ավտոբուսներին հարկային խթաններ տրամադրելու մասդրություններ կան: Մենք օրենսդրական դաշտի այդ փոփոխությունները պետք է պատրաստենք ու ներկայացնենք կառավարություն, որն էլ՝ խորհրդարան: Առաջին քայլն արդեն արվել է: Եթե 18-ից ավելի նստատեղեր ունեցող տրանսպորտային միջոցները ներկրվում են հասարակական տրանսպորտի սպասարկման եւ զբոսաշրջության համար, ապա ազատվում են ավելացված արժեքի հարկից եւ մաքսավճարից: Եթե վերոնշյալ խնդիրների լուծումը կախված լիներ միայն քաղաքապետարանից, ապա ես կնշեի կոնկրետ ժամկետներ: Սակայն քանի որ դրանք կառավարության եւ Ազգային Ժողովի հաստատման գործընթացը պետք է անցնեն, ապա չեմ կարող որեւէ ժամկետ նշել:

- Այդուհանդերձ, քանի դեռ ավտոբուսները չկան, երթուղային տաքսիների դաշտը պե՞տք է կարգավորվի: Այսօր կան բազմաթիվ երթուղիներ, որտեղ բացի առաջին կանգառից, մյուս կանգառներում ուղեւորները չեն կարող նստել միկրոավտոբուս:

- Որպեսզի միջնականգառներում կարողանան նստել, պետք է ավելացվի մեքենաների քանակը: Սակայն այդ իրավիճակն այդպես էլ կշարունակվի, եթե ավտոբուսներ չլինեն: Միանգամից բոլոր հարցերը չեն լուծվում:

- Սակայն կարելի է, չէ՞, գերբեռնված եւ թերբեռնված երթուղիների մեքենաների թիվը ըստ պահանջարկի հավասարակշռել եւ այդ 3000 միկրոավտոբուսներն օգտագործել ավելի արդյունավետ, գերբեռնված երթուղիները դարձնել ավելի մաքսիմալ միջնականգառներում անվերջ սպասողների համար:

- Այդ քանակները դեռեւս կարգավորման կարիք ունեն: Մենք հիմա բոլորին առաջարկում ենք բերել սարքին մեքենաներ եւ համալրել շարժակազմը: Քանի որ ուսումնասիրությունների համար անհրաժեշտ գումարը չունենք, այս ձեւով ցանկանում ենք սանձել ուղեւորահոսքի մոտավոր պատկերն ըստ երթուղիների: Շատերը չեն ցանկանում գալ, քանի որ դրանով սկսում են գործել հարկման դաշտում:

- Շարունակելով մեր հարցազրույցի սկզբին տրված հարցը ձեր վարչության իրավասությունների մասին, կցանկանայի պարզաբանել, թե դուք կարո՞ղ եք որոշել՝ որքան շարժակազմ է անհրաժեշտ այս կամ այն երթուղով եւ ի՞նչ սակագնով:

- Սակագինը չենք կարող մենք առաջարկել, դա առաջարկում են տնտեսվարողները:

- Իսկ եթե այդ տնտեսվարողները որոշեն սակագինը դարձնել 500 դրամ, ի՞նչ եք անելու:

- Օրենքով նախատեսված չէ, որ քաղաքապետարանը որոշի սակագինը: Մենք իրավունք չունենք գին սահմանելու: Այդ շուկան ազատականացված է: Եթե առաջարկում եք նաեւ սակագինը որպես նախապայման մտցնել, ապա այդ դեպքում էլ տնտեսվարողը պետությանը դրանից բխող այլ հարցադրումներ կանի: Ինչ վերաբերում է մեքենաների թիվը սահմանելուն... Նոր մրցույթները պետք է տեղի ունենան 2005 թ.-ին: Մինչ այդ պետք է ուսումնասիրություններ անցկացվեն, երեւի ավտոբուսների եւ միկրոավտոբուսների նոր երթուղային ցանց հաստատվի, որտեղ պետք է կոնկրետ նշվի, թե տվյալ երթուղում քանի մեքենա պետք է շահագործվի օրվա ցանկացած ժամին: Նոր մրցույթներից առաջ պետք է նաեւ սահմանենք, որ տրանսպորտային սպասարկումն իրականացնող կազմակերպություններում որոշակի պաշտոնները պետք է լինեն պարտադիր, եւ դրանք պետք է զբաղեցնեն միայն համապատասխան կրթություն ունեցող մարդիկ: Մեքենաները պետք է կենտրոնական հավաքակայանում, այլ ոչ թե վարորդի տան բակում:

- Չե՞ք կարծում, որ երբ ավտոբուսները հայտնվեն, այդ գծատերերը, ունենալով հզոր հովանավորներ իշխանական օղակներում, կարող են խոչընդոտել նրանց գործունեությանն, այդ թվում անազնիվ մեթոդներով:

- Ժողովուրդը դա կորոշի: Եթե մարդիկ նախընտրեն երթեւեկել «Ռենո» կամ «Բոգդան» ավտոբուսներով, ապա այդ գծատերերն ի՞նչ պետք է անեն:

Մեր զրույցը տրանսպորտի վարչության պետի հետ շարունակվեց ավելի երկար, քանզի այս ոլորտում կուտակված խնդիրները բազմաթիվ են: Հավասալով հանդերձ դրանք լուծելու պրն Ղազարյանի ցանկության անկեղծությանը, այնուամենայնիվ, նշենք, որ դա մեծ մասամբ կախված է ամենաբարձր իշխանական օղակում գտնվողներից:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դատարանները եվրոպականացման ճանապարհին

Սպասվող նորույթների հանդեպ անբարյացակամ տրամադրություններ են առաջացել դատական համակարգում

Անհայտ նշանակության, տարբերակ հարմարություններից զուրկ կիսախարխուլ շենքերից դատարաններն աստիճանաբար տեղափոխվում են ժամանակակից պահանջների համապատասխան նոր կառույցներ: Ոմ բախտ է վիճակվել մեկ անգամ լինել Թեմիսի այդ օջախներում, անկասկած, տարակուսանքի ու տխրության պահեր է առրել: Եթե նիստերի դահլիճը հին ու քայքայված է այնքան, որ, թվում է, առաստաղը փլվելու է գլխիդ, ապա ինչպիսին է լինելու այդ պատերի տակ իրականացվող արդարադատությունը: Բարեփոխումները թակել են նաեւ պետության կողմից մոռացված այդ հաստատությունների դռները: Գոնե արտաքուստ դրանք ազատվել են գավառայնության հատակ դրոշմից: Դատարանաշինությանը զուգահեռ Հայաստանի դատարաններում նախատեսվում են նաեւ բովանդակային փոփոխություններ: Դրանցից մեկը՝ ճաղավանդակների փոխարինումը ոսնատղթաներով, արդեն իսկ իրողություն է դառնում որոշ դատարաններում: Հասարակության համար վսանգ ներկայացնող քրեական հանցագործի ազատության սահմանափակման այս ձեւը վաղուց նախընտրելի է դարձել զարգացած երկրներում: Համենայն դեպս, ճաղերի հետեւում նստած մեղադրյալի պատկերը նրան իսկ դատող հասարակության նկատմամբ երբեք համակրանքի զգացողություններ չի ներշնչում:

Հաջորդ սրբագրումը դատական գործերի վերաբաշխման նոր տեխնիկական համակարգի ստեղծումն է, որը բացառելու է այդ գործընթացում որեւէ անձի միջամտությունը: Ներկա պահին դատարանների նախագահների միանձնյա շնորհն է որոշել, թե ում է հանձնարարվելու այս կամ այն գործը: Սուբյեկտիվիզմը, անկասկած, բավական ակտիվ դեր է խաղում: Դատական գործերի վերաբաշխման տեխնիկական այս մեթոդաբանությունը նույնպես եվրոպայից Հայաստան մտնող արժեքների շարքին է դասվում:

Սակայն ամենամեծ ռեֆորմը, որ պայթուցիկի ներգործություն կարող է ունենալ, դատական նիստերի ձայնագրման տեխնոլոգիաների ներդրումն է: Դրանք հատուկ այս նպատակի համար մշակված սարքեր ու ծրագրեր են: Դրանց կիրառման փորձն արդեն կա Հայաստանում «Հոկտեմբերի 27»-ի, «Արմենտելի» դատավարությունների ժամանակ: Նիստերի ընթացքի մեխանիկական գրառումներն արտաքուստ ոչ էական, իրականում բավական նշանակալից բացասական գործոններ են առաջացնում: Որպեսզի նիստի քարտուղարը հաստատի սղագրել ընթացքը, դատավորը հաճախ հարկադրաբար ընդհատում է մեղադրյալի, վկայի կամ փաստաբանի խոսքը: Առանց այդ էլ նյարդայնացած մարդկանց համար հաճախակի ընդհատումները լրացուցիչ բացասական լիցքեր են, եւ նրանք կարող են չասել ու չանել այն, ինչ կլիներ ավելի բնական իրավիճակում:

Վերահսկողական վարույթ գնացած ձեռագիր արձանագրությունն ապացուցողական հսկայական նշանակություն ունի: Սակայն գոնե տեսականորեն հնարավոր չէ բացառել սուբյեկտիվ միջամտությունն արդեն առկա սղագրությանը: Ձայնագրության հետ այդպես վարվել հնարավոր չէ, հատկապես եթե իրականացվել է հենց դրա համար նախատեսված սարքերի միջոցով: Այդ սարքերի մասնակից անձանց ձայները ձայնագրում են առանձին, տարբեր դաշտերում: Հնարավորություն կա դրանք լսելու նույնիսկ ընդհանուր աղմկային խորից ազատ վիճակում:

Մասնակիցներից յուրաքանչյուրը եւ առանձնապես պարտված կողմը, վճարելով CD-ի արժեքը՝ 180-200 դրամ, կարող է ձեռք բերել նիստի ընթացքի ձայնագրությունը: Հաջորդ աստիճանի դատավարությանը նա ավելի լուրջ կնախապատրաստվի, քանի որ այժմ տանը հանգիստ պայմաններում ձայնագրությունը լսելու հնարավորություն ունի եւ կարող է «հայտնաբերել» փաստարկներ ու հակափաստարկներ, որոնք վճռական նշանակություն կունենան:

Չի բացառվում, որ բողոքող կողմը դատական գործը հասցնի Եվրոդատարան, որ փաստորեն այսօր դարձել է մեր դատական համակարգի տրամաբանական շարունակությունը: Արդարադատության բարձրագույն աստիճանում գործը պատշաճ, հաղթակիրք եղանակով հասցնելու հնարավորություն նույնպես արդեն կլինի:

Նոր համակարգը կարող է փող աշխատելու գայթակղությունից քիչ հեռու պահել նաեւ փաստաբաններին, որոնք վստահորդին հաճախ ներշնչում են տագնապի ու վախի տրամադրություններ՝ արհեստական բարդ գույներով ներկայացնելով իրավիճակը, ակնկալելով բարձրացնել սեփական աշխատանքի գինը:

Ամեն ինչից զատ, ձայնագրող սարքերը հոգեբանական զսպիչ լծակի դեր կարող են ունենալ նաեւ դատավորների համար, որոնք մեր շատ պատգամավորների նման երբեմն ներկայանում են իրենց դիրքին ու կոչմանն անվայել արտահայտություններով ու գռեհիկ պահվածքով:

Սակայն սպասվող նորարարության հանդեպ ակնհայտորեն անբարյացակամ տրամադրություններ են առաջացրել հենց դատական համակարգի ներսում: Հայտնի չէ, թե նշված դրդապատճառներից զատ ուրիշ ինչն է խթանում դրանց զարգացումը: Այնուամենայնիվ, ձայնագրման մեթոդով դատավարությունների մեկնարկը նախատեսվում է տարեվերջին՝ անկախ արդարադատության սպասավորների հողարկված ու բացահայտ դիմադրությունից:

Ձայնագրման դատական սարքերը բավական թանկ հաճույք են, հասը՝ 2700 դոլար: Դրանք, այնուամենայնիվ, գնվեցին «Արմենտելի» բաց ժողովի ու «Հոկտեմբերի 27»-ի համար: Հայաստանի ողջ դատական համակարգն ամբողջությամբ նորացնելու համար մեծ միջոցներ են անհրաժեշտ: Սակայն բարեփոխության նախանձախնդիրներին սա չի վհատեցնում: Հաջողվեց գտնել ավելի արդյունավետ ու էժան տարբերակ՝ ցանցային լուծումներ համակարգչի օգնությամբ: Հատուկ մասնագիտացված ձեռնարկություններում թողարկվում է դատական ձայնագրությունները նշված սկզբունքներով իրականացվող ծրագիր: Համակարգիչում դրա տեղադրումն ու արժեքն ամբողջությամբ նստում են 1000 դոլար: Ծրագրային այդպիսի համակարգեր վաղուց կիրառվում են Ուկրաինայում: Կիեւի վերաքննիչ դատարանում այսպես կոչված SRS Femida ծրագրի օգտագործումը, օրինակ, թույլ է տալիս խուսափել ամենասեւ ու աշխատատար գործողություններից: Համակարգչում ավտոմատ կերպով կազմվում են դատական նիստերի տեքստային հաշվետվությունները: Ստացված ձայնագրությունները առանց լրացուցիչ միջոցառումների հնարավոր է լսել անհատական համակարգչով: Ծրագիրը 50 ժամ ձայնագրության հնարավորություն ունի: Բայց կարեւորն այն է, որ ցանկացած սկավառակ սեփական նույնականացված համարն ունի, որը բացառում է կրկնաձայնագրությունները:

SRS Femida համակարգի նման ծրագրերը կանխավ փորձնական կարգով կներդրվեն Երեւանի մի քանի դատարաններում: Ավելի բարդ ու բարեփոխումներին անհնազանդ խնդիրը մնում է կաբառախտի առատավոր ավանդույթից գոնե աստիճանաբար մաքրագործվելը:

ԿԱՐԵՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ

Մտակրութ

Կոմիտաս

1869-1935

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Չեմ գիտեր, որ արդյոք դում ալ երբ լսում եք Կոմիտաս վարդապետի մեկ երգը, ունենո՞ւմ եք այն զգացումը կամ ապրումը, որ ո՛չ միայն վայելում եք գեղագույն լսողական հաճույք, ձեր սիրտը դողո՞ւմ է ազգային հպարտությամբ, այլ նաև խորքեն եկող տանջալի զգացումը մը, որ տեսակ մը հանցավոր եք, որ ժամանակին չեք կարողացել օգնության հասնիլ հարազատի մը, որ վտանգի մեջ էր: Չե՞ք ապրում թերարժեքության զգացումը, ափսոսանքի զգացում մը, անկարողության և պարտության զգացում մը, մեր պաշտելի Վարդապետին երգը չի՞ ճմլում ձեր սիրտը, որպեսզի մենք չմոռանանք, որ ունենք սիրտ ուրացող: Վերջերս բախտը ունեցա կարդալու 2000 թվին Գրականության և արվեստի թանգարանի լույս ընծայած գիրքը. «Կոմիտաս, նամակներ»:

Չեմ կարծեր, որ ապրող մի հայ իմացած չըլլա Կոմիտաս վարդապետի անունը կամ լսած չըլլա Կոմիտաս վարդապետի երգերը, բայց եթե կա այդ տեսակ հայ, ուրեմն նա սկսել է կորցնել իր հայությունը: Շատերու պես ես ալ գիտեմ Կոմիտաս վարդապետի կենսագրությունը, ընդհանուր առմամբ: Մի քանի պարզ նախադասություններու մեջ ալ կարելի է ամփոփել իր կենսագրությունը: Կոմիտաս վարդապետ աբխարհ եկավ, որ գրեթե իր ամբողջ կյանքը, կյանքի բոլոր վայրկյանները ապրի հայ ժողովրդին, հայ եկեղեցիին և հայ երգին համար: Եվ ուզում էր շարունակել ապրիլ հայ ժողովրդին, հայ եկեղեցիին և հայ երգին համար, նվիրաբերելով իր ամբողջ այլունը և միտքը: Բայց իր հայրենակիցներուն հետ մահվան դատապարտվեցավ:

Ուզում եմ ավելի շատ իմացած ըլլալ Կոմիտաս վարդապետին մասին և, ահավասիկ, այս նամակները՝ գրված երկու տասնամյակների ընթացքում՝ հայրենակիցներու, գործընկերներու, հայ մտավորականներու:

Նամակներու լեզուն պարզ է և աբխույժ, և այնտեղ մենք իմանում ենք Կոմիտասի կյանքի մասին, մտահոգություններու, իր գործին հետ կապված հիմնականում:

Եվ գրեթե չենք հանդիպելու կենցաղային վիճակներու մասին հիշատակումներ: Ինքը, իր կյանքին ամեն մի վայրկյանը կլանված է իր ստեղծագործություններով, իր կյանքը հայ մարդու ստեղծած երաժշտությունն է սկիզբեն ի վեր, ուրն մեջ, մանավանդ, Կոմիտասը պատկերացնում է հայ ազգը: Հայ երգը, հայ երաժշտությունը՝ ահավասիկ Կոմիտաս վարդապետի սրբություն սրբոցը: Ինքը աբխարհ եկած է պաշտելու և իր կյանքի գնով պաշտպանելու այդ Սրբություն Սրբոցը, օգնելու և պատրաստելու օժտված մարդիկ, որ օգնեն իրեն շարունակելու իր սկսած գործը: Ուուցանելը, ահավասիկ, իր ապրելու իմաստներեն մեկն ալ, որովհետև ինքը, նախ ամենեն ավելի ժամանակ և եռանդ է ծախսում սովելու համար: Ահավասիկ մի քանի մեջբերում իր նամակներից:

«Ես պատրաստ եմ, որպէս ցայսօր, իմ բոլոր ջանքերս ու ձիգս նուիրել մի այսպիսի սուրբ գործին. սուրբ գործին, որ ինձ ոգևորել է դեռ տղայ տիոցս. սուրբ գործին, որ ինձ քաշել ու կապել է Մայր Աթոռին. սուրբ գործին, որ ինձ ուղիղ 20 տարի յոյս է ներշնչել և սակայն՝ սուրբ գործին, որ ինձ արծաթ յուսով օրօրել, տոգորել ու մեծցրել է՝ առանց իրականանալու...»:

«Դում արդեն քաջ գիտեմ, թէ ինչպիսի մեծ փրկութիւն է ծախսուած մեր եղանակներն անաղարտ պահելուց և ժողովրդի ու իր եկեղեցու ազնիւ ու մաքուր սիրտը ճանաչելուց»:

«Վերջին 20-30 տարիները պատկերացնում են մեր հոգևոր երաժշտութեան աստիճանական անկումը՝ ընդհանուր հայ եկեղեցիներում... Պատարագի երգերն գրեթէ անխիտ օտարամուտ և անճաշակ եղանակներ են... Ազգային ճաշակն օտարացած և խորթացած, աւելին կասեմ՝ ծաղրի առարկայ դարձած՝ յանձին տգէտ և անձնապաստան դպրապետների, որոնք չգիտեն իրանցը, չեն էլ ուզում որոնել, սովորել և արհամարհելով ամէն ինչ՝ բերում են իբր գեղեցիկ, ընտիր, բայց իրօք կործանարար երաժշտութիւն»:

«Լաւ է այսմանով գոցեմ գիրս, սիրտս լցած է, եթէ չամաչեմ լաց լինելու, ցաւերս շատացել են: Տես աչքովդ, թէ ինչպէս մարդիկ աւերում, կործանում են պատիւ, անուն, եկեղեցի, սրբութիւն և ինչպէս գործիք են դառնում չարի ձեռին, և ապա մի լցուիր, մի լար, մի ողբա խորենացու պէս, իր իսկ ողբով. այժմ նոյն պատկերն է մեր շուրջը, և նորա ուրուականն է ողբում մեր անբուժելի ցաւերը»:

«... կարծես մեր հայերիս ընդհանուր յատկութիւնն է, որ չենք կարողանում մի բան մինչև վերջը տանել, մակերեսային կամ բնաւ զարգացում չառնելով՝ միշտ անկատար ու պակասաւոր մարդիկ ենք հասցնում»:

«Իւրաքանչիւր ազգի երաժշտութիւնը բխում է իր մայրենի լեզուի չորս անբաժան յատկութիւններից՝ ամանակ, ելևէջ, հնչիւն և ոգի. սոքա են պատկերացնում մտքի և զգացմունքի աշխարհները»:

«Միակ ցանկութիւնս և բուռն փափագս է բանալ այն վարագոյրը, որով ծածկուած են մեր հին և բնիկ եղանակները մեր սրտի և հոգու առաջ»:

«Իտալիան շատ գեղեցիկ է, բայց մեր դժբախտ հայրենիքը աւելի գեղեցիկ է»:

Երբ նամակներու ընթերցումը հասավ մի պահի, ինձ այնպես ընկճված զգացի, որ որոշեցի դադարեցնել ընթերցումս, կարծեմ, Վարդապետը կենդանի ըլլար, հիմա, մեզ հետ:

Հետո մի կարճ ժամանակ անց տարօրինակ մի վիճակի մեջ ընկա, ես նոյնպես չունեի ոևէ հոդված գրելու այս գրքի մասին:

Ես հանկարծ հիշեցի Յիսուսին (Քրիստոս) և նաև միանգամից վերադարձա մանկությունս, որովհետև վաղ մանկությանս առաջին անգամ ճանաչեցի եմ Յիսուսին, ընթերցելով Ս. Գիրքը: Բայց որպեսզի կարողանամ շարունակել միտքս և այս հոդվածը, ես, սրբազղոնություն չըլլա, որ հանկարծ 80 տարեկանիս Յիսուսի մասին սկսեցի մտածել իբրև մտավորականի նախատիպար, այդ բառը ավետարաններում մեջ չկա, նաև իրեն աշխարհ գալեն 5 դար առաջ, իրեն շատ նման, Հունաստանում ապրում էր փիլիսոփա Սոկրատը. երբ ասում եմ մտավորական, իր ապրած կյանքը նկատի ունիմ: Իրանից հետո էլ եկան մարդիկ, որոնց կյանքը շատ նման է իր՝ Յիսուսի ապրած կյանքին:

Ինչպե՞ս անցավ Քրիստոսի կարճ և դժվար կյանքը. հիվանդներու հետ, պարզ մարդկանց ընկերությամբ: Իր նպատակն էր օգնել իր ժողովուրդին, նրանց սովորեցնել ճիշտ ապրելու ձևը, ըլլա ֆիզիկապես, ըլլա հոգեպես, մանավանդ խորհուրդ էր տալիս, որ գիրար սիրեն, չսպանեն, չխաբեն, տկարին չոտնահարեն, սայթաքածին բարձրացնեն: Փոխարենը ինչպե՞ս վարվեցին իր հետ իր ազգակիցները: Իրենց ղեկավարներու առաջնորդությամբ վրան գործ տարեցին, չերկարեմ, և վերջում չարաչար սպանեցին խաչին վրա: Երբ ես ասում եմ մտավորական, ես նկատի չունեմ անպայման բարձրագույն կրթությամբ անձեր, ինչ մասնագիտություն ալ որ ունենան, հարգելով հանդերձ իրենց դերը հասարակության կյանքին մեջ: Նրանք կարող են օգտակար ըլլալ և նաև շատ վնասակար:

Մտավորականը ըստ իս նա է, որ հայտնվում է աշխարհում, իր ժողովուրդին մեջ, անսպասելի, գալիս է աշխարհ և իր կյանքը ամբողջությամբ նվիրում է իր ժողովուրդի ֆիզիկականին և հոգեկանին պաշտպանության և փրկության. և սակայն ի՞նչ է լինում պատասխանը, գնահատո՞ւմ են իրենց «փրկիչին», ո՛չ, այդ տեսակ մարդը հաճախ ենթարկվում է հալածանքներու, զրպարտություններու, ախտում են, բանտարկում են և սպանում: Հարկ կա՞ օրինակներ հիշելու: Ես այստեղ ուզում եմ մի քիչ շեղվել իմ նյութես. այո՛, քանի որ վերը հիշեցինք հոգին. ես կարծում եմ, որ ամենապարզ ձևակերպումով մարդ արարածը տարբերվում է մյուս արարածներից երկու հատկությամբ:

Ա - մարդ արարածը բնատուր օժտված է ինքզինքը այլասերելու և ապականելու հատկությամբ, և ինչո՞ւ միայն ինքզինքը, նաև իր ամբողջ շրջակա միջավայրը, և՝

Բ - ունի, բարեբախտաբար, ի բնէ մեկ ուրիշ հատկություն, որ մյուս արարածները չունին՝ «հոգի». կարծեմ բնությունը ուզեցել է իր գործած չարիքը մեղմել:

Հոգին տեսանելի է դառնում և ձև է ստանում մարդու ստեղծած արվեստի միջոցով. արվեստն ալ բնատուր հատկություն է: Կարիք կա՞ մանրանալու՝ ճարտարապետություն, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, պոեզիա... նեռոդամիս եղել: Հոգին է, որ չի ապականվում և չի մահանում ինչպես նյութը: Հոգին (արվեստը) և մարմինը (նյութը) տևական անհաշտ կռվի մեջ են: Ըստ իս հոգին է, որ երկոտանիին մարդ է դարձնում և մարդուն ալ՝ հայ, հույն, ճապոնացի և այլն, և վերջապես ինչ որ մենք ժառանգած ենք և փոխանցում՝ մեր հոգին է: Շնորհիվ հոգիին (արվեստ) մեր կյանքը չի սահմանափակվում տասնամյակներով, այլ հավիտենական է. «Երկներ երկիր...»-ը ե՞րբ է գրվել, մյս պահուն, երբ կարդում ենք հեթոդահոր պատմությունը, 2000 տարի առաջ, թե՞ 100.000 տարի առաջ: Սայաթ Նովայի տաղերը մենք երգում ենք այսօր, հազար տարի վերջ ալ չենք երգելու. եթե չերգենք, ուրեմն հայությունը վերացած պետք է ըլլա աշխարհի երեսեն:

Վերադառնանք մեր հայր սուրբին: Ահավասիկ իր գրած ամենատխուր նամակներեն մեկը:

«1909, 5 սեպտեմբեր, Ս. Էջմիածին

Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց Տ.Տ. Մատթէոսի Բ.ի

Վեհափառ Տէր

Քսան տարի է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան եմ: Մտել եմ այս հաստատութիւնը ծառայելու նպատակով: Քսան տարուան ընթացքում շրջապատն ինձ թոյլ չի տուել այն անելու, ինչ կարող էի, որովհետև տեսայ միայն որոգայթ և ոչ արդարութիւն: Նեարդես թուլացել են, այլևս տկալու ճար ու հնար չունեմ: Որոնում եմ հանգիստ, չեմ գտնում, ծարաւի եմ ազնիւ աշխատանքի, խանգարում եմ, փափագում եմ հեռու մնալ, խցել ականջներս՝ չլսելու համար, գոցել աչքերս՝ չտեսնելու համար, կապել ոտքերս՝ չգայթակղուելու համար, սանձել զգացումներս՝ չվրդովուելու համար, բայց զի՛ մարդ եմ, չեմ կարողանում:

Խիղճս մեռնում է, եռանդս պաղում է, կեանքս մաւում է, և միայն վարանքն է բուն դնում հոգուս ու սրտիս խորքում:

Եթե հաճոյ է Վեհիդ ինձ չկորցնել, այլ գտնել, արտասուելով աղերսում եմ արձակեցէք ինձ Ս. Էջմիածնայ Միաբանութեան ուխտից և նշանակեցէք Սնանայ Մենաստանի մենակեաց: Քսան տարին կորցրի, գոնէ մնացած տարիներս շահեցնեմ և անդորրութեամբ գրի առնեմ ուսումնասիրութիւններիս պտուղները՝ իբր առաւել կարևոր ծառայութիւն հայ տառագրեալ սուրբ եկեղեցոյ և գիտութեան:

Վեհափառութեանդ ծառայ և որդի

Կոմիտաս վարդապետ

Միաբան Ս. Էջմիածնի»

Անշուշտ իր կյանքին մեջ կան նաև անխառն հրճվանքի պահեր, երբ իր հայրենակիցները իրեն հանդեպ իրենց շնորհակալությունը և սերն են արտահայտում:

«Թէ՛ Վիեննա և թէ՛ մանաւանդ Ֆիլիպոպէ փառաւոր ընդունելութիւն գտայ՝ ամբողջ քաղաքը անխիտ ոտի վերայ էր՝ ինձ պատուելու համար»:

«Մրտագին շնորհակալութիւնս եղբայր պատուական, Ձեր անկեղծ և սիրալիր զգացմանց համար, Ձեր խրախոյսներն ինձ եռանդ են ներշնչում և ոգևորութիւն առթում. մի բան, որ այնքան հիչ են հասկանում և գնահատում մեզանում: Անհատը որքան էլ ջանասէր լինի, այնուամենայնիւ խրախոյսը մի հզօր խթան է, որ կարող է շրջել սարեր հիմն ի վեր»:

«... երբ աւելի զօրեղ զէնք չունենք, քան մեր հին ու նոր եկեղեցուն ու աշխարհիկ և գիտական ու գեղարուեստական կարողութիւնները ցուցադրել, որ տեսնեն, թէ իբր ողորմութիւն չէ՛, որ խնդրում ենք, այլ իբր մարդկային զարգացման զօրավիգն ազգ ենք հրաժարակելում. երանի՜ թէ սկզբէն այս զէնքն առնէինք, առանք մի զէնք, որ աւելի զօրեղները փշրեցին, բայց մեր ունեցածը անընկճելի և անխորտակելի է՝ հայու սիրտն ու հոգին է իբր զէնք շաչում»:

Կոմիտաս երիտասարդ վարդապետը գնաց Գերմանիա, կես կուշտ, կես տոված, տխաջան աշխատեցավ, գիտություն հավաքեց, որ վերադառնա, իր հայրենակիցներուն օգնելու, հուսադրելու, ուժ տալու. գնաց սովեցավ Եվրոպայում, որպեսզի Եվրոպացիներուն ցույց տա, թե ինչ է հայը: Իսկ հիմա մենք մեզ ճղում ենք ցույց տալու համար Եվրոպացիներուն, որ մենք «Եվրոպացի» ենք: Ամբողջ մեր ճիգը՝ պարզապես խաբեբայություն է, զգվելիորեն իմիտացիա անելով Եվրոպացիներուն ստեղծածը, փորձում ենք օտարները խաբել, բայց մենք՝ մեզ ենք խաբում: Եվրոպացիին պե՞տք է քեղ կեղծ արվեստագետը, քեղ կեղծ հոգին, Եվրոպացին արդեն զզվում է մեզանից. ահավասիկ վերջին ընտրությունները. ինչպե՞ս են մեր վրա նայում, ինչեր ասես չեն ասում. թքում են մեր երեսին, բայց մենք, ծիծաղելով ասում ենք. «անձրև է գալիս»: Ուզում ենք փորձում խաբել. այսպան լկտիություն կ ըլլա՞:

Հազար տարի վերջ, վերջապես ունեցանք մեր Հայկական պետությունը. փոխանակ մտածենք, ինչպե՞ս լեզու գտնենք խաղաղ ապրելու համար մեր հարևաններուն հետ, որպան ալ, որ մեզի ատելի ըլլա թուրքը, բայց եթէ մենք ուզում ենք պաշտպանել և պահել մեր պետությունը, պետք է ստեղծենք նորմալ հարաբերություններ մեր հարևաններուն հետ, որոնց հետ հազար տարի իբրև հարևան պետք է ապրենք: Փակվել են մեր սահմանները հարևան պետության հետ. փոխարենը բացվել են բոլոր սահմանները ամեն տեսակի ապականության, այլասերումի, հիվանդություններու, լրտեսներու, աղանդավորներու, հանցագործներու առաջ: Եվ ասոր անունը դրել ենք մարդու իրավունք, ժողովրդավարություն: Այսպան անդեմ երկիր չկա աշխարհում: Եվ մտացկանի պես մի բան ենք ուզում, որ օտարները մի քանի կոպեկ գցեն մեր ափի մեջ: Հուշարձան ենք դնում Փարիզում և հպարտանում ենք, որ ֆրանսիացիները մեզի տվել են հողի լավագույն կտորը մեր հուշարձանը Փարիզ քաղաքում դնելու համար:

Չհասկացանք, ինչ է եղել, հողի կտո՞րն է փառաբանում արվեստի գործը, թե արվեստի գործն է, որ փառավորում է հողի կտորը. բայց չկա երրորդ, որ ասի, որ «թագավորը մերկ է»:

«... Որ մեր ժողովրդի համար գին չունի այն, ինչ որ ունի. այլ այն, ինչ որ չունի կամ չէ կարող ունենալ, այնուամենայնիւ ձգտում է ունենալ»:

Ինչ օգուտ գանգատվելեն՝ անհասկանալի ըսեմ, տարօրինակ ըսեմ, ինչ ըսեմ. դարեր սպասված անկախությունը ունեցանք և ինչ տեսանք, տեսանք, որ մենք մեր հայրենիքը չենք սիրում, ինչու՞, որպեսզի նյութ ենք սիրում, հոգին մոռցած ենք. ահռելի Սովետական Միությունը փոշիացավ, որպեսզի 70 տարիներու ընթացքին հոգին մեռել էր, աճում էր մարմինը, նյութը, և այսօր այդ հսկա երկիրի հիշողությունն անգամ զզվանք է պատճառում, մասնիչներու, լրտեսներու, ստրուկներու երկիր, իզուր չէր, որ մեկ բառով Սովետական Միությունը կոչվում էր բանտ:

Տես՝ էջ 9

Ճարտարապետություն

Հյուրանոց «Արմենիա», Մոսկվա

ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ
Ակադեմիկոս

Հայ ճարտարապետների ներդումը Ռուսաստանում ընդհանրապես եւ Մոսկվայում մասնավորապես՝ մեծ է: Նախահեղափոխական շրջանում միայն Ալեքսանդր Թամանյանն է եղել աչառու իր ակտիվությամբ ու թողած գործերով. դա Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետական բաժանմունքն ավարտելուց անմիջապես հետո էր, 1904 թ.: Նրա այդ շրջանի գործերը ցրված էին Պուլկինոյում, Յարոսլավլում, Օրյոլում: Նշանակալից եղավ նրա ստեղծած Շչերբակովի տունը Մոսկվայում, որը մինչեւ հիմա էլ կա. դա խիստ դասական ոճով հղացած գործ է, գրագետ, մտածված ամենայն մանրամասնություններով ինչպես հատակագծում, այնպես էլ ու հատկապես ծավալային-մակերեսային լուծումներում. այդ գործի համար Ալեքսանդր Թամանյանը ընտրվում է Գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս. դա 1914 թ. էր, այն ժամանակ նա 36 տարեկան էր: Ռուսաստանում Թամանյանի իրականացրած բոլոր գործերը եղել են կամ դասական-հունական ոճի, կամ էլ օգտագործելով ռուսական ճարտարապետական ֆորմաները. որքան գիտեմ, այդ շրջանում հայկական ոճի որեւէ գործ նա չի ստեղծել. հայկական ոճը եւ հայ մտածողությունը ընդհանրապես նրա մոտ հայտնվում է, այն էլ շոնդալից կերպով, Հայաստան տեղափոխվելուց հետո միայն, 1921 թ.:

Երեսնական թվականների սկզբներին Մոսկվայում է հայտնվում Կարո Հալաբյանը: Դեռ Երեւանում եղած ժամանակ նա մի կարճ ժամանակ տարվեց նորահայտ կոնստրուկտիվիզմով՝ միայն ուղիղ գծեր ու հարթ պատեր՝ թողնելով այդ ոճով ստեղծված մի քանի հետաքրքրական գործեր, այդ թվում եւ այն շենքը, որտեղ հիմա Ռուսական թատրոնն է: Մոսկվայում նրա երեւալը նշանավորվեց այն ժամանակվա համար իրադարձություն համարվող Սովետական բանակի թատրոնի հսկա շենքի ստեղծմամբ: Զարմանալին այն էր, ափսոսալին նաեւ, որ այս ակնհայտորեն օժտված անհատականությունը տուրք տալով այն ժամանակների մոդայիկ ֆորմալիստական տրամադրություններին, ստեղծեց այդ հսկա կառույցը, որի ճարտարապետությունը ոչ ռուսական է, ոչ հայկական եւ անգամ ոչ էլ դասական, կառույց, որը նման է ամեն ինչի, բացի թատրոնից: Դա էկլեկտիկա էր ամենից առաջ իր մտացածին հատակագծով՝ հինգ աստղանի: Այդ շենքը հիմա էլ կա, որը չի զարդարում մայրաքաղաքը: Ճարտարապետական տեսակետից նշանակալից եղավ նրա նախագծով Սամվել Սաֆարյանի հետ ստեղծված հայկական տաղավարի շենքը Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի տարածքում. դա մաքուր հայկական ոճով ստեղծված գործ էր, իր հանդիսավոր, դեկորատիվ տեսքով դեռ հեռվից իսկույն հայտնվում էր ուշադրության կենտրոնում: Բայց գտնվելով ցուցահանդեսի տարածքում, այս հետաքրքրական ու միակ հայկական՝ ոճով արված գործն այդպես էլ չմտավ քաղաքի ընդհանուր ճարտարապետական անսամբլի մեջ:

Ես գոնե Հալաբյանի ամենանշանակալից գործը հակված եմ համարելու պատերազմից հետո Հայաստանի նորաստեղծ գիտությունների ակադեմիայի հսկա շենքի նախագիծը. դա զուտ հայկական ոճով ու բոլորովին նոր, անսպասելի գաղափարներով հագեցած նախագիծ էր. դա հայտնագործություն էր, վերին աստիճանի հետաքրքրական միտք, դա հայկական միջնադարն էր: Ափսոսում եմ, այն էլ շատ, որ այդ մտահղացումը այդպես էլ մնաց չիրականացված: Այդ նախագիծը մտածել է տալիս. ամբողջ կյանքում օտարության մեջ գտնվելով հանդերձ որքան խորն է եղել նրա՝ Հալաբյանի մեջ զգացողությունը հայկական ճարտարապետության ընդհանրապես եւ վաղ միջնադարի՝ հատկապես: Որտեղ է այդ նախագիծը հիմա, չգիտեմ, բայց հարկ է, որ գտնվի, մեջտեղ բերվի, դա շատ օգտակար կլինի, կարծում եմ, ուսանողների, երիտասարդ ճարտարապետների համար:

Ուրիշ հայ ճարտարապետների գործունեության մասին Մոսկվայում ինձ հայտնի չեն: Հետեւությունը պարզ է. հայկական ազգային ճարտարապետության ավանդույթներով ստեղծված շենքեր, կառույցներ Մոսկվայում չկան:

Եվ ահա անակնկալ. 2002 թ. հոկտեմբերի կեսերին մոսկովյան թերթերը ազդարարում են, ոչ առանց խանդավառության, օրվա ամենանշանակալից իրադարձությունը՝ «Արմենիա» հյուրանոցի հանդիսավոր բացումը մայրաքաղաքի կենտրոնում, «Թատերական» կոչված փողոցում, հանրահայտ Փոքր թատրոնի շարքում: Այդ հյուրանոցի ճարտարապետը Սարգիս Գուրզադյանն էր:

Հյուրանոցը «շքեղների» կատեգորիայից էր, հինգ աստղանի: Հյուրանոց, որի համար պատվիրատուները էն գլխից որոշել էին ոչինչ չխնայել: Դա կնշանակի հիմնականը սաստանում Թամանյանի իրականացրած բոլոր գործերը եղել են կամ դասական-հունական ոճի, կամ էլ օգտագործելով ռուսական ճարտարապետական ֆորմաները. որքան գիտեմ, այդ շրջանում հայկական ոճի որեւէ գործ նա չի ստեղծել. հայկական ոճը եւ հայ մտածողությունը ընդհանրապես նրա մոտ հայտնվում է, այն էլ շոնդալից կերպով, Հայաստան տեղափոխվելուց հետո միայն, 1921 թ.:

Երեսնական թվականների սկզբներին Մոսկվայում է հայտնվում Կարո Հալաբյանը: Դեռ Երեւանում եղած ժամանակ նա մի կարճ ժամանակ տարվեց նորահայտ կոնստրուկտիվիզմով՝ միայն ուղիղ գծեր ու հարթ պատեր՝ թողնելով այդ ոճով ստեղծված մի քանի հետաքրքրական գործեր, այդ թվում եւ այն շենքը, որտեղ հիմա Ռուսական թատրոնն է: Մոսկվայում նրա երեւալը նշանավորվեց այն ժամանակվա համար իրադարձություն համարվող Սովետական բանակի թատրոնի հսկա շենքի ստեղծմամբ: Զարմանալին այն էր, ափսոսալին նաեւ, որ այս ակնհայտորեն օժտված անհատականությունը տուրք տալով այն ժամանակների մոդայիկ ֆորմալիստական տրամադրություններին, ստեղծեց այդ հսկա կառույցը, որի ճարտարապետությունը ոչ ռուսական է, ոչ հայկական եւ անգամ ոչ էլ դասական, կառույց, որը նման է ամեն ինչի, բացի թատրոնից: Դա էկլեկտիկա էր ամենից առաջ իր մտացածին հատակագծով՝ հինգ աստղանի: Այդ շենքը հիմա էլ կա, որը չի զարդարում մայրաքաղաքը: Ճարտարապետական տեսակետից նշանակալից եղավ նրա նախագծով Սամվել Սաֆարյանի հետ ստեղծված հայկական տաղավարի շենքը Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի տարածքում. դա մաքուր հայկական ոճով ստեղծված գործ էր, իր հանդիսավոր, դեկորատիվ տեսքով դեռ հեռվից իսկույն հայտնվում էր ուշադրության կենտրոնում: Բայց գտնվելով ցուցահանդեսի տարածքում, այս հետաքրքրական ու միակ հայկական՝ ոճով արված գործն այդպես էլ չմտավ քաղաքի ընդհանուր ճարտարապետական անսամբլի մեջ:

Ես գոնե Հալաբյանի ամենանշանակալից գործը հակված եմ համարելու պատերազմից հետո Հայաստանի նորաստեղծ գիտությունների ակադեմիայի հսկա շենքի նախագիծը. դա զուտ հայկական ոճով ու բոլորովին նոր, անսպասելի գաղափարներով հագեցած նախագիծ էր. դա հայտնագործություն էր, վերին աստիճանի հետաքրքրական միտք, դա հայկական միջնադարն էր: Ափսոսում եմ, այն էլ շատ, որ այդ մտահղացումը այդպես էլ մնաց չիրականացված: Այդ նախագիծը մտածել է տալիս. ամբողջ կյանքում օտարության մեջ գտնվելով հանդերձ որքան խորն է եղել նրա՝ Հալաբյանի մեջ զգացողությունը հայկական ճարտարապետության ընդհանրապես եւ վաղ միջնադարի՝ հատկապես: Որտեղ է այդ նախագիծը հիմա, չգիտեմ, բայց հարկ է, որ գտնվի, մեջտեղ բերվի, դա շատ օգտակար կլինի, կարծում եմ, ուսանողների, երիտասարդ ճարտարապետների համար:

Ուրիշ հայ ճարտարապետների գործունեության մասին Մոսկվայում ինձ հայտնի չեն: Հետեւությունը պարզ է. հայկական ազգային ճարտարապետության ավանդույթներով ստեղծված շենքեր, կառույցներ Մոսկվայում չկան:

Եվ ահա անակնկալ. 2002 թ. հոկտեմբերի կեսերին մոսկովյան թերթերը ազդարարում են, ոչ առանց խանդավառության, օրվա ամենանշանակալից իրադարձությունը՝ «Արմենիա» հյուրանոցի հանդիսավոր բացումը մայրաքաղաքի կենտրոնում, «Թատերական» կոչված փողոցում, հանրահայտ Փոքր թատրոնի շարքում: Այդ հյուրանոցի ճարտարապետը Սարգիս Գուրզադյանն էր:

Հյուրանոցը «շքեղների» կատեգորիայից էր, հինգ աստղանի: Հյուրանոց, որի համար պատվիրատուները էն գլխից որոշել էին ոչինչ չխնայել: Դա կնշանակի հիմնականը հուզմունքի... Երկար եմ սպասել այդ պահին... Անցա օթեւայի առջեւից, կտրեցի փողոցն ու դանդաղ, անշտապ թեքվեցի դեպի Թատերական փողոցը... Ու մեխվեցի տեղում... Գեղեցկությունը տեսնելու համար ակնքարը բավական է... Դիմացս «Արմենիան» էր իր ողջ բարձրությամբ... Ես ցնցված էի, աչքիս հրաբխի պես մի պատկեր էր, իմ հրճվանքին չափ չկար... Ներքեւում առաջին հարկի գրանիտե հզոր սյունաբարն է՝ խիստ դասական ոճով, նրանից վեր վեց հարկերն են իրար բարձրացող... ճչալու աստիճան հայկական... Ու առաջին ցնցումը, ու հրճվանքս նաեւ՝ սացվել է, սիմբիոզը սացվել է... Այն էլ ինչպես... Իմ բոլոր տարակուսանքները ցնդեցին մի ակնքարքում, դիմացս սիմբիոզն է զուտ դասականի, զուտ հայկականի հետ... Սացվեց ամենից առաջ շնորհիվ դրա. որպես արվեստ այդ երկու ճարտարապետական ուղղությունների կատարելության... Սա նոր բան է... Ճարտարապետությունը, հնագույնն արվեստներից, չի սպառել իրեն... Չի էլ սպառի, երբե՛ք... Ի՞նչ հրաշք է դա, այդ ճարտարապետություն կոչվածը...

Փոքր-ինչ սթափվելուց հետո գալիս է ըմբռնելու, հասկանալու պահանջը: Գալիս է առաջին տպավորությունը. հրաբալիորեն է մտածված ընդհանուր կոմպոզիցիան ճակատի, բոլոր վեց հարկերի, վերից վար, որպես մի ամբողջություն: Տիրապետող տրամադրությունը, հիմնական մղումը պարզությունն է, պարզությունը ծայր աստիճանի: Տոնականությունը նաեւ, հանդիսավորությունը: Հսկա վարագույր լինի կարծես, պանոն՝ վիթխարի բեմի առջեւից կախված... Որոնումները, անուն գիտերներն իզուր չեն անցել, սացվել է այն, ինչ կոչվում է հասակ համաձայնվածություն, հավասարակշռվածություն բոլոր մասերի, կոմպոնենտների միջեւ: Ներդաշնակություն, հարմոնիա առանձին կոմպոզիցիոն խմբերի միջեւ: Տիրապետողն այդ ամենի մեջ եղել է ռիթմը, զգացողությունն անսխող ռիթմի եղել է որոշիչ, ներքին պահանջ բոլոր մեծ ու փոքր խմբերում, կոմպոզիցիաներում հատկապես: Այդ տրամադրությանը՝ հանդիսավորություն, վեհություն՝ խիստ է նպաստել առատությունը վերից վար իջնող ռիթմիկ գծերի, տարբեր լայնության շերտերի, բոլոր խմբերում. հետաքրքրական հայտնագործություն:

Այդ ճակատը Հայաստանն է, արեւն ու պատկերը Հայաստանի... Հայաստանում երբեք չեղած մարդն այդ ճակատով կհասկանա, թե ինչ է Հայաստանը... Վերից վար բոլոր վեց հարկերը մի հարթության վրա են, ճիշտ կեսում մի երկար, ճակատի ամբողջ երկարությամբ ձգվող նեղ հիվով բաժանված երկու մասի, ամեն մի մասում երեքական շարք ուղղանկյուն մեկ փեղկանի պատուհաններ են: Բոլոր պատուհանները երեք կողմից երիզված են հուլունքաբար նեղ երիզներով: Ամենավերին շարքը կամարակապ է շենքի ամբողջ երկարությամբ ձգվող, կամարները հենված են բավական լայն հիվերի վրա, դրանք էլ իրենց հերթին նստած են հիմիկ հայկական կլանաձեւ զույգ սյուների վրա իրարից անջատված վերից վար իջնող հրաբալի զարդաքանդակ մակերեսով. դա ընկալվում է ինչպես երկարուկ նախշաձեւ կարպետ՝ սյուների արանքում կախված: Այդ սյունաբարը ձգվում է վերջին երեք հարկերի ողջ երկարությամբ: Հրաբալի կամարների գծանկարը, բոլորն էլ ծածկված վերին աստիճանի նուրբ զարդաքանդակ պատկերներով: Վերեւից, կիսաբրջան կամարների արանքում մեկական սկավառակներ են, շատ մեծ, երկու կողմից կամարներին շոշափող. այդ սկավառակները նույնպես ծածկված են տեսակ-տեսակ օրնամենտներով: Այդ ամենի հետ հրաբալի ներդաշնակության մեջ են գտնվում վերջին, վեցերորդ հարկի միակ դուռ-պատուհանին հարող կիսաբրջան-դեկորատիվ պատգամբները՝ ալիքաձեւ մետաղական հանգույնն արվեստներից, չի սպառել իրեն... Չի էլ սպառի, երբե՛ք... Ի՞նչ հրաշք է դա, այդ ճարտարապետություն կոչվածը...

Փոքր-ինչ սթափվելուց հետո գալիս է ըմբռնելու, հասկանալու պահանջը: Գալիս է առաջին տպավորությունը. հրաբալիորեն է մտածված ընդհանուր կոմպոզիցիան ճակատի, բոլոր վեց հարկերի, վերից վար, որպես մի ամբողջություն: Տիրապետող տրամադրությունը, հիմնական մղումը պարզությունն է, պարզությունը ծայր աստիճանի: Տոնականությունը նաեւ, հանդիսավորությունը: Հսկա վարագույր լինի կարծես, պանոն՝ վիթխարի բեմի առջեւից կախված... Որոնումները, անուն գիտերներն իզուր չեն անցել, սացվել է այն, ինչ կոչվում է հասակ համաձայնվածություն, հավասարակշռվածություն բոլոր մասերի, կոմպոնենտների միջեւ: Ներդաշնակություն, հարմոնիա առանձին կոմպոզիցիոն խմբերի միջեւ: Տիրապետողն այդ ամենի մեջ եղել է ռիթմը, զգացողությունն անսխող ռիթմի եղել է որոշիչ, ներքին պահանջ բոլոր մեծ ու փոքր խմբերում, կոմպոզիցիաներում հատկապես: Այդ տրամադրությանը՝ հանդիսավորություն, վեհություն՝ խիստ է նպաստել առատությունը վերից վար իջնող ռիթմիկ գծերի, տարբեր լայնության շերտերի, բոլոր խմբերում. հետաքրքրական հայտնագործություն:

Այդ ճակատը Հայաստանն է, արեւն ու պատկերը Հայաստանի... Հայաստանում երբեք չեղած մարդն այդ ճակատով կհասկանա, թե ինչ է Հայաստանը... Վերից վար բոլոր վեց հարկերը մի հարթության վրա են, ճիշտ կեսում մի երկար, ճակատի ամբողջ երկարությամբ ձգվող նեղ հիվով բաժանված երկու մասի, ամեն մի մասում երեքական շարք ուղղանկյուն մեկ փեղկանի պատուհաններ են: Բոլոր պատուհանները երեք կողմից երիզված են հուլունքաբար նեղ երիզներով: Ամենավերին շարքը կամարակապ է շենքի ամբողջ երկարությամբ ձգվող, կամարները հենված են բավական լայն հիվերի վրա, դրանք էլ իրենց հերթին նստած են հիմիկ հայկական կլանաձեւ զույգ սյուների վրա իրարից անջատված վերից վար իջնող հրաբալի զարդաքանդակ մակերեսով. դա ընկալվում է ինչպես երկարուկ նախշաձեւ կարպետ՝ սյուների արանքում կախված: Այդ սյունաբարը ձգվում է վերջին երեք հարկերի ողջ երկարությամբ: Հրաբալի կամարների գծանկարը, բոլորն էլ ծածկված վերին աստիճանի նուրբ զարդաքանդակ պատկերներով: Վերեւից, կիսաբրջան կամարների արանքում մեկական սկավառակներ են, շատ մեծ, երկու կողմից կամարներին շոշափող. այդ սկավառակները նույնպես ծածկված են տեսակ-տեսակ օրնամենտներով: Այդ ամենի հետ հրաբալի ներդաշնակության մեջ են գտնվում վերջին, վեցերորդ հարկի միակ դուռ-պատուհանին հարող կիսաբրջան-դեկորատիվ պատգամբները՝ ալիքաձեւ մետաղական հանգույնն արվեստներից, չի սպառել իրեն... Չի էլ սպառի, երբե՛ք... Ի՞նչ հրաշք է դա, այդ ճարտարապետություն կոչվածը...

«Հայկական» ճակատի ճիշտ կեսբարձրությունից, երրորդ հարկի վերեւից, շենքի ամբողջ երկարությամբ անցնում է շատ նուրբ, գրեթե գիծ հիշեցնող ֆիվ-կարնիզը, որին ներքեւից հարում է կիսաբրջան թեթեւ կամարների շարքն առանց սյուների, հարթ պատեր են միայն, եւ ինչքան լավ է, որ այդպես է՝ առանց սյուների կամարների այդ շարքը շենքի ողջ երկարությամբ ձգված նրբագեղ աղջիկների մի նազելի պար լինի ասես, թեւերի, ուսերի պար... Տոնականություն, համակ հանդիսավորություն... Անվերջ կարող են նայել այդ պարին ու չհագենալ...

Այս ճակատը լուծել է քաղաքաշինական մի խնդիր նաեւ: Հյուրանոցի աջ կողմից եղել է անցյալներում կառուցված մի շենք, դասական ոճով, որը գտնվում է լավ վիճակում, եւ խնդիր էր դրված. հյուրանոցի ճարտարապետությունը պետք է ընդգրկի այս հանգամանքը եւս, որ հյուրանոցը դառնա մի տեսակ շարունակություն արդեն գոյություն ունեցող շենքի: Եվ ինչ, հակառակ սպասածի, սացվեց, այն էլ ինչպե՛ս. ճարտարապետորեն այդ երկու շենքերը՝ հինը եւ նորը, դարձան լրիվ համահունչ, մի տեսակ շարունակությունը մեկը մյուսի, անգամ ճակատների գույների տարբերությունն է աննկատ: Նույնիսկ պետք չէ ճարտարապետ լինել հասկանալու համար, թե ինչքան դժվար է սեփական մտահղացումը հարմարեցնել, հաշտեցնել արդեն եղածի հետ...

Հայտնի բան է՝ ճարտարապետները կարողանում են իրենց նախագծերը թղթի վրա ներկայացնել արտիստորեն, շքեղ տեսքով, այնքան, որ երազում են միայն իրականացվածը տեսնել գոնե հնարավորին չափ մոտ նախագծի գեղեցկությանը: Նայելով «Արարատի» կամարների, սյուների ռիթմիկ շարքին, իդեալական հարթ, հայելու պես ողորկ պատերին, մտածում ես ակամա, որ սա այն բացառիկ դեպքն է երեւի, երբ իրականը ոչ միայն հավասարվել, այլեւ նույնիսկ ավելի շքեղ, ավելի հմայիչ է սացվել, քան թղթի վրա նկարվածը...

Հարթ պատերը... Դե, ինչպես չիպարսանալ. այդ պատերը, անթիվ անհաշիվ փորագրությունները, կամարների օրնամենտային զարդաքանդակները, վերից վար իջնող շատ նեղ, շատ նուրբ առվակներն ուղիղ, կարծես քանոնով քաշված... Անհնար է հայացքը պոկել այդ պատից... Այո, այդ ամենը մեր հայ վարպետների գործն է, Հայաստանից բերվել է մի ամբողջ խումբ, քսան թե երեսուն մարդ, բոլորն էլ հմուտ վարպետներ, քարի շունչը զգացող, ու նրանք, մի ձեռքում բրիչը, մյուսում՝ մուրճը, օրն ի բուն աշխատել են, հարթեցրել պատերը, քանդակել նախշերն այնտեղ, վերեւում, ամբողջ օրը վար չիջնելով վերելակներից... Մեծ խորհուրդ կա այդ ամենի մեջ. դարեր, դարեր են անցել, բայց հայ մարդը, հայ վարպետը սերնդեսերունդ իր հետ է տարել քարի խորհուրդը, քարի հմայքն ու բերել, հասցրել է մինչեւ մեր օրերը... Քարի հայ վարպետն իրավունք չունի սխալվելու, իրավունք չունի վրիպելու... Հոգին քարին ծուլված...

Գուրզադյանը ճարտարապետական զարդաքանդակների վարպետ է, նա լավ գիտի հայկական օրնամենտը, հասու է նրա ճոխությանը, անսահման հնարավորություններին: Ահա թե ինչու չպիտի զարմանալ «Արմենիայի» զարդաքանդակներով այդքա՛ն հագեցվածությունից: Ավելին՝ շատ դեպքերում հեղինակին հաջողվել է զարդաքանդակը, բառացիորեն չընդօրինակելով, դարձնել ճարտարապետական ձեւ. այդ տեսակետից այստեղ նորություն, հայտնագործություններ շատ կան: Հիմնականը, այնուամենայնիվ, զարդաքանդակի կոմպոզիցիան է, ինչը նկատելի է դառնում իսկույն, նա լավ է զգում այն, ինչ կոչվում է հարմոնիա, ներքին ռիթմ, ֆակտուրա, լավ գիտի քարի գաղտնիքը. փոխվեց քարը, կփոխվի բնույթը զարդաքանդակի, գիտի հնարավորությունները մեր վարպետների, այս ամենը դառնում է որոշիչ հիմնական գաղափարը կոմպոզիցիան ստեղծելիս: Սեղանիս են նրա վերջին տարիների գործերից մեկի՝ Աղավնաձորի վանքի զարդաքանդակների լուսանկարները՝ ի՞նչ ռիթմ, ի՞նչ հարմոնիա, դրանցից դժվար է հայացքդ պոկել... Դա ինձ օգնում է փարատելու փոքր ինչ իմ մոայլ տրամադրությունը... Ի դեպ, Գուրզադյանի այդ գործը՝ Աղավնաձորի վանքը կարող է դառնալ, կարծում եմ, առանձին խոսակցության առարկա:

«Արմենիան» միակ կառույցն է այսօրվա Մոսկվայում հայկական ճարտարապետության ոգով ստեղծված: Կարո՞ղ է սա ունենալ շարունակություն. հազիվ թե: Այսօրվա Մոսկվայի կառուցապատումը գնում է խիստ ընդգծված աբստրակտ-մոդեռնիստական ոգով, հիմնականում դրսից բերված նախագծերով: Վերջին նորությունը պայթեց ինչպես ռումբ. հանրահայտ Բալշոյը, Կրեմլի դեմ ու դեմ, քանդվելու է, մարվելու է հիմնովին, այդ թվում անցյալներում ստեղծված այդ մոայլ, բետոնե տխրահռչակ հսկա բնակելի շենքը որպես թե կոնստրուկտիվիզմի ոճով ստեղծված, ու տեղում, այդ կղզու վրա բարձրացվելու է միանգամից հինգ երկնաքեր, բոլորն էլ հյուրանոցներ, բոլորն էլ ուշադրաժամանակակից, խիստ ընդգծված աբստրակտ ոճով: Հեղինակն այդ ճարտարապետական կոմպլեքսի, պարզվում է, հոլանդացի է: Ես չեմ տեսել նախագիծը, բայց իմացա, որ Մոսկվայի բոլոր ճարտարապետները չէ թե հիացած, պարզապես հիպնոսացած են եղել այդ նախագծով: Արդեն այն, որ մասնաշենքերից մեկը կոչվելու է Կանդինսկի, մյուսը Մալեւիչ, շատ բան է ասում. հարյուր տարի պահանջվեց մինչեւ աբստրակտ արվեստի ինչ լինելը հասավ վերջապես մարդու գիտակցությանը... Ճիշտ այնպես, ինչպես դա եղավ Վան Գոգի հետ...

Երկու հարյուր, երեք հարյուր տարի առաջվա Մոսկվայի ճարտարապետությունում իշխողը դասական ամպիրն էր, հրաբալի մի շրջան, ես հիմա էլ, ամեն անգամ այդ էպոխայի մի գործի, մի շենքի հանդիպելիս, կանգնում եմ, գլուխս կախում ակամա ու ընկնում մտքերի մեջ... Այդ շենքերի վրա, բոլորի վրա, տախտակ է փակցված. «Պահպանվում է պետության կողմից»... Հիմա աբստրակտ մտածողության էպոխան է գալիս, դա նույնպես կլինի տեւական, հետո կգա մի ուրիշ բան, բայց էկզոտիկ շեղումներ՝ հազիվ թե: Այնպես որ «Արմենիան» հայկական ոճով, այն էլ Մոսկվայի կենտրոնում, կմնա ինչպես մի իրադարձություն, որը, կարծում եմ, հազիվ թե կրկնվի երբեւիցե...

Մեր տաճարները, վանքերը երկրաշարժերից են քանդվել: Մոսկվան չի գտնվում երկրաշարժային գոտում. համենայն դեպս հիմնադրման օրից մինչեւ հիմա, շուրջ հազար տարի, այդ քաղաքին ոչինչ չի պատահել: Այնպես որ երկրաշարժից կործանվելու վտանգը «Արմենիային» չի սպառնում... Հազար տարի հետո «Արմենիան» կդառնա Մոսկվայի համար, կարծում եմ, նույնքիսի մի հնություն, լավ վիճակում գտնվող՝ երկաթ-բետոնով է կառուցված վերջապես՝ ու հավանաբար «պետության կողմից պահպանվող», ինչպիսին են հիմա մեր միջնադարյան կիսաքանդ վանքերը մեզ համար... Ամենաշատը, որը կարող է պատահել, եթե գալիք ժամանակներում հորինվի վեցաստղանի հյուրանոցի գաղափարը կամ դրա նման մի բան, եւ ուզենան «Արմենիան» դարձնել էլ ավելի շքեղ, էլ ավելի հարուստ, այդ դեպքում ձեռք կտան, կփորձեն փոխել երեւի ներսը միայն, բայց դուրսը, ճակատը՝ հազիվ թե... Այդ ճակատը, այդ խրախճանքը կմնա հավերժ, քանի կա մարդը, քանի կա տիեզերական այդ հրաշքը՝ Արեւը այս երկնքում...

«Արմենիան» նախագծային անունն էր, հյուրանոցի այսօրվա տերերի ցանկությամբ նրան տրվեց ուրիշ անուն՝ «Արարատ Հայաստ»

Կերպընկալ ձեւերու փիլիսոփայ վարպետը՝ Արթօ

ԵՐՈՒՍԴ ԱՂԱՏԵՆ

Տարին՝ 1981 թուականն էր: Արդէն Արթօ Ցաւմաճեանին ծանօթացած էի վեց տարիներ առաջ, թէեւ իր հմայիչ արուեստին նկատմամբ հիացումս սկսած էր շատ կանուխէն, նոյնիսկ մեր անձնական ծանօթացումէն առաջ: Դիթրոյթի մէջ Կոմիտասի արձան մը բանդակելու առաջարկած էի իր անունը եւ ընդունած էր ան:

Սակայն, երբ օդակայանին մէջ դիմաւորեցի զինք, նայեցայ իր սուր աչքերէն ճառագայթող խորհրդաւոր ժպիտին՝ յանկարծ բղձկում մը ոգեւեց զիս, եւ լալու անզուսպ ցանկութիւնս յաղթահարելով, ողջագուրուեցայ իրմէ: Արդէն հեռուստատեսային տարափը ողողած էր միտքս- ինչո՞ւ հայրենի արուեստագէտ մը եկած էր հոգեկան խողանութեամբ յատկանշուող այս աշխարհամասը, ինչո՞ւ հասած էր առաւելաբար սեւամորթներէ բնակուած այս քաղաքը՝ Կոմիտասի ուրիշ արձան մըն ալ բանդակելու, զայն սահմանելով կամ դասաղարտելով երկրորդ ախոռի մը: Այս ճարտարարուեստական քաղաքին կեդրոնը ո՞վ ոգիի հասկնար կամ ճանչնար Կոմիտասը, ո՞վ ոգիի ընկալէր անոր յատիպական երկնառակ ոգեգամը:

Արթոյի սիրտին մէջ տակաւին կը մխար ճանի մը տարի առաջ Երեւանի մէջ ոգեահաց սահմոկեցուցիչ դէպքի մը տխուր յիշատակը: Արդարեւ, խորհրդային իշխանութիւնները ոդեսդզրով տաղալած էին Արթոյի ճանդակած եւ Կոմիտասի փողոցին վրայ կանգնեցուցած մէկ ինքնատիպ արձանը, զայն նկատելով իբրեւ տարտիտ արուեստ, բոլորովին խորթ սոցիալիստական ռէալիզմի, որ օրուան կարգախօսն էր այդ շրջանին:

Այդ դէպքէն ետք Արթօ որոշած էր ընտրել իր հերոսին՝ Կոմիտասի նման ախոռը, նախքան որ փշրէին նաեւ իր ազաս ոգին եւ բոլորովին ուրոյն արուեստը: Այդպէս, լքած էր իր նախահայրերուն երկիրը, առանասխիլ ըլլալով անոր ենթահողէն եւ ձեռնարկած էր իր թափառումին, վերագտնելու համար ինքզինք եւ երկրագունտին վրայ գտնելու համար անկիւն մը, ուր հասկնային իր արուեստը, կիսէին իր յոյզերը եւ լսէին մարդկային կանչը:

Այդ թուականէն ի վեր համարձակութիւնը չեմ ունեցած խոստովանելու Արթոյին մեր ողջագուրման յուզումներս ու մանաւանդ՝ եղերական այդ կացութեան վրայ լալու անզուսպ փափաքս:

Արձանի բանդակման օրերուն արուեստագէտին հետ բաժնեցի անոր ստեղծագործական ոգորումները ու նաեւ այն տառապանքը, զոր ան ստրեցաւ արուեստի անհասկացողութեան պատին դիմաց:

Այսօր ալ իր Կոմիտասը միայնակ կանգնած է Դիթրոյթ քաղաքին կեդրոնը, էնցած իր օտար շրջապատէն ու կարծէք հայեացքը ուղղած հեռուն՝ աղերսելով զինք «ստեղծող»-ի վերադարձին:

Կոմիտասը եղած է Արթոյին կարօտի կանչը, անոր յաւիտենական ուղեկիցը՝ ներշնչումներուն, նկրտումներուն, մարտնչումներուն եւ սաւառնումներուն մէջ. անդուլ եւ ազնիւ կիրքով մը ան քանիցս ստեղծած է իր Կոմիտասը, վերաստեղծած ու կերպարանափոխած է զայն, ու հազար ու մէկ ձեւերով զայն դարձուցած է ինքնաարտայայտման միջոց՝ առանց երբեք կարենալ սպառելու նոր կոմիտասներ յօրինելու իր ցանկութիւնը: Կոմիտասը Արթոյի հոգեկան տարբերակն է, կամ՝ ընդհակառակը:

Մեր հանդիպման այդ հոգեցունց օրէն ի վեր այս խոնարհ արուեստագէտը արդէն ինքզինքն գեղարուեստի աշխարհին մէջ իր ցուցահանդէսներով, թանգարանային հաւաքներով, հրատարակութիւններով եւ Եւրոպայի եւ Ամերիկայի տարբեր կեդրոններուն մէջ յօրինած իր հզօր կոթողներով:

Արթոյի արուեստը կը բխի մեր երկրին հողին ընդերքներէն, հին Ուրարտուէն եւ իր մէջ կը պարփակէ դարէ տուէն եւ իր մէջ կը պարփակէ դարէ դար հզօրացող իր ցեղին առհասարակ ուժը: Ան շրջած է հայոց լեռները, անցած է մեր երկրի հովիտներէն, իր արուեստագէտի պատարագն է մատուցած կիսափոյլ մատուռներու գմբէթին տակ, զուգած է կոտրուած խաչքարերու հետ, յուշարձաններու բեկորներուն հետ եւ իր ձեռքերով իսկ պեղած հնագիտական արժէքներուն



«Զոյգ»

հետ: Այդ փորձառության ներշնչումներով հարստացուցած է իր արուեստը, սակայն ան կը մնայ յաւիտենական ախոռեալը, որ պատասխաններ կ'որոնէ իր ժողովուրդն ու մարդկութիւնը խռովող հարցերուն համար: Ան նը խռովող հարցերուն համար: Ան սարսափով կը նայի մարդկութեան առագային ու կարծէք երկրագունտը իր սեփական ուսին շալկած՝ կը ճամփորդէ տիեզերքի անվերջանալի ճանապարհներուն վրայ:

Այսօր, իր եօթանասունամեակի հանգրուանին ան արդէն գտած է իր տեղը արուեստի պատմութեան մէջ, սակայն իր մէջ անհանգիստ արուեստագէտը կը շարունակէ պեղել նոր տեսիլներ, կը մաքառի ի խնդիր նոր հորիզոններու նուաճման՝ արտակարգ կորովով եւ ուժականութեամբ:

Անոր կեանքը հանդիսացած է ոդիսական մը ախոռի, հալածանքներու, ներքին ու արտաքին տառապանքներու, յարատեւութեան եւ յաղթանակներու: Այդ արտակարգ ոդիսականը ընդգրկուած է նոր հրատարակուած գեղարուեստական հատորի մը մէջ, որուն վերնագիրն է «Արթօ- Յետադարձ ակնարկով» («Arto Retrospective»):

Արուեստի սիրահարները արդէն այսօր գրեթէ անտարբեր դարձած են՝ գեղարուեստական հրատարակութեանց շարքը: Հրատարակչական հոգեկան խողանութեամբ յատկանշուող այս աշխարհամասը, ինչո՞ւ հասած էր առաւելաբար սեւամորթներէ բնակուած այս քաղաքը՝ Կոմիտասի ուրիշ արձան մըն ալ բանդակելու, զայն սահմանելով կամ դասաղարտելով երկրորդ ախոռի մը: Այս ճարտարարուեստական քաղաքին կեդրոնը ո՞վ ոգիի հասկնար կամ ճանչնար Կոմիտասը, ո՞վ ոգիի ընկալէր անոր յաւիտենական երկնառակ ոգեգամը:

Արթոյի սիրտին մէջ տակաւին կը մխար ճանի մը տարի առաջ Երեւանի մէջ ոգեահաց սահմոկեցուցիչ դէպքի մը տխուր յիշատակը: Արդարեւ, խորհրդային իշխանութիւնները ոդեսդզրով տաղալած էին Արթոյի ճանդակած եւ Կոմիտասի փողոցին վրայ կանգնեցուցած մէկ ինքնատիպ արձանը, զայն նկատելով իբրեւ տարտիտ արուեստ, բոլորովին խորթ սոցիալիստական ռէալիզմի, որ օրուան կարգախօսն էր այդ շրջանին:

Այդ դէպքէն ետք Արթօ որոշած էր ընտրել իր հերոսին՝ Կոմիտասի նման ախոռը, նախքան որ փշրէին նաեւ իր ազաս ոգին եւ բոլորովին ուրոյն արուեստը: Այդպէս, լքած էր իր նախահայրերուն երկիրը, առանասխիլ ըլլալով անոր ենթահողէն եւ ձեռնարկած էր իր թափառումին, վերագտնելու համար ինքզինքն եւ երկրագունտին վրայ գտնելու համար անկիւն մը, ուր հասկնային իր արուեստը, կիսէին իր յոյզերը եւ լսէին մարդկային կանչը:

Այդ թուականէն ի վեր համարձակութիւնը չեմ ունեցած խոստովանելու Արթոյին մեր ողջագուրման յուզումներս ու մանաւանդ՝ եղերական այդ կացութեան վրայ լալու անզուսպ փափաքս:

Արձանի բանդակման օրերուն արուեստագէտին հետ բաժնեցի անոր ստեղծագործական ոգորումները ու նաեւ այն տառապանքը, զոր ան ստրեցաւ արուեստի անհասկացողութեան պատին դիմաց:

Այսօր ալ իր Կոմիտասը միայնակ կանգնած է Դիթրոյթ քաղաքին կեդրոնը, էնցած իր օտար շրջապատէն ու հանգրուանին ան արդէն գտած է իր տեղը արուեստի պատմութեան մէջ, սակայն իր մէջ անհանգիստ արուեստագէտը կը շարունակէ պեղել նոր տեսիլներ, կը մաքառի ի խնդիր նոր հորիզոններու նուաճման՝ արտակարգ կորովով եւ ուժականութեամբ:

Անոր կեանքը հանդիսացած է ոդիսական մը ախոռի, հալածանքներու, ներքին ու արտաքին տառապանքներու, յարատեւութեան եւ յաղթանակներու: Այդ արտակարգ ոդիսականը ընդգրկուած է նոր հրատարակուած գեղարուեստական հատորի մը մէջ, որուն վերնագիրն է «Արթօ- Յետադարձ ակնարկով» («Arto Retrospective»):

Արուեստի սիրահարները արդէն այսօր գրեթէ անտարբեր դարձած են՝ գեղարուեստական հրատարակութեանց շարքը: Հրատարակչական հրատարակութիւններով, հրատարակութիւններով եւ Եւրոպայի եւ Ամերիկայի տարբեր կեդրոններուն մէջ յօրինած իր հզօր կոթողներով:

Արթոյի արուեստը կը բխի մեր երկրին հողին ընդերքներէն, հին Ուրարտուէն եւ իր մէջ կը պարփակէ դարէ տուէն եւ իր մէջ կը պարփակէ դարէ դար հզօրացող իր ցեղին առհասարակ ուժը: Ան շրջած է հայոց լեռները, անցած է մեր երկրի հովիտներէն, իր արուեստագէտի պատարագն է մատուցած կիսափոյլ մատուռներու գմբէթին տակ, զուգած է կոտրուած խաչքարերու հետ, յուշարձաններու բեկորներուն հետ եւ իր ձեռքերով իսկ պեղած հնագիտական արժէքներուն հետ: Այդ փորձառության ներշնչումներով հարստացուցած է իր արուեստը, սակայն ան կը մնայ յաւիտենական ախոռեալը, որ պատասխաններ կ'որոնէ իր ժողովուրդն ու մարդկութիւնը խռովող հարցերուն համար: Ան նը խռովող հարցերուն համար: Ան սարսափով կը նայի մարդկութեան առագային ու կարծէք երկրագունտը իր սեփական ուսին շալկած՝ կը ճամփորդէ տիեզերքի անվերջանալի ճանապարհներուն վրայ:

Այսօր, իր եօթանասունամեակի

Մշակույթ

«Հիրոշիմա»

ֆանդակով (ներկայիս՝ Հերոշիմա քաղաքին մէջ, Ճափոն)։ Այստեղ եւ ահաբեկած դէմքի մը կոթնած է ափին (մօտ դիմանկարին նման), սակայն դէմքին վրայէն պայթիւնով մը դասարկուած է մէկ աչքը, իսկ միւսին բիբը կախուած կը մնայ միջոցին մէջ (Թէլէեանի «մէկ հաստիկ»-ին նման) արտայայտելու համար զարհուրանքը՝ մարդու կողմէ մարդկութեան հասցուած ահատոր չարիքին։

Արթոյի համար անըմբռնելի է տեսնել, հասկնալ եւ արտայայտել Հայոց ցեղասպանութեան արարն առանձին կերպով։ Ան այդ չարիքը աւելի կըմբռնէ համամարդկային չարիքի պարունակին մէջ, հետեւաբար իր «Հիրոշիմա»-ն նոյնանով նաեւ յուշարձան մը կը դառնայ հայկական ցեղասպանութեան նահատակներուն։ Քանի մը տարիներ առաջ, երբ կայցելէի Ստր Զօր, կրկներեւոյթի մը նման աչքիս դիմաց կը պարզուէր այդ արձանը եւ մղձաւանջային համոզումն ունէի, թէ զայն յանկարծ պիտի կարենայի տեսնել աւազաբլուրի մը բարձունքին, որովհետեւ «Հերոշիմա»-ն այնքան հարազատօրէն կը ներկայացնէ նաեւ հայկական ողբերգութիւնը եւ հաւանաբար ամենէն արտայայտիչ ու պատշաճ կոթողն է, որ օր մը գուցէ կանգնեցուի այդ անսահման անապատի մէկ բարձունքին։

Արթօ կերտած է բազմաթիւ խանդակներ, որոնք կ՚արտայայտեն մարդկութեան հաւաքական տառապանքն ու վիշտը։ Այդ շարքին մէջ կարելի է առանձնացնել մասնաւորաբար մէկը՝ «Երեք Մասները» (12), որուն տակաւին կանգուն կը մնան անդամահատուած ձեռքի մը վրայ։ Մասներուն բացուածքէն կարելի է տեսնել երկու տառապած աչքեր, որոնք կ՚արտայայտեն զարհուրանք ու զզուանք՝ հայուն դէմ գործուած նախճիրին դիմաց։

«Երեք մասներ»

Մարդկային նկարագրի խոտորումները յառաջացուցած են անձնական վիճակներ եւ ողբերգութեան իրադրութիւններ։ Այդ երեւոյթներուն անդրադարձած են հոգեբաններ եւ ընկերաբաններ ու քարոզիչներ– սակայն, հեռու քարոզչական կամ բարոյախօսական որեւէ միտումէ՝ Արթօ այդ ցաւերը անցուցած է իր արուեստի պրիսմակէն։ Այդ բնոյթի գործերու շարքին են «Թակարդուած Կերպարը» (7), «Լիւռ»-ը (46), «Մեռնող Զինուորը» (61), «Անառակ Որդու Վերադարձը» (67), «Ժամանակին Ընդմէջէն» (80), «Մարդկային Վիճակ» (142), «Խաչելութիւնը», «Անկումը» (116) եւ ուրիշներ։

Արուեստագէտին փորձառութիւնը ամբողջատիրական վարչակարգին հետ բգկտող հեգնանքով մը արտայայտուած է իր գործերուն մէջ, այսպէս, այս շարքին կը պատկանին «Մէկը եւ Ամբոխը» (125), «Ամբոխը եւ իր Կուռքը» (103), «Անանունը», «Միաձայնութիւն» (44) եւ ուրիշ ստեղծագործութիւններ։

Ինքնադիմանկար

Շատ մը աշխատանքներ, բոլորի թէ թուղթի վրայ, կը խուզարկեն ընկերային տարբեր վիճակներ ու տրամադրութիւններ։ Խմբային տիպարներով գործերը մասնաւորաբար կը ներկայացնեն մարդկային հոգիի մեկուսացումը՝ ամբոխին մէջ։ Այս սեռին մէջ ուշագրաւ գործ մըն է «Մէկը եւ Ուրիշներ»-ը, որ կը ներկայացնէ իրարու յառած երեք կերպարներ, որոնցմէ ոչ անոնց կայ չորրորդ կերպար մը՝ կանգնած առանձին, կարծէք այդ գործը կը յիշեցնէ Սարոյեանի եղերական մէկ թատերախաղը, վերնագրուած «Քառանձաւի Բնակիչները», որ անտուն եւ անտիրական դերասաններու խումբ մը արտասանած է լռուած թատրոնի մը աւերակ բեմին վրայ՝ անցեալի անկեալ փառքն ու ցիրականացած երազներու փլուզումը ողբալու։ Անոնցմէ խումբ մը հատը կը կառչին իրարու ջերմանալու համար, մինչ «թագուհի»-ն, խզուած անոնցմէ, իր արժանապատուութեան վերջին փշրանքներով՝ կ՚ուզէ առանձին հպարտութեամբ կրել իր ճակատագրին դառն վիճակը։

Պէտք է անդրադառնալ նաեւ Արթոյի գործերու սեռայնութեան (էրոս), որ թրթռացող զգայնութիւն մը կու տայ բոնգին։ «Զոյգը» (86), «Երկու Կերպարներ» (88) եւ «Էրոս 1, 2, 3» այդ բնոյթի գործեր են, որոնք աւելի լուռ տեղ մը կը գտնեն խանդակագործի աշխատանքին մէջ։ Ֆրոյդ մարդկային սեռայնութիւնը կը նկատէ առանցքային ազդակ մը մարդու աշխարհայեացքին ու գործելակերպին մէջ, եւ որպէս այդպիսին կարելի էր այդ սեռայնութիւնը արտայայտել իր անասնային տարերայնութեամբ կամ գիտական ցուրտ ճշգրտութեամբ մը, այստեղ արուեստագէտը ընտրած է երրորդ ուղի մը՝ իր նիւթը բարձրացնելով դիցաբանական համեմատութեան մը, ուր սեռային ընդգրկումները կը վերածուին աստուածային առաջադրութեան մէկ արտայայտութեան, այնպէս մաքուր ու վճիտ, ինչպէս Միքելանջելօ սեւեռած է Սիսթինեան մատուռի առաստաղին, ուր Արարիչը իր մատին կայծով կենդանութիւն կը պարգեւէ Ադամին, արարելով առաջին մարդ էակը։

Փուշէնի ներածականին մէջ յատկանշական վերլուծումներ կան, թէ ինչպէս Արթօ մարդկայնացուցած է իր արուեստը, ան յատկապէս կը նշէ, թէ արուեստագէտը գիտցած է տարանջատել մարդուն մէջ այն, ինչ որ մարդկային չէ ու ոտնձգել զայն իր արուեստին։ Վարպետը նոյնպէս հասած է միչով շատը արտայայտելու գաղտնիքին՝ եգիպտական հին ոճանդակներու պարզութեամբ, այնտեղ գիծերն ու ծաւալները այնքան բան կ՚ըսեն, որքան միջոցը, պարադոքսիմը անոնց մինջեւ, որ նոյնպէս օգտագործուած է խնայողութեամբ։

Արուեստագէտը անցած է տարբեր շրջաններէ ու հանգրուաններէ, որոնց ընթացքին ան իր ներշնչումը քաղած է իր սիրած հին վարպետներու գործերէն։ Բացի Կորիէն՝ խանդակագործ Ջիաքոմեթթի եւս տպատրած է արուեստագէտը։ Արթոյի երկարաձիգ արձանիկները կարծէք թէ յարգանքի տուրք մըն են այդ մեծ վարպետին, որուն մասին ան կ՚ըսէ. «Բնազդօրէն սիրած եմ Ջիաքոմեթթին, նախքան որ նոյնիսկ հասկնայի թէ ինչպիսի կարեւոր դէմք մըն էր ան արուեստի աշխարհին մէջ։ Կարը, որ կը միացնէ մեզ, շատ ուժգնի է եւ հարազատ»։

Ջիաքոմեթթիէն զատ արուեստագէտը կարծէք նաեւ գաղտնի զոյգեր ունեցած ըլլայ խանդակագործ Հենրի Մուրի հետ, որուն ծաւալներուն զգայնութեան էնիոյ արձագանքը կարելի է գտնել Արթոյի արուեստին մէջ։

Արթօ աւանդապահ է, նոյնքան նաեւ յառաջադիմի, իր արմատները խորապէս մխրճուած են աւանդութեան մէջ, սակայն նաեւ կ՚աւեւեն գալիքը։ Ան ինքնավստահութեամբ կը նայի ապագային՝ նուաճելու համար այն, ինչ որ դեռ պիտի գայ եւ դեռ չէ անցած մարդկային փորձառութեան սահմանումին։

«Յետադարձ Ակնարկ»-ի այս գիրքը կամփոփէ միայն Արթոյի արուեստին գլխաւոր ճիւղերուն ներկայացուցչական նմոյշները. տակաւին հարիւրաւոր ուրիշ աշխատանքներ կը մնան ցուցադրուելիք ու լոյսին ընծայուելիք։ Արուեստագէտը օժտուած է բեղուն երեւակայութեամբ, որով ստեղծած է պատկառելի վաստակ մը, որ զինք կարժանացնէ վարպետի կոչումին։ Իր երիտասարդական կորովը, իր խուզարկու միտքը եւ համամարդկային ապրումներ ընկալելու իր համապատիկ սիրտը տակաւին շատ անակնկալներ կը խոստանան արուեստի աշխարհին։

Մինչ այդ՝ այս շքեղ հատորը կը հանդիսանայ անոր թանկագին ժառանգութիւնը իր ազգին ու մարդկութեան։

Դեսրոյր, ԼՍՄ.

Բուլգակովն ընդդեմ սատանայի

Երկերի ֆրանսերէն նոր թարգմանության առիթով

Փարիզի «Մոնդ» թերթից տեղեկանում ենք, որ «Գալիմար» հրատարակչությունը լույս է ընծայել ռուս մեծ գրող Միխայիլ Բուլգակովի ընտիր երկերի ֆրանսերեն նոր թարգմանությունների երկհատոր ժողովածուն, որի ընդհանուր ծավալը 2064 էջ է։ Ժողովածուն ընդգրկում է համաշխարհային գրականության մեծարժեք գործերից մեկը հանդիսացող «Վարպետը եւ Մարգարիտան» վեպը, հեղինակի մյուս հայտնի վեպերը, թատերգությունները եւ 1926-1939 թթ. գրած նամակների ընտրանին։

1928 թ. որպես «սատանային վերաբերող վեպի սեւագրություն» ձեռնարկած «Վարպետը եւ Մարգարիտան» եզակի գործը հեղինակն ավարտեց իր մահվանից (10.03.1940) մեկ ամիս առաջ, գրեթե կոտրացած վիճակում վերջին սրբագրումները թելադրելով կնոջը՝ Ելենա Սերգեեւնային։ «Վարպետը եւ Մարգարիտան» վեպում զուգորդված են երեւակայությունն ու լրջությունը, իրատեսությունն ու ռոմանտիկ ճնարականությունը, սոցիալական երգիծանքն ու քաղաքական առակը, զվարճախոսությունն ու զուտ սատանայական մռայլությունը, վկայելով հեղինակի գրական խորագիտակությունը։

Վեպում Պիղատոսի մոտ բերված Եշուան հայտարարում է. «Ի թիվս այլ բաների, ես ասացի, որ ամենայն իշխանություն բռնություն է մարդկանց վրա, եւ որ կգա ժամանակը, երբ չի լինի ոչ կեսարների իշխանություն, ոչ որեւիցե այլ իշխանություն։ Մարդը մուտք կգործի ճշմարտության եւ արդարության թագավորություն, ուր ընդհանրապես ոչ մի իշխանություն անհրաժեշտ չի լինի»։

Ստալինիզմի արշալույսին նման արտահայտություններ գրած Բուլգակովը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մեծ չափով ենթակա դարձավ գրաքննիչների հալածանքներին։ Արդեն 1928 թ. նոյեմբերին նա հակաուտոպիական «Մենք» վեպի հեղինակ Եվգենի Զամյատինին խոստովանում էր. «Մարդկային առումով ես ոչնչացված եմ»։

1929 թ. հուլիսին Ստալինին հղած խնդրագրում Բուլգակովը գրում է, որ ԽՍՀՄ-ում եւ արտասահմանում իր համբավի ածին զուգընթաց խորհրդային մամուլում ավելանում է իր դեմ ուղղված թունոտ հրապարակումների թիվը։ Անկարող լինելով պատասխանվել, նա իշխանություններից խնդրում է իրեն թույլատրել գոնե կարճ ժամանակով մեկնելու արտասահման, բայց մերժում է ստանում։

Բուլգակովի ձեռագրերը կալանվում են, գործերը գողացվում կամ փոխակերպվում, արտասահմանում անտեսվում է նրա հեղինակային իրավունքը։ Տարագրված եղբորը՝ Նիկոլային նա 1930 թ. գրում է. «Ես արդեն կործանվում եմ եւ որեւէ օգնություն չեմ ստանում։ Քեզ պարզ ասում եմ. իմ նավը խորտակվում է։ Հարկավոր է արիաբար խորտակվել։ Խնդրում եմ ուշադրություն դարձնել այս բառերին»։

Չնայած իր վիճակին, Բուլգակովը չէր զլանում միջնորդել ուրիշների համար։ 1935 թ. հոկտեմբերին Լենինգրադից նրա մոտ եկավ բանաստեղծուհի Աննա Ախմատովան, որ-պեսզի խորհուրդ հարցնի իր որդու եւ ամուսնու ձերբակալություններից հետո։ Նա եւ Բորիս Պաստերնակը 1940 թ. ճակատագրական ձմռան վերջերին մահամերձ Բուլգակովին այցելած եւ բարոյական օժանդակություն ցույց տված անձինք էին։ Պաստերնակը, որն իր հեղինակության շնորհիվ զերծ էր մնացել քաղաքական վայրիվերումների հարվածներից, չէր թաքցնում հիացմունքը «արգելված երեւույթ» Միխայիլ Բուլգակովի հանդեպ։

Ստալինից երբեւէ պատասխան չստացած Բուլգակովը 1931 թ. մայիսին նրան գրել է. «Գրողը չի կարող լռել։ Եթե լռի, ուրեմն իսկական գրող չի եղել։ Իսկ եթե լռի իսկական գրողը, նա կմեռնի»։

Բուլգակովն այնուամենայնիվ չլռեց եւ առհավետ կենդանի կմնա։

Կոմիտաս

Սկիզբը՝ էջ 4

60 միլիոն մարդ սպանեցին աշխարհը «փրկելու» համար, չեմ գիտեր շատ է թե քիչ, ապա ի՞նչ պետք է ծներ անհոգի նյութը. չեմ ուզում շարունակել։

Վերադառնալով Յիսուսին, գիտենք, որ Նա տանջալի մահվանից 3 օր վերջ մեռելներեն հարություն առավ, և այս է, որ մեզ մխիթարում է և ապրելու հույս տալիս, որ իր հայրենակիցներուն փրկության համար ապրողին և մեռնողին գործը հարություն պիտի առնե և պիտի շարունակե օգտակար ըլլալ իր հայրենակիցներուն։ Իր ապրած կյանքը իզուր չէր, նա մեռնում է, որ մենք ապրենք։

Եթե չըլլար այդ հրաշալի հարությունը, մենք մարդ ըլլալե կը դադարեինք և կը վերածվեինք շարժվող միսի կտորներու։

Այսքան հիշելե վերջ Յիսուսը, Կոմիտասը, հոգին, արվեստը, հոգևորը, կուզեի մի քանի խոսք ըսել մեր եկեղեցիի մասին, կատարելապես գիտակցելով իմ անպատրաստությունս և անկարողությունս շոշափելու այս նյութը, բայց ես հայ եմ և Հայաստանյաց Առաքելական սուրբ եկեղեցիի անդամ։

Պարապ տեղը չէ, որ հոգևորական («հոգի» արմատեն) են կոչվում հայ եկեղեցվո սպասավորները. ես բախտը ունեցել եմ կարդալու հայ գրականության գլուխգործոցներեն Մաղաքիա Օրմանյան պատրիարքին «Հայոց եկեղեցին» և «Ազգապատումը»։

Հավանաբար իմ խոսքս կրնա հնչել առնվազն տարօրինակ։ Ես գիտեմ, որ հայ ժողովուրդը գոյություն ունի Քրիստոսի ծնունդեն շատ առաջ. «Վահագնի ծնունդի» օրերից։ Բայց ես ասեմ իմ հայ մարդու զգայնությունս, որ օրինակ Գառնիի հեթանոսական տաճարը ինձ անտարբեր չի թողնում, բայց ինձ բոլորովին չի հուզում, սիրտս չի թրրտում, ինչպես երբ դիտում եմ հայկական եկեղեցի մը, մանավանդ Հայաստանի հողի վրա, հայկական քարով կառուցված։ Եվ եկեղեցիին մեջ երբ մտնում եմ, առանց արցունքներու չեմ կարող ունկնդրել Հայր Մերը, Սուրբ Սուրբը, Տեր Ողորմեան, Ուստխ լերը։ Դարեր ի վեր մեզ հայ պահող մեր մշակույթը չէ՞ ծնված հայ եկեղեցու ծոցում։ Մեր մշակույթի մեծագույն մասը մեր եկեղեցիի սպասավորները չէի՞ն։ 2000 տարի է հայ եկեղեցիեն ավելի հայկական ի՞նչ է ստեղծել հայությունը։

Ինչպե՞ս կարող ենք խոսելով հայ մշակույթի մասին, երբ այսօր մենք հաճախ ո՛չ թե չենք սկսում հայ եկեղեցիով, այլ մոռանում ենք անգամ։ Այս շատ ընդարձակ նյութ է. բայց մեկ բան հաստատ գիտեմ, որ երբ ուսումնասիրվի և գրվի մեր ժամանակներու պատմությունը՝ պատմությունը հայ ժողովրդի, որ գրեթե ամբողջությամբ մեր ժողովրդի օրհասի և կործանման պատմությունն է, մենք նոր պիտի անդրադառնանք, որ որքան տկարամիտ և այլասերված եղած են մեր այսպես կոչված «մտավորականները», ալ չեմ ասում քաղաքական գործիչները. քիչ մը շա՛տ կըլլա՝ քաղաքական գործիչ որտեղից գտնենք հայոց մեջ. մենք շատ ունեցանք «մտավորական» քաղաքական գործիչներ, որոնք համարձակեցան մեր ժողովուրդը ղեկավարել և առաջնորդել հայենի չէ դեպի ո՞ւր (իսկ ինչո՞ւ հայենի չէ, շատ լավ էլ հայենի է, դեպի դժոխք)։ Երբ որ գրվի այդ պատմությունը, նոր պիտի երևա մեր ժողովրդի հանդեպ որքան հրեշային և հանցագործ եղել է մեր «մտավորականության» պահվածքը։ Որքան մեր եկեղեցիին արհամարհելը և անտեսելը զիրենք քեզ դեպի անդունդը։ Եվրոպական համալսարաններու այդ հեռակա ուսանողները, ավելի ճիշտ եվրոպական համալսարաններու կողքի տրճարաններու մշտական հաճախորդ հովկուլները, թամադայությամբ անշուշտ հայ քաղաքական մտքի ամենահանճարեղ ներկայացուցիչ՝ ընկ Փանջունիին։

Վերջացնեմ գրությունս, վերջին խոսքը տալով Վարդապետին.

«...բայց աննկուն բան ունենք մեր մեջ, մի անմար յոյս՝ դեպի ապագայ լուսոյ կանթեղը յառած են մեր հայացքները, դեպի այն կանթեղը, որ հայ ժողովուրդը, իր թագաւորութիւնն ու իշխանութիւնը կորցնելէն յետոյ, տարել ու կախել է բազմաբեղուն ու երկնաւէտ Արագածի գագաթը՝ երկնքի անտես առաստաղէն, անթել կապով, որ մարդիկ՝ խաւար ու աւարառու, ձեռք տալ չկարողանան, և գոնէ նորա լուսոյ նշոյլը ցայտէ մեր վերայ, և մեր ապագայ կեանքը երազենք»։

մայիս 22. 2004
Երեւան

ՆԱՏՕ-ի գագաթաժողովի նախօրյակին ԱՄՆ նախագահն այցելում է Անկարա

Դրա նպատակն ամերիկյան ծրագրերին Թուրքիայի աջակցության ապահովումն է

Մինչ Ստամբուլը պատրաստվում էր հյուրընկալել ՆԱՏՕ-ի գագաթաժողովի մասնակիցներին, իսկ Անկարան՝ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին, այդ երկու քաղաքները ցնցվեցին ահաբեկչական պայթյուններից: «Լոնդոն» նախորդ համարում տեղեկացրել էր այդ մասին: Պարզապես ասենք, որ Անկարայում պայթյունը տեղի է ունեցել այն փողոցում, որտեղ գտնվում է Բուշին իջեւանելու համար հատկացված «Հիլթոն» հյուրանոցը: Ըստ թուրքական «Ենի շաֆաքի», ահաբեկչական պայթյունի պատասխանատվությունը, որի հետեւանքով վիրավորվել է 3 ոստիկան, ստանձնել է Մարքսիստ-լենինիստ կոմունիստական կուսակցության MLKP ռազմական թեւի համարում ունեցող Աղքատների եւ ճնշվածների զինյալ մարտիկների կազմակերպությունը՝ FESK-ը:

Ինչ վերաբերում է Ստամբուլին, այս ահաբեկչական պայթյունն այնտեղ տեղի է ունեցել քաղաքի երթուղային ավտոբուսներից մեկում՝ դառնալով 4 մարդու սպանության պատճառ, իսկ 14-ը վիրավորվել են: Թեեւ Թուրքիայի ներքին գործերի նախարար Ամուն, ի պատասխան լրագրողների հարցերի նշել է, որ պայթյունների պատասխանատվությունը որեւէ կազմակերպություն չի ստանձնել, այնուամենայնիվ, «Ենի շաֆաքը» թուրքական այլ թերթերի հետ պայթյունները վերագրում է մարքսիստական կազմակերպություններին, որոնց թվում նշելով նաեւ PKK-ի իրավաժառանգորդ Քրդստանի ժողովրդավարական կոնգրեսին:

Թե ինչը պիտի դդեր մարքսիստական կազմակերպություններին ահաբեկչական գործողություններ կատարելու քաղաքային ավտոբուսում, երբ հայտնի է, որ դրա ծառայություններից հիմնականում օգտվում են հասարակության ոչ ունետ խավերը, դժվար է ասել: Բայց որ պայթյունները չեն հանգեցրել ո՛չ ՆԱՏՕ-ի գագաթաժողովի, ո՛չ էլ Բուշի այցի ծրագրի շեղումների, ակնհայտ է:

ՆԱՏՕ-ի ստամբուլյան գագաթաժողովը տեղի կունենա հունիսի 28-29-ը, իսկ ԱՄՆ նախագահ Բուշն իր տիկնոջ՝ Լորայի հետ, ինչպես նաեւ պետքարտուղար Քոլին Փաուելի եւ Ազգային անվտանգության գծով խորհրդական Կոնդոլիզա Ռայսի ուղեկցությամբ, Անկարա կժամանի հունիսի 26-ի ուշ երեկոյան: Հաջորդ օրն ԱՄՆ նախագահը կայցելի Քեմալ Աթաթուրքի դամբարանը, այնտեղ կհանդիպի Թուրքիայի նախագահ Սիզեր Նեջդեթ Սեզերի եւ վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի հետ: Կեսօրին, իր պատվին տրված ճաշկերույթից հետո Բուշն Անկարայից կուղեւորվի Ստամբուլ:

Այս մանրամասները մենք քաղել ենք ինտերնետային «Հաբերանալիզ» թերթի հունիսի 25-ի համարից, որտեղ որոշակի տեղեկություններ են տրվում նաեւ Թուրքիայի ղեկավարների հետ Բուշի հանդիպումներում քննարկման ենթակա հարցերի մասին: Տեղեկությունների համաձայն, հանդիպումների օրակարգում են լինելու Իրաքում տիրող իրավիճակին, Իրաքի հյուսիսում PKK-ի ներկայությանը, Կիպրոսին, Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության բանակցություններին, ԱՄՆ-ի որդեգրած գլոբալ պաշտպանության ռազմավարությանը, թուրք-ամերիկյան հարաբերություններին, տարածաշրջանին, Աֆղանստանին, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովին առնչվող խնդիրներ:

Թուրքիայի ղեկավարներն ԱՄՆ նախագահին են ներկայացնելու Հյուսիսային Իրաքում PKK-ի վնասազերծման, Իրաքի վերակազմավորմանը թուրքմենների գործուն մասնակցության պահանջները, միաժամանակ ընդգծելով Քիրքուքի հարցում թուրքական պետության շահագրգռությունները: Թուրքիան ԱՄՆ-ից միաժամանակ պահանջելու է կատարել «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությանն» օժանդակելու խոստումները եւ վերջինին զրկել տալ ֆինանսական աջակցություն:

Վերոհիշյալ խնդիրները վերջին շրջանում մշտապես տեղ են գտնում թուրք-ամերիկյան հարաբերություններում: Այսինքն, դրանք բազմիցս երկկողմ քննարկման են ենթարկվել՝ ժամանակ առ ժամանակ տեղի տալով տարաձայնությունների: Հետեւաբար Անկարայում Ջորջ Բուշի հանդիպումներն այդ խնդիրներին սպառիչ պատասխան տալ չեն կարող: Սակայն ՆԱՏՕ-ի գագաթաժողովի նախօրյակին հենց գագաթաժողովի հարցի քննարկումը նախագահ Սեզերի եւ վարչապետ Էրդողանի հետ միանգամայն հնարավոր է դարձնում, որ ապահովվի Թուրքիայի աջակցությունն այն հարցերում, որոնց միջոցառմանը հետամուտ է ԱՄՆ-ը:

Որքան էլ Թուրքիան ձգտի անդամակցել ԵՄ-ին, այնուամենայնիվ, նա մերձավորարեւելյան երկիր է, ուստի գագաթաժողովում ԱՄՆ-ին նրա աջակցությամբ մասամբ ենթադրվում է Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների աջակցությունը, ինչը խիստ անհրաժեշտ է «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագիրը տարածաշրջանի երկրներին պարտադրելու եւ այդ ծրագրում ՆԱՏՕ-ի ներգրավվածությունն ապահովելու համար:

ՀԱՅԿՈՒՀԻ ՉԱՔԱՐՅԱՆ

ԱՄՆ նախագահ Բուշը Ստամբուլում կհանդիպի կրոնապետներին

Այդ մասին հունիսի 25-ի հաղորդագրությամբ տեղեկացնում է «Անատոլու» գործակալությունը: Ըստ տեղեկության, Ստամբուլում կրոնապետների հետ հանդիպման Ջորջ Բուշի պատրաստակամության առնչությամբ հայտարարություն է արել ԱՄՆ նախագահի Ազգային անվտանգության գծով խորհրդական Կոնդոլիզա Ռայսը:

ՆԱՏՕ-ի գագաթաժողովի նախօրյակին լրագրողների հետ կազմակերպված հարցազրույցասխանին կերպված հարցազրույցասխանին տկն Ռայսը «Բուշը կրոնապետների հետ ինչո՞ւ է հանդիպում» հարցին պատասխանել է. «Դա ցույց է տալիս, որ Թուրքիան այն երկիրն է, որտեղ տարբեր կրոններ գոյակցում են հանդուրժողականության մթնոլորտում: Նախագահն ակնկալում է հանդիպել բազմաթիվ եկեղեցիների առաջնորդներին: Կարծում եմ, դա չափազանց հուզիչ է լինելու»:

Թվում է, թե այդ կրոնապետների թվում կլինի Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Վ. Մութաֆյանը, եւ մենք առիթ կունենանք անդրադառնալու ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ նրա հանդիպման մանրամասներին:

Ալբերտ Գորը խստիվ դատապարտել է Բուշի ստախոսությունը

ԱՄՆ նախկին փոխնախագահ Ալբերտ Գորը Ջորջ Բուշի վարչակազմին մեղադրել է Իրաք ներխուժելու պատճառների հարցում ամերիկացիներին դիտավորյալ մոլորեցնելու մեջ: Վաշինգտոնում Գորն ասել է, որ քաղաքականության մեջ Բուշի գոյատեւումը կախված էր նրանից, թե կկարողանա՞ արդյոք ընտրողներին համոզել Սադդամ Հուսեյնի եւ «Ալ Ղաիդայի» կապերի գոյությունը:

Գորի խոսքերով, եթե Բուշը Հուսեյնի եւ «Ալ Ղաիդայի» կարծեցյալ կապերի վերաբերյալ ստեր չհորիներ, ամերիկացիները դժվար թե հավատային Իրաքի պատերազմի արդարացիությանը: Նախկին փոխնախագահն ասել է, որ Բուշը դիտավորյալ Հուսեյնին ամբաստանել է սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունների հետ կապ ունենալու մեջ: Չնայած Ուսամա բեն Լադենի եւ Սադդամ Հուսեյնի կապը մինչ օրս չի ապացուցված, Բուշը եւ փոխնախագահ Չեյնին շարունակում են պնդել, թե այն իբր գոյություն ունի: Նման կապ չի հայտնաբերել սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունները հետաքննող հանձնաժողովը, իսկ Իրաքում չի հայտնաբերվել զանգվածային բնաջնջման զենք:

Գորի խոսքերով, Իրաքի պատերազմը ոչ միայն հսկայական վնաս է պատճառել մարդկային զոհերի եւ ֆինանսների առումով, այլեւ վարկաբեկել է ժողովրդավարության բուն գաղափարը:

Խոշոր ավտովթար Իրանում

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները երեկ հաղորդել են, որ Իրանի հարավ-արեւելքում տեղի ունեցած խոշոր ավտովթարի հետեւանքով հրդեհ է դարձել 200 մարդ, 90-ն էլ տարբեր աստիճանի վնասվածքներ եւ այրվածքներ են ստացել:

Որպես գործակալության տվյալներով, բենզատարը մխրճվել է ոստիկանական տեղամասի մոտ կանգնած 6 մարդատար ավտոբուսների մեջ: Միջադեպը տեղի է ունեցել հինգշաբթի օրը, ժամը 22:30-ին, Բամ եւ Զահեդան քաղաքները միացնող գլխավոր մայրուղու վրա:

Ավտոբուսները սովորական ստուգման էին ենթարկվում ի դեպս թմրանյութերի եւ մաքսանենգ ապրանքների գոյության: Ուղեւորների մեծ մասը կանայք եւ երեխաներ էին: Բախումից հետո բենզատարից թափված վառելիքը բռնկել է: Վայրկենապես կրակի մեջ են հայտնվել փակ դռներով մի քանի ավտոբուսների եւ 5 բեռնատարների ուղեւորները: Բեռնատարներից երկուսում եղած ծյութը նույնպես բոցավառվել է:

Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալների համաձայն, բեռնատարում եղել է ավելի քան 17 հազար լիտր բենզին: Ողբերգության վերաբերյալ ՁԼՄ-ներում տեղեկություններ են հայտնվել դեպքից 10 ժամ անց:

BBC-ն նշում է, որ զոհերից շատերի դիակները պարզապես անճանաչելի են դարձել կրակից:

Այս տարի սա նմանօրինակ երկրորդ աղետն է Իրանում: Փետրվարին երկրի հյուսիս-արեւելքում 320 մարդ էր զոհվել, երբ վառելիքով եւ քիմիկատներով բեռնված գնացքը բոցավառվել եւ պայթել էր: Պայթյունից զոհվածների մեծ մասը հրդեհի մարմամբ զբաղված փրկարարներ էին:

2003 թ. Իրանում տեղի է ունեցել ավելի քան 400 հազար ճանապարհատրանսպորտային պատահար, որոնց հետեւանքով զոհվել է 23 հազար մարդ:

Բրիտանացի 8 նավաստիները մեկնեցին Իրանից

Երեկ Իրանից մեկնել են բրիտանացի 8 նավաստիներ, որոնք երկուշաբթի օրը կալանավորվել էին ռազմանավակներով այդ երկրի տարածքային ջրեր մտած լինելու պատճառով: Որպես գործակալությունը հաղորդում է, որ նախորդ օրն ազատ արձակված նավաստիները մեկ գիշեր անցկացրել են Թեհրանի բրիտանական դեսպանատանը:

Նավաստիները Թեհրանից թռել են Դուբայ, այնտեղից էլ՝ Քուվեյթ: Բրիտանիայի իշխանությունները հայտարարել են, որ նրանք վերադառնալու են Իրաք եւ շարունակելու են իրաքյան գետային պարեկախմբերի պատրաստման աշխատանքները:

Ըստ բերված պայմանավորվածության համաձայն, իրանցիները բրիտանական կողմին կվերադարձնեն 8 նավաստիների ամբողջ հանդերձանքը:

Կոալիցիան արձակում է 30 հազար իրաքցի ոստիկանների

Իրաքի կոալիցիոն վարչակազմը հունիսի 30-ի իշխանափոխությունից առաջ կարձակի 30 հազար իրաքցի ոստիկանների: Լոնդոնի «Գարդիան» թերթի տվյալներով, աշխատանքից ազատվող յուրաքանչյուր ոստիկան կստանա 1-2 հազար դոլար, որպեսզի կարողանա «սեփական գործ սկսել եւ ընտանիք պահել»:

Դաշնակից ուժերն այս քայլին են դիմում, որպեսզի նախկին զինվորականներին թույլ չտան անցնելու ապստամբների կողմը: Զինվորական պաշտոնյաների կարծիքով, Իրաքի նոր կառավարության գլխավոր հենարանը հանդիսացող ոստիկանության շարքերում քաոս է տիրում: Ոստիկանության սպաներից շատերը կամ անցնում են ապստամբների կողմը, կամ էլ հրաժարվում են նրանց դեմ կռվել, ինչպես վերջերս եղավ Ֆալուջայում եւ Իրաքի ամբողջ հարավում:

Ոստիկանությունում պաշտոնապես ձեւակերպված 120 հազար սպաներից իրոք աշխատում է 89 հազարը, իսկ կեսից ավելին անհրաժեշտ զինպատրաստություն չի անցել: Տուցակներում կան «ուրվականներ», որոնք ծառայել են Հուսեյնի վարչակազմին, իսկ պատերազմի ժամանակ անհետ կորել են կամ միացել ապստամբներին:

«Իրաքի զինված ուժերի մարտունակության վերականգնման նպատակով ԱՄՆ-ը հատկացրել է 3,5 մլրդ դոլար, բայց առայժմ հայտնի չէ, թե ինչպես են օգտագործվել այդ միջոցները», գրում է «Գարդիանը»:

Զինվորականների եւ ոստիկանների պատրաստման խնդիրն առանձնակի սրությամբ ծառայել է այժմ, քանզի իշխանափոխության նախօրեին աշխուժացել են ապստամբները եւ ահաբեկիչները: **«Ազգի»** երեկվա համարում գրվեց ապստամբների լայնածավալ գործողությունների մասին: Կոալիցիոն վարչակազմը նախապատվությունը տալիս է հենց ոստիկաններին: Նախատեսվում է նրանցից պատրաստել քաղաքային մարտերի մասնագետներ: Արդեն համապատասխան պատրաստություն է անցնում 5000 մարդ:

Իրաքի նոր կառավարության առաջնային խնդիրներից մեկը 25 հազարանոց սեփական բանակի ստեղծումն է:

Պ. Բ.

50 ԱՄԵՆԱԱԶԴԵՑԻԿ ԱՍՏՂԵՐԸ

Հոլիվուդի դերասաններ եւ ռեժիսորներ վարկանիշը

Սկիզբը հունիսի 19-ի համարում

18. ՆԻԿՈԼ ՔԻԴՄԱՆ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $982,3 մլն:

2003-ի դրամարկղային մուտքը. $100,4 մլն:

Հետեւում է բոլոր դասվաբեր նախագծերին, անձամբ զանգահարում ռեժիսորներին եւ նրանցից դերեր խնդրում, ընդ որում՝ այնքան համառորեն, որ մրցակցուհիներն սկսել են բացահայտորեն արտահայտել իրենց դժգոհությունը: Կփորձակի «Ծնունդը», կհանգստանա լուրջ ադրումներից «Սթեփֆորդի կանայք» թեթեւ կատակերգության մեջ, իսկ «Թարգմանիչը» ֆիլմում աշխատանքի կտեղավորվի ՄԱԿ-ում:

Առաջիկայում. «Կախարդվածները», «Դրոյուսերները» եւ «Էմմայի դաստիարակը»:

Այո, ճիշտ է. երդվել է, որ լրջորեն կզբաղվի երեխաների միջազգային դաստիարակությամբ:

19. ԴԵՆԶԵԼ ՎԱՇԻՆԳՏՈՆ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $1,1 մլրդ:

2003-ի դրամարկղային մուտքը. $41,1 մլն:

$20 մլն հոնորարը չփրկեց «Ժամանակից դուրս» դետեկտիվը, որը անփառունակորեն խորտակվեց կինովարձույթում: Բարեբախտաբար, «Կռակի մեջ» ֆիլմը, որտեղ Վաշինգտոնը հերթական անգամ դասկերում է օրենքից դուրս գործող նախկին ծովային հետեւակայինի, մեկնարկեց առաջին տեղում:

Առաջիկայում. «Մանջուրիայի թեկնածուն» նոր տարբերակում Վաշինգտոնը սանձնել է բնօրինակում Ֆրենկ Սինատրայի խաղացած դերը:

Այո, ճիշտ է. Վաշինգտոնը առաջին տասնյակի միակ աստղն է, որի ֆիլմը վարձույթի առաջին շաբաթում երբեմ $25 մլն դոլարից ավելին չի վաստակել:

20. ԲՐԵԴ ՓԻԹ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $1,1 մլրդ:

2003-ի դրամարկղային մուտքը. $29,6 մլն:

«Տրոյա»-ում Աիլլեսի դերի համար մկանները է կոփել, ապա՝ մեկնել Իտալիա՝ իր բարեկամ Ջորջ Քլունիի մոտ, «Օուշենի 12 ընկերները» ֆիլմում նկարահանվելու: Վաս լուրերից. մասնակցությունը «Սինտբադ. լոթ ծովերի լեգենդը» մուլտֆիլմի հնչյունավորմանը չփրկեց այդ նախագիծը տապալումից:

Առաջիկայում կխաղա լրտեսուհու (Անջելինա Ջոլի) հետ ամուսնացած լրտեսի դեր «Տեր եւ տիկին Սմիթները» ֆիլմում, կնոջ՝ Ջենիֆեր Անիսթոնի օգնությամբ կզբաղվի Մարիան Փեռլի «Հզոր սիրտը» հուշագրության կինոտարբերակի պրոդյուսերությամբ:

Այո, ճիշտ է. ամեն շաբաթ անձնվիրաբար դիտում է «Վերջին հերոսի» ամերիկյան տարբերակը:

21. ՌԵՆԵ ԶԵԼՎԵԳԵՐ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $733 մլն:

2003-ի դրամարկղային մուտքը.

$14,6 մլն:

Նախավերջին՝ «Գրողը տանի սերը» ֆիլմը՝ նրա մասնակցությամբ, լավ հասույթ չբերեց, բայց դրա փոխարեն Զելվեգերն «Օսկար» ստացավ «Ցուրտ լեռան» մեջ կնոջ երկրորդական դերի համար: «Բրիջիտ Ջոնսի օրագրից» հետո հազիվ էր հաստատել նիհարել, երբ հարկ եղավ նորից գիրանալ՝ երկրորդ մասում նկարահանվելու համար:

Առաջիկայում կընկերակցի Ռասել Քրոուին «Տղամարդ մոխրոտը» ֆիլմում եւ կփորձի Ջենիս Ջոփլինի դերը «Ուրիշ մի մասնիկը» ժապավենում:

Այո, ճիշտ է. առաջին մեծության աստղերից միակն է, որն առայժմ տուն չունի Կալիֆորնիայում:

22. ԴԲՅՈՒ ԲԵԲԻՄՈՐ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $1,5 մլրդ:

2003-ի դրամարկղային մուտքը. $110,5 մլն:

«Ջարլիի հրեշակների» երկրորդ մասը սպասվածից փիչ գումար ժողովեց, «Դյուփլեքսը» տապալվեց, բայց փոխարենը «50 առաջին համբույրը» հիթ դարձավ: Բերիմորին պատկանող «Ֆլաուեր ֆիլմս» ընկերությունը վերանորոգեց պայմանագիրը տիրոջ՝ «Սոնիի» հետ:

Առաջիկայում՝ ոչ մի առանձնահատուկ բան. «Բարբարելլա»-ի նոր տարբերակի նախագիծը կախված է օդում:

Այո, ճիշտ է. խոստովանել է, որ երբեմ չի դիտում ֆիլմերն իր մասնակցությամբ:

23. ՔԻԱՆՈՒ ՌԻՎԶ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $1,5 մլրդ:

2003-ի դրամարկղային մուտքը. $545 մլն:

«Մատրիցա»-ի առաջին եւ երկրորդ մասերից հետո համաձայնեց սիրունատես ստատիստի անշնորհակալ դեր խաղալ «Սեր՝ կանոններով եւ առանց կանոնների» ֆիլմում՝ հանուն իր կոտրի՝ Դայան Քիթոնի հետ աշխատելու:

Առաջիկայում. «Կոնստանտին» կոմիքսային բլոքբաստերն է (2005) եւ «Մանկական սովորույթ» փորբյուջետային կատակերգությունը:

Այո, ճիշտ է. իննանիշ հոնորարը «Մատրիցա»-ի համար նրան դարձրել է Հոլիվուդի ամենահարուստ դերասաններից մեկը:

24. ԷՆԴԻ ԵՎ ԼԱՐԻ ՎԱՇՈՎՍԿԻՆԵՐ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $596 մլն:

2003-ի դրամարկղային մուտքը. $420,8 մլն:

Առաջին շաբաթում ռեկորդային գումար հավաքած ֆիլմերից «Մատրիցա. վերաբեռնում»-ը գիջեց միայն «Սարդ մարդուն»: Բայց «Հեղափոխությունը» հանդիսատեսի կողմից ընդունվեց մեկ ու կես անգամ վատ:

Առաջիկայում. եղբայրները կնկարահանեն «Վ., այսինքն՝ վենդետտա» ֆիլմը պրոդյուսեր Ջոել Սիլվերի հետ, որը նաեւ «Մատրիցա»-ի պրոդյուսերն է եղել:

Այո, ճիշտ է. Հոլիվուդին ավելի շատ ցնցեց «Մատրիցա»-ի հատուկ էֆեկտների արժողությունը, քան այն լուրը, որ Լարին թողել է կնոջը հանուն սադոմազոխիստական սալոնների տնօրինուհու, իսկ ընդհանրապես, մտադիր է սեռափոխվել:

25. ՔՐԻՍ ՔՈԼԱՄԲՈՒՍ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $1,5 մլրդ:

2003-ի դրամարկղային մուտքը. $0:

«Հարի Փոթերի» առաջին երկու մասերը նկարահանելուց հետո համաձայնել է դառնալ երրորդ մասի գործադիր պրոդյուսերը: Պատրաստել է Ջոն Գրիշեմի «Բաց թողնել Ծննդյան տոնը» վեպի կինոտարբերակը:

Առաջիկայում. բանակցություններ է վարում «Նյու Յորքեր» հանդեսում հրապարակված «Մահվան կարճ պատմություն» հոդվածի էկրանավորման շուրջը:

Այո, ճիշտ է. «Ռետլուսն» կինոընկերության տեր Ջոն Ոթը Քոլամբուսին կատակով կոչում է «իմ գրողը»:

26. ՌՈԲԵՐՏ ԶԵՄԵՔԻՍ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $1,5 մլրդ (որպես ռեժիսոր):

2003-ի դրամարկղային մուտքը. $0:

Դանդաղ է աշխատում՝ երեք-չորս տարին մեկ ասպարեզ հանելով մի ֆիլմ, բայց դրա փոխարեն արդյունքը, սովորաբար, արդարացնում է սպասելիքները: Նկարահանել է «Բեւեռային ճեղքվածքը» կատարյալ մանկական ֆիլմը, որն էկրան կբարձրանա Ծննդյան տոնի նախօրեին: Բացառապես որակյալ կինոնկարների («Հիանալի գործ», «Գոթիկա») պրոդյուսերն է եղել:

Առաջիկայում. «Մոմե տունը» ֆիլմի նոր տարբերակը գրավիչ է թվում:

Այո, ճիշտ է. հենց նա է հորինել «Հիանալի գործի» վերջաբանի

սյուժետային խայտը. պարզվում է, որ Նիքոլաս Քեյջի հերոսի դուստրը բնավ էլ նրա դուստրը չէ, այլ «հորը» մոլորեցրած խաբեբա:

27. ՈՒԶ ՈՒԻԶԵՐՍՊՈՒՆ

Դրամարկղային մուտքը ԱՄՆ-ում ամբողջ կարիերայի ընթացքում. $527,5 մլն:

2003-ի դրամարկղային մուտքը. $90,6 մլն:

«Օրինավոր շիկահերի» երկրորդ մասում մեկնել է Վաշինգտոն եւ նույնքան դոլար հավաքել, որքան առաջինում: Փոխել է ամոլու

Ռիկարդուի ռեակցիան ու դիպուկ հարվածը վճռորոշ եղան

Եվ այսպես, ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունում սկսվեցին վճռորոշ հանդիպումները, որոնցում գործում է գավաթային խաղերի սկզբունքը՝ պարտվողը թողնում է ասպարեզը: Նման կարգի հանդիպումներն աչի են ընկնում պայքարի արտակարգ լարվածությամբ ու դրամատիզմով, որոնցում կողմերից յուրաքանչյուրը խաղում է ուժերի գերլարումով: Անգլիայի եւ Պորտուգալիայի հավաքականների խառնդ եզրափակիչ հանդիպումն արդարացրեց բոլորի սպասելիքները: Մենք ականատես եղանք ֆուտբոլային հրաշալի մի ներկայացման, որն ավարտվեց 11 մ հարվածների հուզիչ արարողությամբ: Եվ այստեղ առաջինը տեղի տվեցին Դեյվիդ Բեքհեմի նյարդերը: Իսկ հանդիպման իսկական հերոսը պորտուգալացիների դարպասպահ Ռիկարդուն էր: Նա իրեն հիանալի դրսեւորեց պատասխանատու պահին: Ռիկարդուն նախ ետ մղեց Վասելի 11 մ հարվածը, ապա ինքնավստահ գնդակը դրեց 11 մ նշանակետին ու գրավեց իր անգլիացի գործընկերոջ դարպասը՝ հաղթական վերջակետ դնելով չափազանց լարված ու դրամատիզմով լի հանդիպմանը:

Այս հանդիպումը նաեւ առաջատար երկու մարզիչների՝ բրազիլացի Լուիս Ֆելիպե Սկոլարիի եւ վետերան Սվեն-Գորան Էրիկսոնի յուրօրինակ մրցակցություն էր: Պորտուգալացիների մարզիչը շատ հաջող փոխարինումներ կատարեց, որի արդյունքում խաղադաշտ մտած Պոշիգան ու Ռուի Կոշտան դարձան գոլերի հեղինակներ: Նրանց գլխավորած հավաքականներն առաջին անգամ հանդիպել էին 2002 թ. աշխարհի առաջնությունում, որտեղ 2-1 հաշվով հաղթել էին պորտուգալացիները: 2000 թ. Եվրոպայի առաջնության խմբային մրցախաղում էլ հաղթել էին պորտուգալացիները (3-2):

Դրամատիկ հանդիպման մասին մարզիչները հետեւյալ կարծիքի էին.

Սվեն Գորան Էրիկսոն (Անգլիա)- Տխուր է, որ կրկին դուրս մնացինք խառնդ եզրափակիչ փուլից: Շատ ծանր է մեկնաբանել խաղը, որում զիջեցինք 11 մ հարվածաշարով: Այսօր մեր բախտը բնավ էլ չբերեց: Բայց ոչնչում չեմ կարող մեղադրել ֆուտբոլիստներին, նրանք հաղթանակի հասնելու անկոտրում կամք դրսեւորեցին: Խաղից հետո տղաներն ընկճված են: 11 մ հարվածները վիճակախաղի են նման: Ցավալի է դուրս մնալ մրցաշարից, երբ թիմը ֆիզիկական հիանալի մարզավիճակում էր: Գիտեմ, որ պորտուգալացիներն ուժեղ են կոմբինացիոն խաղում: Չնայած պարտությանը, մենք ավելի մոտ էինք հաջողությանը: Եթե մարզական բախտը մի փոքր ժպտար մեզ, ապա ընդմիջման կգնայինք 2 գնդակի առավելությամբ:

Ես դեռեւս խաղի նախօրեին ՈՒԵՖԱ-ի ներկայացուցչի ուշադրությունը հրավիրել էի այն փաստի վրա, որ 11 մ նշանակետի շրջակայքում խոտածածկույթը բացակայում էր: Գտնում եմ, որ հենց դա էր պատճառը, որ Բեքհեմը վրիպեց: Վաղը վերադառնում ենք Անգլիա եւ այժմվանից արդեն կմտածենք աշխարհի առաջնության նախապատրաստության մասին:

Լուիշ Ֆելիպե Սկոլարի (Պորտուգալիա)- Յուրաքանչյուր հաղթանակ ուրախություն է պարգեւում, իսկ այսօրվա հաջողությունը կրկնակի բերկրալի է ինձ համար: Այն, ինչ այսօր տեղի ունեցավ, պարզապես հրաշք էր: Մենք հաղթեցինք շնորհիվ ֆուտբոլիստների աննկուն կամքի եւ ֆուտբոլասերների ջերմ աջակցության: Փառք եմ տալիս Աստծուն, որ վճռորոշ պահին Ռիկարդուին օգնեց նախ ետ մղել Վասելի հարվածը, ապա եւ հասակ իրացնել 11 մ հարվածը: Առջեւում կիսաեզրափակիչն է: Կաշխատենք շտկել սխալները: Մեր նպատակը յուրաքանչյուր խաղում հաղթելն է: Ինձ համար միեւնույն է, թե ում հետ կխաղանք:

Ես չէի կասկածում, որ Ռիկարդուն հաջող կիրացնի 11 մ հարվածը: Նա «Սպորտինգում» 11 մ հարվածներ իրացնող ֆուտբոլիստների թվում է եւ եթե հարկ լինի, կրկին նրան կվստահեմ վճռորոշ հարվածը:

Եվ այսպես, կիսաեզրափակիչի առաջին մասնակիցը հայտնի է: Այդ փուլում պորտուգալացիների մրցակիցը կլինի Հոլանդիա-Շվեդիա զույգի հաղթողը:

Խաղի արձանագրությունից
Պորտուգալիա-Անգլիա՝
2-2 (0-1, 1-1), 6-5՝ 11 մ

0-1՝ Օուեն (3), 1-1՝ Պոշիգա (83), 2-1՝ Ռուի Կոշտա (110), 2-2՝ Լեմպարդ (115):

11 մ հարվածներն իրացրին Դեկուն (1-0), Օուենը (1-1), Սիմաուն (2-1), Լեմպարդը (2-2), Թերին (2-3), Ռոնալդուն (3-3), Խարգրիվսը (3-4), Մանիշեն (4-4), Է. Կոուլը (4-5), Պոշիգան (5-5), Ռիկարդուն (6-5):

11 մ հարվածները չիրացրին Բեքհեմը (բարձր), Ռուի Կոշտան (բարձր) եւ Վասելը (ետ մղեց դարպասպահը):

Այժմ կցավենք միայն Հակոբյանի համար

Աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար պայքարը շարունակող 16 լավագույնների թվում հայ շախմատիստներից միայն Վլադիմիր Հակոբյանն է: Աշոտ Անաստասյանը Բելյավսկու հետ 2 հանդիպումներում էլ ձգտում էր հաղթանակի: Մրցակիցը հստակ պատրաստվում էր, եւ Անաստասյանը խաղից հետո շատ ափսոսաց, որ երկրորդ պարտիայում խուսափեց ոչ-ոքից, ապա ինքը վրիպեց եւ պարտվեց (0,5-1,5): Լեւոնը դեմ չէր կրկնամարտի՝ հուսալով, որ արագ խաղի իր վարպետությամբ կասի վճռական խոսքը: Բայց պարզվեց, որ նրա երիտասարդ մրցակիցը՝ Պավել Սմիռնովը նույնպես վստահ է անցկացնում կարճ պարտիաները: 4 ոչ-ոքիներից եւ 1-ական հաղթանակներից հետո կայացավ 7-րդ վճռորոշ պարտիան, որում սպիտակներին տրվում է 6, իսկ սեւերին՝ 5 րոպե, բայց վերջիններիս բավարարում է նաեւ ոչ-ոքին: Արոնյանը զիջեց մրցակցին:

Այն տպավորությունը ստացա, որ Հակոբյանը բավական վստահ է զգում Կրասենկովի հետ մրցախաղից առաջ, որը կկայանա շաբաթ եւ կիրակի օրերին: Կրասենկովը փորձված շախմատիստ է, իսկ Տրիպոլիում նրա բախտը զարմանալիորեն բերում է: Հուսանք, որ Հակոբյանի նյարդերը ավելի ամուր կգտնվեն:

ԳԱՌԱԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սարգսյանը դուրս մնաց պայքարից

Ուիմբլդոնում սկսվել են 2-րդ փուլի հանդիպումները: Ցավոք, Սարգիս Սարգսյանն անհաջող անցկացրեց երկրորդ հանդիպումը՝ զիջելով ռուսաստանցի Դմիտրի Թուրսունովին: Խաղը բավական համառ ու անզիջում ստացվեց: Առաջին խաղափուլը 6-3 հաշվով շահեց Թուրսունովը, երկրորդում եւս հաջողությունն ուղեկցեց մրցակցին (7-6): Հաջորդ երկու խաղափուլերում Սարգիսը տիրեց նախաձեռնությանը եւ շահեց մրցախաղերը (6-3, 6-4): Ամեն ինչ որոշվեց 5-րդ խաղափուլում: Պայքարի ելքը վճռեց թայ-բրեյքը, որն ավարտվեց Թուրսունովի հաղթանակով (15-13): Հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին նաեւ Հրբաթին, Անչիչը, Մարտինը, Շալկենը, Կառլսենը, Պավելը, Գոնսալեսը, Անդրեեւը, Մանտիլյան, Ռուսեցկին, Ֆեռերոն, Յուհանսոնը, Իվանիշեւիչը, Մոյան, Հյուիթը, Գրոժանը եւ Ֆեդերերը:

Կանանց մրցաշարում հաջողությունն ուղեկցեց Հանտուխովային, Գոլովինին, Պասկուալին, Մորեսմոյին, Զվոնարյովային, Շարապովային, Կաշիրսուն, Մալեեւային, Դեւենպորտին եւ Միսկինային: Պայքարից դուրս մնաց Վինուս Ուիլյամսը՝ զիջելով Սոլեմին (6-7, 6-7):

Յուրօրինակ ռեկորդ սահմանեց 32-ամյա թենիսիստ Ուեյն Ֆերեյրան: Ուիմբլդոնի մրցաշարը նրա թվով 55-րդ անընդմեջ անցկացրած մրցաշարն էր «Մեծ սաղավարտ» մրցաշարի խաղարկություններում սկսած 1991 թ. Ավստրալիայի բաց առաջնությունից: Նա գերազանցեց շվեդ Ստեֆան Էդբերգի ցուցանիշը, որը 1986-1996 թթ. մասնակցել էր 54 մրցաշարի: Ֆերեյրան «Մեծ սաղավարտի» մրցաշարերում լավագույն արդյունքի է հասել Ավստրալիայի բաց առաջնություններում: 1992 եւ 2003 թթ. նա մտել է կիսաեզրափակիչ:

Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

Երեկ ՈՒԵՖԱ-ի նստավայրում՝ Շվեյցարական Նիոնում տեղի ունեցավ չեմպիոնների լիգայի որակավորման առաջին երկու փուլերի եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի առաջին փուլի վիճակահանությունը: Արարողությանը «Փյունիկ» ակումբը ներկայացնում էր Ալբեր Արսանյանը, «Շիրակը»՝ ՀՀ հավաքականի ավագ, Շվեյցարիայում հանդես եկող Հարություն Վարդանյանը, «Բանանցի» եւ «Միկայի» նախագահներ Սարգիս Իսրայելյանն ու Կառլոս Ղազարյանը:

Չեմպիոնների գավաթի որակավորման առաջին փուլի մասնակից 20 ակումբները մինչեւ վիճակահանությունը բաժանվել էին 2 խմբի՝ համաձայն երկրի եւ թիմի վարկանիշի: «Փյունիկն» ընդգրկվել էր ցածր վարկանիշ ունեցող թիմերի կազմում: Վիճակահանությամբ 1-ին փուլում «Փյունիկի» մրցակիցը Մակեդոնիայի չեմպիոն «Պոբեդան» է: Եթե «Փյունիկին» հաջողվի հաղթահարել առաջին փուլի արգելքը, ապա 2-րդ փուլում Հայաստանի չեմպիոնը կմրցի Դոնեցկի «Շախտյորի» հետ:

Ներկայացնում ենք չեմպիոնների լիգայի որակավորման երկու փուլերի վիճակահանության արդյունքները.

Առաջին փուլ

1. «Ռեյկյավիկ» Իսլանդիա-«Շելբուռն» Իռլանդիա
2. «Սկոնտո» Լատվիա-«Ռիլ» Ուելս
3. «Ֆլորա» Էստոնիա-«Գորիցա» Սլովենիա
4. ՀԻԿ Ֆինլանդիա-«Լինֆիլդ» Հս. Իռլանդիա
5. «Պոբեդա» Մակեդոնիա-«Փյունիկ» Հայաստան
6. «Շերիֆ» Մոլդովա-«Ժյոնես» Լյուքսեմբուրգ
7. «ՎԻՏ-Ցորջիա» Վրաստան-«Թորսհավն» Ֆարերներ
8. «Սլիմա» Մալթա-«Կաունաս» Լիտվա
9. «Շիրոկի բրիեգ» Բոսնիա-«Նեֆչի» Ադրբեջան
10. «Գոմել» Բելառուս- «Տիրանա» Ալբանիա

Առաջին հանդիպումները կկայանան հուլիսի 14-ին, պատասխան խաղերը տեղի կունենան հուլիսի 21-ին:

Երկրորդ փուլ

5-րդ զույգի հաղթող-«Շախտյոր» Ուկրաինա
«Սպորտ» Կիպրոս-«Սպարտա» Չեխիա
«Ռոսենբորգ» Նորվեգիա-6-րդ զույգի հաղթող
«Յանգ բոյզ» Շվեյցարիա-«Ցրվենա Զվեզդա» Սերբիա
3-րդ զույգի հաղթող-«Կոպենհագեն» Դանիա
9-րդ զույգի հաղթող-ԲԿՄԱ Ռուսաստան
«Ժիլինա» Սլովակիա-«Դինամո» Բուխ., Ռումինիա
4-րդ զույգի հաղթող-«Մաքաբի» Թել Ավիվ, Իսրայել
2-րդ զույգի հաղթող-«Տրաբզոնսպոր» Թուրքիա
«Բրյուգե» Բելգիա-«Լոկոմոտիվ» Բուլղարիա
10-րդ զույգի հաղթող-«Ֆերենցվարոշ» Հունգարիա
«Հայդուկ» Խորվաթիա-1-ին զույգի հաղթող
«Յուրգոդեն» Շվեդիա-8-րդ զույգի հաղթող
7-րդ զույգի հաղթող-«Վիսլա» Լեհաստան

Առաջին հանդիպումները կկայանան հուլիսի 28-ին, պատասխան խաղերը տեղի կունենան օգոստոսի 4-ին:

ՈՒԵՖԱ-ի գավաթի առաջին փուլի 50 մասնակիցները վիճակահանությունից առաջ բաժանվել էին 3 խմբի՝ «Հյուսիս», «Հարավ» եւ «Կենտրոնական Արեւելք»: Առաջին փուլում «Բանանցը» կհյուրընկալվի ուկրաինական «Իլիչեւեցին»:«Շիրակը» սեփական հարկի տակ կընդունի Մոլդովայի «Տիրասպոլին», իսկ «Միկան»՝ Սերբիայի «Հոնվեդին»: Առաջին հանդիպումները կկայանան հուլիսի 15-ին, պատասխան խաղերը՝ հուլիսի 29-ին: Քանի որ «Շիրակն» ու «Միկան» հանդես են գալու «Հանրապետական» մարզադաշտում, ուստի նրանցից մեկն իր հանդիպումը կանցկացնի նշված ժամկետից մեկ օր շուտ կամ ուշ:

Առաջատարները կրկին հաղթեցին

Երկու հանդիպումներով ավարտվեց ՀՀ առաջնության 11-րդ տուրը: «Փյունիկը» «Էրեբունի» մարզադաշտում հյուրընկալվել էր «Կոտայքին»: Խաղից առաջ թիմերի ավագներ Հրայր Վարդազարյանն ու Արթուր Մկրտչյանը վերակառուցված մարզադաշտում բարձրացրին առաջնության դրոշը: Ընթացիկ մրցաշրջանում «Էրեբունի» մարզադաշտում կայացած անդրանիկ հանդիպումն ավարտվեց փյունիկցիների խոշոր հաղթանակով (6-1): Չեմպիոնն առանձնակի ջանքեր չներդրեց: Արդեն առաջին խաղակեսում հասնելով զգալի առավելության (4-0), փյունիկցիներն ընդմիջումից հետո փաստորեն դադարեցրին պայքարը: Չնայած դրան, եւս երկու անգամ գնդակը հայտնվեց «Կոտայքի» դարպասում: Փյունիկցիներից 2 գոլ խփեց Մանուչարյանը, 1-ական՝ Փաչաջյանը, Լոմբեն, Դիավարան եւ Դավթյանը: «Կոտայքից» միակ գոլի հեղինակը Արման Մինասյանն էր:

«Հանրապետական» մարզադաշտում «Բանանցի» եւ «Միկայի» մրցավեճի ելքը վճռեց Արմեն Շահգելդյանի խփած միակ գնդակը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	10	7	3	0	29-10	24
2. Միկա	11	7	2	2	17-12	23
3. Արարատ	11	5	4	2	16-13	19
4. Դ.-Ձենիթ	11	4	5	2	13-12	17
5. Բանանց	10	4	2	4	10-12	14
6. Կիլիկիա	11	3	1	7	14-17	10
7. Շիրակ	11	1	3	7	10-20	6
8. Կոտայք	11	1	2	8	10-23	5

Ռմբարկուներ

Նշան Երզրումյան	«Կիլիկիա»	9
Արմեն Շահգելդյան	«Միկա»	8
Գալուստ Պետրոսյան	«Փյունիկ»	7
Լեւոն Փաչաջյան	«Փյունիկ»	6
Էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	6

Տոլդոն հեռանում է հավաքականից

«Ինտերի» դարպասպահ Ֆրանչեսկո Տոլդոն որոշել է հրաժեշտ տալ Իտալիայի հավաքականին: Իր այս որոշումը նա պատճառաբանել է նրանով, որ երկրի հավաքականն անհաջող հանդես եկավ Եվրո-2004-ում: 33-ամյա դարպասպահն ընդգրկված էր հավաքականում որպես 2-րդ դարպասպահ, սակայն այդպես էլ նրան բախտ չվիճակվեց խաղադաշտ դուրս գալ: Տոլդոն դեռեւս մինչեւ Եվրո-2004-ի մեկնարկը վճռել էր հրաժեշտ տալ հավաքականին, սակայն ցավով է նշում, որ հրաժեշտը տխուր ստացվեց:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հեռքերով**

Մերզլյակովը Պրահայի բանակցությունները կառուցողական է համարում

25 ՀՈՒՆԻՍ. ՍՐՍԵՆՊՐԵՍ: ԵԱՀԿ-ի Լեռնային Ղարաբաղի խնդրով Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովը REGNUM լրատվական գործակալությանը տված հարցազրույցում անդրադառնալով օրերս ԵԱՀԿ-ի հովանու ներքո Պրահայում Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Վարդան Օսկանյանի եւ Էլմար Մամեդյարովի միջեւ կայացած թվով երրորդ հանդիպման արդյունքներին, նշել է, որ Պրահայի հանդիպման բոլոր մասնակիցները, այդ թվում եւ երկու պետությունների արտգործնախարարները, բավական դրականորեն են գնահատել բանակցությունների արդյունքները: «Քննարկումները շատ պրոֆեսիոնալ եւ կառուցողական բնույթ էին կրում: Ինչ վերաբերում է իմ գնահատականին, ապա այն դեռեւս վաղաժամ է հնչեցնել», ասել է նա, ընդսմին նշելով, որ «տվյալ փուլում հարկ չկա սպասել ինչ-որ ծեղքումներ»: Ապագա բանակցությունների օրակարգի նախապատրաստման գործընթաց է ընթանում, ավելացրել է համանախագահը: Այն հարցին, թե կողմերը քննարկե՞լ են արդյոք կոնկրետ առաջարկություններ, Մերզլյակովը անհրաժեշտ է համարել պահպանել բանակցությունների խորհրդապահությունը, ավելացնելով, որ ներկա փուլում «պատրաստի փաստաթղթեր չեն քննարկվում»:

Բանակցային գործընթացում ԼՂՀ-ի ներկայացուցիչների ներգրավվելու առթիվ ռուսաստանցի համանախագահն ասել է, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմերից մեկն է: «Ղարաբաղի ներկայացուցչի ստորագրությունը դրված է հրադադարի մասին համաձայնագրի տակ: Դրանից հետեւում է, որ որոշակի փուլում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների ներկայությունն անհրաժեշտ կդառնա», նշել է նա:

Այն հարցին, թե հնարավո՞ր է արդյոք բանակցային գործընթացի այնպիսի սցենար, երբ Հայաստանի դերը հետին պլան մղվի, Մերզլյակովը պատասխանել է, թե «բանակցային գործընթացին Հայաստանի մասնակցությունն անհրաժեշտ է, քանի որ հակամարտությունը ներազգային միջէթնիկականից վերածել է միջազգայինի»: Նա նաեւ հայտնել է, որ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել կոնսուլտացիաները շարունակելու շուրջ: Բանակցությունների չորրորդ փուլը, ինչպես սպասվում է, տեղի կունենա օգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբին:

Մինսկի խմբի համանախագահը տեղեկացրել է, որ ծրագրվում է ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների այցը տարածաշրջան: «Մենք կցանկանայինք տարածաշրջան այցելել հուլիսի կեսին», ասել է նա: Ըստ Մերզլյակովի, այցի ընթացքում ամփոփվելու են նախորդ խորհրդակցությունների արդյունքները, եւ ճշտվելու են խորհրդակցությունների հաջորդ փուլին եւ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների՝ Աստանայում ծրագրվող հանդիպմանը քննարկվելիք հարցերը (սեպտեմբերի 15-16-ին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի է ունենալու ԱՊՀ-ի երկրների գագաթաժողովը):

Ռուսաստանցի համանախագահն անհանգստություն է հայտնել վերջին ժամանակներս հայ-ադրբեջանական սահմանում հաճախացած փոխհրաձգության առնչությամբ: «Մեր գնահատականներում մենք հիմնվում ենք ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցչի հաղորդումների վրա, որը հունիսի 12-ին եւ 15-ին մոնիթորինգ է անցկացրել Հայաստանի եւ Ադրբեջանի զինուժերի շփման գծում: Նրա զեկուցագրերի հիման վրա համանախագահների երկրների դեսպանները Բաքվում եւ Երեւանում իրենց մտահոգությունն են հայտնել նախագահներին եւ կոչ են արել՝ թույլ չտալ ստեղծված իրադրության բարդացում: Գնահատականը մեկն է՝ խախտվում է հրադադարի մասին համաձայնագիրը եւ դրան անհրաժեշտ է ըստ կարելվույն արագ վերջ դնել»:

Այն առնչությամբ, որ այսօր հաճախ է խոսվում ղարաբաղյան հակամարտության իրավական լուծման անհրաժեշտության մասին, Յուրի Մերզլյակովն ասել է, որ, իր կարծիքով, «այստեղ իդեալական իրավական լուծում չի կարող լինել»: «ԽՍՀՄ-ի գոյության վերջին տարիներին ներազգային հարաբերությունները շատ անկայուն էին, անորոշ, հաճախ էին փոխվում. տեղի էր ունենում կենտրոնի հետ մի շարք միութենական հանրապետությունների դիմակայություն,-ասել է դիվանագետը:-Եթե հիմնվելու լինենք այն պահին գոյություն ունեցող ներազգային նորմաների վրա, ապա անհրաժեշտ է խոստովանել, որ նախ դրանք բավական հակասական բնույթ էին կրում, եւ այդ ամենը հակասության մեջ էր մտնում միջազգային իրավունքի հետ, որում նույնպես ամրագրված են երկու նորմեր՝ տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման իրավունքի»: «Ոչի իդեալական իրավական լուծում, ըստ իս, անհնար է գտնել, եւ այն պետք է լինի գլխավորապես քաղաքական», ընդգծել է ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահը:

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Դանակահարություն

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության օպերատիվ տեղեկագրից, հունիսի 24-ին ոստիկանության Գյումրու բաժնի աշխատակիցները մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման են ենթարկել 1962 թ. ծնված Արա Ե.-ին: Պարզվել է, որ վերջինս հունիսի 22-ին Երեւանյան խճուղու շենքերից մեկի մոտ դանակով հարվածել եւ մարմնական վնասվածք է պատճառել Հարությունյան Ղ.-ին: Դանակն առգրավված է, Արա Ե.-ն ձերբակալված է, կասարվում է նախաքննություն:

Թմրանյութ թաքցնողը ավազակային հարձակման փորձ է արել

Հունիսի 24-ին ոստիկանության Գյումրու բաժին է դիմել Տանյա Վ.-ն եւ հայտնել, որ իր ծանոթ Արա Մ.-ն տանը դանակով սպառնացել է սպանել իրեն, եթե Տանյա Վ.-ի որդին չտա նախօրոք խոստացած 20 հազար դրամը: Նույն օրը ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել 1971 թ. ծնված, նախկինում դատված Արա Մ.-ին: Զննությամբ վերջինիս մոտից հայտնաբերվել եւ առգրավվել է մարիխուանա տեսակի թմրանյութի զանգված: Արա Մ.-ն ստորագրությամբ բաց է թողնվել, կասարվում է հետաքննություն:

Կարկուտը մեծ վնասներ է պատճառել

Արտակարգ իրավիճակների վարչության օպերատիվ տեղեկագրից տեղեկանում ենք, որ հունիսի 23-ին, ժամը 20.00-ի սահմաններում Վայոց ձորի 5 գյուղերում տեղացել է ուժեղ կարկուտ: Ջիվա, Ռինգ, Հորս, Քարագլուխ, Սալի գյուղերից մեծ մասամբ տուժել են առաջին երեք գյուղերի ցանքատարածությունները:

Հունիսի 23-ին, ժամը 20.30-ի սահմաններում Գեղարքունիքի մարզում նույնպես տեղացել է ուժեղ կարկուտ եւ վնասել է Արծվանիստ, Ծովինար, Զոլաքար, Վարդենիկ գյուղերի ցանքատարածությունները: Իսկ հեղեղը ողողել է գյուղամիջյան եւ դաշտամիջյան ճանապարհները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Օտարերկրյա պետություններից Հայաստան վերադարձած այն ՀՀ քաղաքացիները, ովքեր հայրենիքում վերահաստատման հետ կապված խնդիրների են հանդիպում, անվճար խորհրդատվություն եւ աջակցություն ստանալու համար կարող են դիմել ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչություն, որի հասցեն է՝ Հր. Քոչարի 4, ինչպես նաեւ զանգահարել ***224727 «թեժ գիծ»*** հեռախոսահամարով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն 2004 թ. մարտի 23-ին Հայաստանի եւ Վրաստանի երկաթուղային ընկերությունների միջեւ Թբիլիսիում ստորագրված արձանագրության՝ Հայաստանի բնակչության ամառային հանգիստը Վրաստանի սեւծովյան առողջարաններում կազմակերպելու նպատակով ս. թ. հուլիսի 24-ից Երեւան-Բաթում (Մախինջաուրի) ուղղությամբ սկսել է վերագործարկվել ուղեւորատար խցիկավոր վագոն:

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

CONVERSE BANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կոնվերս բանկ» ՓԲԸ հայտարարում է մրցույթ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ավտոմատացման բաժնի պետի **թափուր հաստիքի** համար:

Մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են.

* Համապատասխան աշխատանքային փորձ, նվազագույնը՝ 3 տարի,
* Կազմակերպչական ունակություններ,
* Համակարգչային ադմինիստրավորում,
* Կապի միջոցների աշխատանքի իմացություն:

Դիմումներն ընդունվում են մինչեւ հուլիսի 7-ը:

Դիմել «Կոնվերս բանկի» գլխամաս՝ Վազգեն Սարգսյան 26 հասցեով, կամ զանգահարել 54 54 16 հեռախոսահամարով:

Armenian European Policy and Legal Advice Centre (AEPLAC) is moving to new premises, located at 28 Charents str., Yerevan-25 (Former British Embassy building) on Monday 28 June 2004.
Our new telephone numbers are:
+374 1 55-30-81, 55-85-95, 55-92-00

2004 թ. հունիսի 28-ին Տնտեսական քաղաքակա-նության եւ իրավական խորհրդատվության հայ-եվ-րոպական կենտրոնը (AEPLAC) տեղափոխվում է նոր գրասենյակ, որը գտնվում է հետեւյալ հասցեում՝ Երեւան 25, Չարենցի 28 (նախկին բրիտանական դեսպանատուն):
Մեր նոր հեռախոսահամարներն են՝
+374 1 55-30-81, 55-85-95, 55-92-00

до 31 августа
вклад
ОЛИМПИЙСКИЙ
UNIBANK

● 12 месяцев
● от 1000 USD
● ежемесячная капитализация или выплата процентов
9 % годовых

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD	USD, EURO
		До 5 млн.	До 10.000
до востребования		0*	0*
31 - 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 - 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 - 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 - 550 дня	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе
Минимальная сумма срочных депозитов
● 50.000 AMD
● 100 USD, EURO

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

● Центральный офис:
г. Ереван, ул. Амиряна 12
тел: (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

● Филиалы в г. Ереване:
Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел: (3741) 542431
Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел: (3741) 776627
Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел: (3741) 261838

● Филиалы в Армении:
Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел: (37451) 40872
Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел: (37441) 33055

ЮНИБАНК
РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ
53 98 70
www.unibank.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 25.06.2004 Գինը՝ 100 դրամ